

891.995

7-26

891.995

7-26

96.

№ 11

«ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐ»-Ի ԳՐԱԳԱՐԱՆ

30 MAY 2011

891.9925

Դ-2Ե

Ս. ԳԱՐԲԻՆՅԱՆ

ևր

Փ Ո Ք Ր Ի Կ

Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր

1008
36864

ՍՍ.ԽԵԼԳՍԻ
Թիֆլիս — 1934



29 MAR 2013

8204

Տեխն. խմբ. Կ. Նալբանդյան
Սրբրազրէշ } Գ. Բարուրյան
Թողարկու }
Գլավխիտ՝ № ա—1129 1933 թ.
Ստորագր. տպագր. 13/VIII (1934)
Թղթի ստանդ. ձևը՝ 62×94

ՈՎ Ե ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

Ո՛Վ Ե ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

I

Ամեն շաբաթ իրիկուն Վախթանգենց տանը հավաքվում էին Վախթանգի հայրիկի ընկերները՝ 5—6 բանվոր: Վախթանգի մայրիկը սովորաբար սեղանի վրա դասավորում էր յերեք շիշ գինի, բաժակներ, հաց, պանիր, կանաչի, իսկ ինքը քաշվում մի կողմ, զբաղվում ձեռագործով, կարով, կամ ծծի յերեխայով—Լիլիկով:

Հայրիկն ու ընկերները խոսում էին մինչև ուշ գիշեր, ինչ վոր թղթեր էին կարդում, հետո այդ թղթերը պատառատում էին, կամ այրում, ապա ցրվում:

Վախթանգի համար ամենից զարմանալին այն էր, վոր ինչպես հայրիկը, նույնպես և նրա ընկերները գինի չէին խմում, չէին աղմկում, ինչպես այդ սովորաբար անում էին ուրիշ մարդիկ, այլ՝ խոսում էին շատ ցածր ձայնով, այնպես, վոր ինքն ել հաճախ չէր լսում պառկած տեղը, անկողնում: Գինու բաժակները, վոր լցնում էին կիսով չափ, այդպես ել մնում էին մինչև վերջ, կամ, յեթե դատարկում էին հայրիկի ստիպելով, այն ել ցրվելուց առաջ: Հապա ել ինչ՞ու էին գինին դնում սեղանին, յեթե չէին խմելու...


Վախթանգը չէր հասկանում նաև, թե ինչու հայրիկի ընկերները մեկ-մեկ էին գալիս, վոչ խմբով, և ամեն ներս մտնող ասում էր. «վոչ վոք չերևաց»: Ինչպես և տնից հեռանում էին նույնպես մեկ-մեկ, շատ զգույշ, համարյա վտոտների ծայրերին, վոր բակում վոչ վոք չլսի, չտեսնի:

Վախթանգը մի քանի անգամ խնդրեց, ստիպեց մայրիկին, վոր բացատրի, իսկ մայրիկը միշտ միևնույն պատասխան էր տալիս. «Կմեծանաս, կհասկանաս, իսկ հիմի վոչ մի տեղ

և վոչ մեկի բան չասես, թե մեզ մոտ մարդիկ են հավաքվում, խոսում կամ կարդում»:

Վախժանգը, ի հարկե, վոչ վոքի վոչինչ չի ասի. նա խելոք տղա յե, մոտ 10—11 տարեկան, բայց այնքան է հետաքրքրվում, այնքան, վոր ել չափ ու սահման չունի: Մայրիկի — նման մերժումներից հետո, Վախժանգը վորոշեց, վոր ինքը, թեկուզ անկողին ել մանի, չքնի, այլ՝ ուշի-ուշով ականջ գնի մեծերի զրույցներին, գուցե մի բան հասկանա, մի բան սլարգի իր համար:

Լսում է Վախժանգը մեծերի զրույցը: Զանազան բուռեր ու նախադասութիւններ ե սովորել արդեն, ինչպես, բայրջեիկ, մենշեիկ, դաշնակ, մուսավաթ, Խորհրդային իշխանութիւն,



բանվոր դասակարգի կուրիւ և այլն, և այլն, բայց չի կարողանում հասկանա նրանց իմաստը, եյութիւնը: «Վոչինչ, — ասում է ինքն իրեն, — կմեծանամ, կսովորեմ»:

Մի իրիկուն ել, յերբ նորից հավաքվեցին հայրիկի ընկերները, նրանցից յերկու հոգի չկային՝ Դաթիկոն ու Վարդանը: Ամենքը շատ վշտացած էին, բայց Վախժանգի հայրիկը սիրտ տվեց նրանց, ասելով. «վոչինչ, ընկերներ, մտածելու կարիք չկա, մեր Հոկտեմբերը կազատի նրանց»:

— Մեր գործարանում լրտեսներ կան, — ասաց ընկերներից մեկը, — յերեկ հենց գործարանում ձերբակալեցին յերկուսին ել ու տարան բանտ. հավանական է, վոր արքային:

— Ավելի լավ, յեթե արքային մերոնց մոտ, իսկ առայժմ պետք է հոգանք, վոր նրանց ընտանիքը քաղցած չմնա, — ասաց հայրիկը:

Յերկար խոսեցին ու վիճեցին այդ յերեկո: Ամենից շատ նրանց անհանդուստացնում էր այն բանը, թե ինչպէս գտնեն լրտեսներին:

Յերբ ընկերները ցրվեցին, Վախժանգի մայրիկը տխուր ձայնով ասաց հայրիկին.

— Տես, Ալեքսի, զգուշ կաց, մի որ ել մեր գլխին ե փորձանք դալու:

— Ի՞նչ փորձանք. կբռնեն, կբանտարկեն, կարքորեն... ի՞նչ կա վոր... Կուրիւ ե, իսկ կուրիւ մեջ, ինչպես ասված է՝ «չիր ու չամիր չեն բաժանում», — պատասխանեց հայրիկը:

— Ինչ գիտես, բայց սիրտս իսկի լավ բան չի վկայում...

— Դարդ մի անի, այն կնիկ. պսած խոսք ե, թե «մինչև պատը չքանդվի, փոսը չի լցվիր». հրես Հոկտեմբերն ամեն ինչ կդրստի:

Համալը հանգցրին, հայրիկը քուն մտավ, մայրիկը կուսցավ որորոցի վրա, վոր ծիծ տա Լիլիկին, իսկ Վախժանգը շարունակ մի բանի մասին ե մտածում միայն, թե ո՞վ ե Հոկտեմբերը, վոր պետք է ազատի բանտարկված ընկերներին ու «ամեն ինչ դրստի», — ինչպես հայրիկն է ասում, վորտեղ ե, ի՞նչ մարդ ե, վոր անունն ել ամսի անուն ե... Հոկտեմբեր անունով մարդ կլինի, — մտածում է Վախժանգը և վորոշում իր մեջ, թե կարող ե լինել: Ա՛յ, Մայիս անունով մի աղջիկ կա, Մարտիկ անունով մի տղա կա. կնշանակի Հոկտեմբեր ել կարող ե լինել:

Այս մտածմունքների մեջ ել՝ քունը Վախժանգին առավ իր ծոցը:

II

Գարնան մի որ՝ այն գարնոցում, ուր Վախժանգն եր սովորում՝ բարձր խմբի աշակերտները մեծ աղմուկով գարնոցի բակում սկսեցին ուրախ-ուրախ բացականչել. «Կեցցե Խորհրդ-

դային Աղբբեջանը», «Կեցցե Աղբբեջանի Սպրիլը», «Կորչեն մուսավաթները, մենչիկները, դաշնակները»...

Հետո կարմիր դրոշակ բարձրացրին, մի աշակերտ ճառ ասեց: Դպրոցն իրար անցավ: Վարիչն անմիջապես կարգադրեց աշակերտներին արձակել ու դպրոցի դուռը փակել: Այդպես ել արին: Ասացին, թե ճառ ասող աշակերտին ու իր ընկերներին խիստ պատիժ են տալու, մինչև անգամ դպրոցից հեռացնելու յեն:

Վախթանգը տուն վերադառնալիս նկատեց, վոր քաղաքի փողոցներում ել խուճաբ-խուճաբ մարդիկ են հավաքվում, ինչ-վոր խոսում ու անմիջապես ցրվում: Այդ ուր միլիցիոներներն թիֆլ ավելի շատ եր. քաղաքն ել—անհանգիստ:

Վախթանգը տուն հասավ, պատմեց այդ ամենի մասին մայրիկին, բայց մայրիկը կարծես իսկի ուշադրութուն ել չդարձրեց, կասես վոչ մի բան չեք պատահել: Վախթանգը կամենում եր անպատճառ իմանալ, թե ինչ ե յեղել Աղբբեջանում, իսկ մայրը ժպտալով մի բան ասաց միայն. «Ինչ վոր յեղել ե, լավ ե յեղել, բալիկ ջան, հիմի ենտեղի բանվորներին ել չեն բանտարկի կամ աքսորի»:

— Հոկտեմբերն ե արել, հմ, մայրիկ, — հարցրեց Վախթանգը:

— Հա, բալիկ ջան, — ժպտալով պատասխանեց մայրիկն ու համբուրեց Վախթանգին:

— Շատ ուժով ե Հոկտեմբերը, մայրիկ...

— Հա, շատ ուժով ե, շատ, բայց քիչ խոսիր, ուրիշները չիմանան:

— Իսկ եսանդ յերը ե ազատելու հայրիկի ընկերներին, թե Հոկտեմբերն ետեղ չի, վոր ազատի...

— Եստեղ ե, բայց ասացի, թե հիմի քիչ խոսի եղ մասին:


— Դե վոր եստեղ ե, թող ազատի ելի, — պնդեց Վախթանգը:

— Պատիժ ես, ինչ ե. քեզ ասում են քիչ խոսա:

Վախթանգը քիչ նեղացավ, վոր մայրիկն այդպես խիստ խոսեց իրեն հետ: Նա զրքերը դրեց սեղանին ու, մայրիկից խոսված, սկսեց ինքն-իրեն մտածել Հոկտեմբերի մասին:

Նրա մանուկ ուղեղում Հոկտեմբերը գծազրվում եր վորպես մի հսկա մարդ, ուժով, այնքան ուժով, վոր վոչ մի միլիցիա չի համարձակվի նրա առաջ ծայտուն հանի: Նա բոլոր միլիցիոներներին, վորոնք ձերբակալում ու բանտարկում են հայրիկի ընկերներին, պետք ե հաղթի ու բոլորին ազատի...

Վախթանգն այնքան վոգևորվեց այս մտածմունքով, վոր սկսեց այս մասին պատմել շնիկին:



Կուտիկը, իբրև համաձայնության նշան, պոչն սկսեց շարժել ու լիզել Վախթանգի ձեռները:

* * *

Այդ նույն յերեկո հայրիկն ու ընկերները շուտ հավաքվեցին: Նրանք ուրախ եյին: Սեղան նստեցին ու սկսեցին ուտել-խմել:

Վախթանգը, նկատելով նրանց ուրախ տրամադրութունը, համարձակութուն ձեռք բերած, պատմեց դպրոցում տեղի ունեցած անց ու դարձը: Այդ հանգամանքը նրանց ավելի վոգևորեց:


— Կեցցե՛ Աղբբեջանի Հոկտեմբերը, — բաժակը բարձրացնելով գոչեց ընկերներից մեկը, վորին ձայնակցեցին և մյուսները:

— Աղբբեջանի Հոկտեմբերը հաղթանակեց Ապրիլ ամսին. ընկերներ, ցանկանք, վոր Վրաստանի Հոկտեմբերն ել հաղթանակի Մայիսին. դրա համար ել պետք է լարենք մեր բոլոր ուժերը, — սասց հայրիկը:

— Սրանց վախճանը մոտ է, — սկսեց յերրորդը, բայց... Բայց, հենց խոսքի կիսին, սենյակի դուռը բաղխեցին:

Մայրիկը վազեց, դուռը բաց արավ ու տեղը քարացած կանգ առավ:

Դռան շեմքին զինված մարդիկ յերևացին, վորոնցից յերկու հոգի ներս մտնելով՝ սլաավիրեցին, վոր սենյակի ներսում յեղողները վտաի կանգնեն և ձեռները վեր բարձրացնեն:



Վախթանգի հայրիկը վեր կացավ, մոտեցավ զինված մարդկանց ու սասց.

— Համեցե՛ք, լավ ժամանակ եք յեկել. եսոր յերեխայիս ծննդյան տարեդարձն է, քիչ ուրախանում ենք, դուք ել մասնակցեցե՛ք մեր ուրախությանը:

— Ովքե՛ր են հյուրերդ, — հարցրեց զինված մարդկանցից մեկը:

— Ընկերներս են, մեր գործարանի բանվորներից, — պատասխանեց հայրիկը:

— Գաղտնի ժողովներ եք անում այստեղ...

— Ի՞նչ գաղտնի ժողով, այ մարդ, գաղտնի ժողովի հետ ի՞նչ բան ունենք. գինին առաջներս դրած՝ խմում ենք, յերդում, ուրախանում. ձեռներս քաղաքի մյուս ծայրին կլավի, գաղտնի ժողովները գոռում-գոչումով են անում... Դե, յեկեք, յեկեք, քեֆներս չստուչի, դուք ել մասնակցեցե՛ք, մի լավ ուրախանանք:

Ձինված մարդը գրպանից մի թուղթ հանեց, նայեց նրան ու հարցրեց՝ ինչպես Վախթանգի հայրիկի, նույնպես և մյուսների ազգանունները: Սպա դառնալով դուրսը կանգնածներին, սասց.

— Հենց սրանք են վոր կան. ներս յեկեք:

Դրսից մի 5 հոգի յել մտան սենյակ, վորոնք, հակառակ Վախթանգի հոր պիմադրությանը, խուզարկեցին ամբողջ բնակարանը, ամեն ինչ տակն ու վրա արին, մի քանի հին լրագիր ու գիրք վերցրին, ապա հայրիկին ու իր ընկերներին առաջներն արած տարան:

Վախթանգը, այս անսովոր անց ու դարձից շժամ, չեր իմանում ինչ անի, իսկ մայրիկը շարունակ արտասովում եր ու ան քաշում:

Վախթանգը տեսավ, վոր մայրիկը շատ է կսկծում, մոտեցավ նրան, գրկեց ու սասց.

— Դարդ մի անի, մայրիկ ջան, հրես Հոկտեմբերը կազատի, Աղբբեջանում ազատեց, եստեղ ել կազատի...

— Հա՛, բայիկ ջան, շուտով կազատի. ել լաց չեմ լինի, գնա, գնա քնի: Թո՛ղ կոտորվեն սրանք, վոր ծիծաղս արտասուք շինեցին, ուրախությունս — տխրությունս:

— Մամա ջան, Հոկտեմբերը վոր հաղթի, ել իսկի լաց չենք լինի, չե՛. միշտ կծիծաղենք...

— Հա, բա՛ս, բայիկ ջան, Հոկտեմբերը ծիծաղ կբերի մեզ համար:

Վախթանգն ամբողջ գիշեր համարյա չքնեց, իսկ յեթե յերբեմն աչքը կպչում եր, ապա տեսնում եր մի մարդու, վոր

շարունակ ծիծաղում եր ու իրեն, մայրիկին, հայրիկին ու նրա ընկերներին ուրախացնում:

Վախթանգի կարծիքով— դա հենց ինքը Հոկտեմբերն եր:

* * *

Մի ամսից ավելի Վախթանգի հայրիկին ու ընկերներին բանտում պահեցին: Այդ ժամանակամիջոցում մայրիկը շարունակ զբաղված եր նրանց համար հաց ու կերակուր տանելով: Վախթանգն ել եր ոգնում մայրիկին տան գործերն անելով կամ դանազան հանձնարարություններ կատարելով:

Շատ նեղ որբեր քաշեցին: Մայրիկը տանից իրեր եր դուրս բերում ծախում, վոր հացի վող դուրս գա: Գործարանը հայրիկի ոռձիկը չեր տալիս:

Բարեբախտաբար վոչ մի կասկածելի բան չեյին գտել ու չեյին կարողացել հաստատեն, թե Վախթանգի հայրիկը և ընկերները գաղտնի ժողովներ են կազմակերպել:

Յերը հայրիկին բանտից արձակեցին, Վախթանգը շատ ուրախացավ: Բայց այդ ուրախությունը յերկար չտևեց, վորովհետև պարզվեց, վոր հայրիկին այլևս գործի չեն ընդունում:

Յերկու որ չանցած՝ հայրիկը մի իրիկուն հայտնեց, թե ինքը և իր ընկերները քաղաքը թողնում ու հեռանում են, գրնան Ազրբեջան՝ աշխատանքի: Մայրիկը տխուր եր: Վախթանգը մոտեցավ հայրիկին ու հարցրեց.

- Հոկտեմբերը չի հաղթել եստեղ, հայրիկ:
- Չե, բալիկ ջան, դեռ չի հաղթել:
- Բա ինչո՞ւ ձեզ ազատեցին. ո՞վ ազատեց...

Հայրիկը վոչինչ չպատասխանեց: Նա ունքերը կլտեց, ապա համբուրեց Վախթանգին, հետո վորոշ հանձնարարություններ տվեց մայրիկին ու գնաց:

Յերկու կամ յերեք որը մեկ անգամ մայրիկը յերեկոները գրկում եր Լիլիկին, գնում քաղաքի կենտրոնում ապրող բժշկի մոտ, վորին Վախթանգը լավ ե ճանաչում: Բժիշկը մի քանի անգամ յեղել եր Վախթանգենց տանը:

Մայրիկը բժշկի մոտից վերադառնում եր բավական ուշ: Ամեն անգամ տուն գալուց մայրիկը Լիլիկի բարուրից ինչ-վոր

ծալած թուղթ եր հանում, գնում որորոցի մեջ, Լիլիկի գլխատակին, իսկ առավոտներն այդ նույն թուղթը տալիս եր Վախթանգին, վոր տանի ու հանձնի քաղաքի մյուս ծայրամասում ապրող ընկերներից մեկի կնկանը — ընկեր Սուսանին, — ինչպես անվանում եյին նրան ամենքը:

Վախթանգը վազում եր՝ Կուտիկի հետ միասին՝ ընկեր Սուսանի մոտ, վորը թուղթն ստանալով ուրախանում եր, Կուտիկին անպատճառ ուտելու բան եր տալիս — մսի կտոր կամ շաքարահաց, իսկ Վախթանգին կամ գիրք եր նվիրում, կամ մատիտ, յերբեմն ել միրգ:

Կուտիկն այնպես եր սովորել այս ճամբորդությունը, վոր մայրիկը հենց մոտենում եր Լիլիկի գլխատակին թե չե՝ նա անմիջապես մոտ եր վազում, մոմռում, ցատկոտում, պոչի հետ խաղում. Վախթանգի փեշերից կախվում:



Մի որ ել, հենց վոր սենյակի դուռը բացվեց, Կուտիկն իսկի չսպասեց ել Վախթանգին, պոչը ցցեց ու վազեց դեպի ընկեր Սուսանենց տուն: Կուտիկը մինչև անգամ յետ ել չեր նայում, թե անսնի Վախթանգը գնում ե, թե չե: Նայում ե

Վախժանդը հուտիկի յետեից ու մարումն ասում. «տես, է, մի տես. իսկի ասա սպասում ե... Գիտես, վոր ընկեր Սուսանն ուտելու բան ե տալու»...

Վախժանդը գիտես, վոր այդ թղթերը նամակներ են, վոր ինքը տանում ե ընկեր Սուսանին՝ «Հոկտեմբերին ուղարկելու համար», ինչպես մայրիկն ասաց ու ավելացրեց, թե վոչ վոր չպիտի իմանա այդ մասին, թե չե նամակները յեթե ուրիշի ձեռքն ընկնեն, կարող են իրենց ևս ձերբակալեն, ինչպես հայրիկին և ընկերներին:

Վախժանդն իսկի մարդու բան կասի...

* * *

Մի առավոտ մայրիկը նամակը Վախժանդին տալու փոխարեն, քանդեց հուտիկի վզկապը, դրեց նրա մեջ, նորից կարեց, կապեց հուտիկի վիզը ու Վախժանդի հետ միասին ճանփու գրեց:

հուտիկը վազում ե, վոնց ե վազում... իսկի ասա Վախժանդ ե հարցնում...

Յերը Վախժանդը տեղ հասավ, հուտիկն արդեն ենտեղ եր: Նա լիզում եր ընկեր Սուսանի վոտները և վզակաթը քուռմ նրա փեշերին:

— Թուղթն ուր ե, Թանդո ջան, — հարցրեց ընկեր Սուսանը:

— Թուղթը հուտիկի վզկապի մեջ կարած ե, — ծիծաղելով պատասխանեց Վախժանդը և սպասում եր, թե ինչ տպաւորություն կլինի այդ բանն ընկեր Սուսանի վրա:

— Այ խելացի բան, — ուրախ բացականչեց ընկեր Սուսանը, յետ արավ հուտիկի վզկապը, միջից հանեց թուղթը, ապա հյուրասիրեց ինչպես հուտիկին, նույնպես և Վախժանդին ու ճամբու գրեց:

Վախժանդը նկատեց, թե ինչպես ընկեր Սուսանն այդ որը սովորականից ավելի շատ բան տվեց հուտիկին ուտելու:

Մի որ ել Վախժանդը մայրիկին առաջարկեց.

— Մայրիկ, յեկ հուտիկին ետը մենակ ուղարկենք, տեսնենք ինչ դուրս կգա: Մեկ ե, նա ենպես ե սովորել, վոր պուստից ինձ սպասելու յե գնում-գալիս:


— Հավ, — ասաց մայրիկը, — բայց իսկական նամակի փոխարեն յեկ ուղարկենք ուրիշ թուղթ, իսկ նամակն ինքդ կտանես:

Մայրիկը մի թղթի վրա գրեց. «Ընկեր Սուսան, փորձի համար ուղարկում ենք մեր հուտիկին: Յեթե այս նամակն անփութա տեղ հասցնի, պատասխանը գրեցեք և նույն ձևով յետ ուղարկեցեք»:

Մայրիկը թուղթը ծալեց, դրեց կիլիկի գլխատակին:

Հենց վոր մայրիկը ձեռքն առավ հուտիկի վզկապը և մոտեցավ կիլիկի որորոցին, հուտիկն սկսեց ուրախ-ուրախ հաջել, թռչկոտալ: Մայրիկը կապեց հուտիկի վզկապը և դուռը բաց արավ: հուտիկն առանց սպասելու Վախժանդին, վազեց:

Վոնց ե վազում... յետ ել չի նայում:



Մի ժամ չանցած՝ հուտիկը վերադարձավ ու մոտ վազեց մայրիկին, հաջեց, առջևի թաթերը դրեց մայրիկի գոգին ու խելոք աչքերը պրպտացնելով սկսեց բռթացնել:

Վախժանդը յետ արավ վզկապը: Մայրիկը շոյելով հուտիկի գլուխը՝ քանդեց կարը, վորի միջից դուրս յեկավ մեկ ուրիշ թուղթ, վրան գրած. «Ստացա. ապրի ձեր հուտիկը»:

Ինչ ուրախություն եր Վախժանդի համար, վոր իր հուտիկն այդքան խելոք ե:

Այս փորձը մի քանի անգամ կրկնեցին: հուտիկն արդեն վարժվել եր: Նա ամենայն ճշտությամբ կատարում եր իր գործը: Նամակները հանձնում եր ընկեր Սուսանին ու յետ գալիս: Այնուհետև հուտիկը դարձավ փոստատար, թեև, կարևոր դեպքերում, Վախժանդն անպայման գնում եր ստուգելու:

Ձմեռնամուտի ցուրտ որեր եյին: Նոյեմբեր ամսի յերկրորդ կեսն սկսվել էր: Անձրև, ցեխ, մառախուղ, անդուրեկան որեր եյին: Կոիվներ եյին սկսվել ամեն տեղ: Կոիվների հետ մեկ տեղ՝ բանվորներին ձերբակալում եյին, բանտարկում, աքսորում: Շատ մեծ նեղության մեջ եյին ինչպես շատ բանվորական ընտանիքներ, նույնպես և Վախթանգներ:

Ճանապարհները փակել եյին: Այնքան խիստ էր հսկողութունը, վոր Վախթանգի մայրիկը մինչև անգամ չէր կարող գնալ գյուղ, տատիկի մոտ, վոր ենտեղից մի բան բերի, ասենք՝ ալյուր, յուղ, պանիր... Ասում եյին, թե գյուղում էլ շատ ծանր է խեղճ գյուղացու դրութիւնը, վորը չի կարող քաղաքից իրեն պետքի բաները տանի: Ճանապարհին, Ազրբեջանի կամ Հայաստանի սահմանագլխին, խլում եյին ձեռներէից:

Վախթանգի մայրիկը շարունակ մտածում է այն մասին, թե ինչպես անի, վոր վառելափայտ գտնի և մի գործ ձարի, վոր կարողանա յերեխաներին պահի: Հայրիկն ինչ գնացել է փող չի ուղարկել: Լուր են ստացել, թե հայրիկն Ազրբեջանից անցել է Հայաստան աշխատելու, բայց թե ինչ աշխատանքի յե, Վախթանգը չգիտէ:

Իրութիւնը քանի գնում ծանրանում էր, անտանելի յեր դառնում:

Վախթանգն էլ է շատ մտածում այդ նեղ որերի մասին: Նրա փոքրիկ ուղեղը մի բան է միայն հասկանում, վոր այս ամենը վերջ կունենա, յեթե միայն Հոկտեմբերը հողթի բոլոր միլիցիոներներին, վորոնք տանջում են բանվոր մարդկանց: Իսկ Հոկտեմբերն ուշանում է, թեև ինքը շարունակում է նամակները տանել ընկեր Սուսանին, վոր հանձնի Հոկտեմբերին: Գուցե ընկեր Սուսանը չի հանձնում, կամ ուշացնում է...

Ես ծանր ու դառն որերին էր, յերբ քաղաքում նորից իրարանցում նկատվեց: Մարդկանց մի մասն ուրախ էր, մյուս մասը տխուր:

Վախթանգը, վոր գնացել էր գործարան, վորպեսզի հայրիկի ընկերներից մեկից փող խնդրի, տեսավ, թե ինչպես բանվորների մի խումբ դուրս յեկավ փողոց՝ կարմիր դրոշակ

բարձրացրեց: Մի բանվոր գոչեց. «Կեցցե Խորհրդային Հայաստանը: Կեցցե Հայաստանի Հոկտեմբերը»...

Խումբը «կեցցե» գոչեց, ծափահարեց, բայց դեռ մի քանի բուպե չէր անցել, յերբ միլիցիան շրջապատեց բանվորներին, վորին ծեծեց, վորին վտանատակ տվեց, ցեխում արորեց. մնացածին էլ առաջ արավ, քշեց դեպի բանա:


Ախ, եդ միլիցիան... Վախթանգն ինչպես է կատաղած բոլոր միլիցիոներների դեմ...

Վախթանգը փախավ տուն, պատմեց մայրիկին այս սարսափելի տեսարանի մասին, բայց մայրիկը կարծես ուշք չդարձրեց: Նա Լիլիկին գրկեց ու գնաց բժշկի մոտ:

Մայրիկը վերադարձավ ուշ գիշերին: Լիլիկին պառկեցրեց որորոցում, բերած թուղթը դրեց նրա գլխատակին, Վախթանգին ուտելու բան տվեց, դրեց անկողին, ու՛ հենց են է՛ ինքն էլ ուզում էր անկողին մտնի, յերբ սենյակի դուռը բաղխեցին:

Մայրիկը դուռը բաց արեց:
Ձինված մարդիկ. նման նրանց, վորոնք հայրիկին ունրա ընկերներին տարան:

1008
3969
36864



Վախթանգը, աչքերը լայն բաց արած, նայում է, թե ինչ է պատահելու:

Ձինված մարդիկ հարց ու փորձ արին, թե ուր է Վախթանգի հայրիկը, թե մայրիկն ուշ գիշերին վորտեղից էր վե-



րազառնում, և այլ նման բաներ: Հետո խուզարկեցին, բոլոր իրերը խառնեցին իրար ու մայրիկին առաջարկեցին տաք հագնվել: Մայրիկը հագնվեց, Լիլիկին առավ զիրկը, ապա մտեցավ Վախթանգին, համբուրեց ու ասաց.

— Վախթանգ ջան, չվախենաս մենակ, Կուտիկը հետդ ե: Առավոտը կասես Նլիսո տատիկին, վոր քեզ կերակրի, մեր տան վրա աչք ունենա, մինչև իմ վերադառնալը: Տես, մեր տունն անտեր չթողես, եստեղ կքնես: Դե, մնաս բարով, բալիկա, լաց չլինես, չտխրես:

Հետո մայրիկը շոյեց Կուտիկի գլուխը և, աչքերը սրբելով, դուրս յեկավ տանից:

Այս ամենն այնպես արագ կատարվեց, այնքան անսպասելի ու շժմեցուցիչ, վոր Վախթանգը մայրիկի գնալուց հետո միայն ուշքի յեկավ կարծես: Կուտիկին առավ ծոցը, պինդ գրկեց ու սկսեց անդուստ հեկեկալ վորբացածի նման:

* * *

Առավոտը, յերբ Վախթանգն աչքերը բաց արավ, շատ ուշ եր արդեն, ժամը մոտավորապես 10—11-ը: Գիշերը, յերկար լաց լինելուց հետո, Վախթանգը քաղցր ու յերկար ել քնել եր:

Վախթանգն իրենց տունը յերբեք այդպիսի վիճակում չեր տեսել: Ամեն ինչ խառնուխիթոր, թափած - թափիթած, իրար գլխի ածած: Շարժվել չի լինի սենյակում: Մայրիկը չկա: Լիլիկն որորոցում չի...

Վախթանգը՝ հենց են և՛ պետք ե լաց լինելը, բայց հիշեց մայրիկի պատվերը, վոր չի կարելի լաց լինել ու, հանկարծ միտն ընկավ նամակը, վեր թռավ տեղից, վազեց դեպի որորոցը, բարձրացրեց Լիլիկի ներքնակը:

Սհա նամակը, Հոկտեմբերին ուղարկելիք նամակը...

Վախթանգն անմիջապես հագնվեց, լվացվեց, նամակը դրեց Կուտիկի վզկապի մեջ, կապեց վիզը ու դուռը բաց արավ: Կուտիկն առանց սպասելու Վախթանգին, սովորականի պես, վազեց: Վախթանգը դուռը կողպեց ու ճամբա ընկավ Կուտիկի յետևից:

* * *

Ընկեր Սուսանը շատ վշտացավ, յերբ իմացավ Վախթանգի մայրիկի հետ պատահած դեպքի մասին: Վախթանգը մանրամասն պատմեց ու ավելացրեց.

— Հոկտեմբերը շուտ կհաղթի, վոչինչ չի՞ գրում իսկի...

Ընկեր Սուսանը գրկեց Վախթանգին, շոյեց գլուխը, համբուրեց և հայտնեց, թե Հոկտեմբերը շատ շուտով կհաղթի. հարկավոր ե միայն քաջ լինել: Ապա լավ կերակրեց ինչպես Վախթանգին, նույնպես և Կուտիկին ու ասաց.

— Վախթանգ ջան, գիտես վորտեղ ե ապրում մեր բը ժիշկը:

— Այո, գիտեմ. եմ բժիշկը, վորի մոտից մայրիկը նամակներ եր բերում...

— Այո, հենց նա, բայիկ ջան: Յեթե ուզում ես, վոր Հոկտեմբերը շուտով հաղթի, և մայրիկն ել շուտ ազատվի, հիմի դու պետք ե այսուհետև գնաս ընկեր բժիշկի մոտ, նրանից ստանաս ուղարկելիք նամակները:

— Լավ, անպատճառ կանեմ, — պատասխանեց Վախթանգը:

— Մի բան միայն, ճուտիկ ջան, — ասաց ընկեր Սուսանը, — դու այլևս չդաս այստեղ. նամակները կուղարկես Կուտիկի միջոցով, ինքդ կշարունակես դպրոց գնալ, կամ կմնաս տանը: Ամեն անգամ, յերբ Կուտիկը կվերադառնա իմ մոտից, կնայես վզկապը, այնտեղ քեզ համար փող կլինի դրված, վոր հաց և ուտելիք առնես քեզ համար. իսկ հիմի, ահա քեզ փող, վոր կերակրվես մինչև մյուս նամակի որը:

— Իսկ փողը կարելի՞ յե տալ մեր Նլիսո տատիկին, վոր ինձ ու Կուտիկին կերակրի, ճաշ պատրաստի մեզ համար, — հարցրեց Վախթանգը:

— Իսկ ո՞վ ե Նլիսո տատիկը, — տարակուսանքով հարցրեց ընկեր Սուսանը:

— Մի պառավ տատիկ ե, մեր բակումն ե ապրում. ինքն ե, մեկ ել իր թոռը: Մայրիկն ասաց, վոր Նլիսո տատիկի մոտ ճաշեմ, կամ նրան ասեմ մեզ կերակրի, մինչև իրեն վերադառնալը: Նլիսոն շատ լավ տատիկ ե. հարուստ չեն, բայց ամեն անգամ, յերբ նրանց մոտ բանի յեմ գնում, ինձ ան-

պատճառ ուտելու մի բան եւ տալիս՝ կանֆետ, միրգ, կամ մեկ ուրիշ բան, բացատրեց Վախթանգը:

— Ավելի լավ, վոր այդպէս եւ. մենակ չես լինի, Ելիսո տատիկն ել քեզ լավ կպահի, մանավանդ վոր մայրիկն ել այդպէս եւ ասել: Միայն մի բան. Ելիսո տատիկին վոչինչ չասես նամակները մասին, — ասաց ընկեր Սուսանը:

— Այդ գիտեմ, — պատասխանեց Վախթանգը, — նամակները մասին վոչ վոքի չի կարելի ասել. մայրիկն ասաց, վոր սա մեծ գաղտնիք ե:

Ընկեր Սուսանը շոյեց Վախթանգի գլուխը և ճանփու գրեց: Վախթանգը դուրս յեկավ բակը, բայց կանգ առավ ու մտածմունքի մեջ ընկավ:

— Ել ինչո՞ւ կանգ առար, Վախթանգ ջան, — հարցրեց ընկեր Սուսանը:

— Հապա մայրիկը... Նա ինչպէս կապրի բանտում, քաղցած, ծարավ...

— Մայրիկիդ մասին յես կհոգամ. նրա համար ճաշ կուղարկեմ, չեմ թողի քաղցած մնա, — ասաց ընկեր Սուսանը և ավելացրեց, — դու հանգիստ կաց:

Վախթանգը ճանապարհին շարունակ մայրիկի ու Լիլիկի մասին եւ մտածում... Նա ինքն-իրեն հուսադրում ե, թե՛ Հոկտեմբերը շուտով կհաղթի և ամեն ինչ կարգի կընկնի. մայրիկին ել կազատեն, հայրիկն ել կզա... Իսկ մինչև Հոկտեմբերի հաղթելն ընկեր Սուսանը կպահի մայրիկին ել, Լիլիկին ել...

Ի՞նչ լափն ե ընկեր Սուսանը, — մտածում ե Վախթանգը ..

* * *

Յերբ Վախթանգը յեկավ բժշկի մոտ ու պատմեց ամբողջ անց ու դարձի մասին, հայտնեց նաև, թե ինչպէս այնուհետև ինքը պետք ե նամակները հասցնի ընկեր Սուսանին, բժիշկը և՛ զարմացավ, և՛ ուրախացավ: Նա փող տվեց Վախթանգին, ինչպէս և մի տաք բլուզ ու վիզը փաթաթելու շալ նվիրեց, վոր Վախթանգը չմըսի, և որեր նշանակեց, թե յերբ գա Վախթանգը նամակի յետևից:

Վախթանգն ուրախ ե, վոր ինքը հիմի փոխարինում ե մայրիկին, մեծի գործ ե կատարում: Հոկտեմբերին վոր տեսնի, անպատճառ կհայտնի, թե նամակները մեծ մասն ինքն ե տեղափոխել Կուտիկի հետ միասին: Հոկտեմբերը նրան կսիրի, կփայփայի և Կուտիկի համար ել նոր վզկապ կառնի...

Վախթանգը վատ չի ապրում: Փող ունի ձեռին: Մայրիկն ել հայտնել եր ընկեր Սուսանի միջոցով, թե ինքն ել ե լավ ապրում, Լիլիկն ել: Բժիշկը մի սայլ փայտ եր առել և ուղարկել, վոր Վախթանգը չմըսի: Ամեն ինչ կարգին ե: Ելիսո տատիկն ամեն բանի հոգսը քաշում ե: Թեյ ե պատրաստում, ճաշ յեփում, մինչև անգամ սենյակը կարգի բերեց, իրերը տեղավորեց, մաքրեց: Վախթանգը վոր մեծանա, տատիկի համար անպատճառ շորեր ե առնելու: Տատիկի շորերը շատ են մաշված...

Չմեռնացել ե արդեն, բայց Վախթանգն ինչի՞ հոգս ունի. վոչ մի բանի: Նրան լավ են պահում Ելիսո տատիկը, ընկեր Սուսանը, բժիշկը: Վախթանգն ել իր հերթին կատարում ե բոլոր հանձնարարութիւնները, իսկ վոր գլխավորն ե, պարծենկոտ յերեխայի պէս սրան-նրան չի պատմում իր արածների մասին: Գիտի, վոր սա մեծ գաղտնիք ե, վորի մասին վոչ վոք չպիտի գիտենա:

* * *

Փետրվար ամիսն ե: Դուրսը շատ ցուրտ ե, ձյուն, սառնամանիք: Վախթանգը տաք ե հագնված, բայց շարունակ մրտածում ե մայրիկի մասին, թե նրա տեղն ինչպէս ե, տաք ե, թե վոչ: Հայրիկն ուր ե արդէ՞ք: Վախթանգը շատ ե կարոտել նրանց...

Փետրվարի կիսին կռիվներ սկսվեցին: Քաղաքն իրար ե անցել: Յերկաթուղու գնացքներն անդադար զորք են տեղափոխում: Քաղաքից հարուստ մարդիկ փախչում են դեպի Բաթում: Փողոցներում խոտում են այն մասին, թե հարուստները փախչում են Հոկտեմբերից, վորը վեր ե կացել, թե հաղթի: Վախթանգը հիմի ավելի յե հասկանում, վոր Հոկտեմ-

պատճառ ուտելու մի բան ե տալիս՝ կանֆետ, միրգ, կամ մեկ ուրիշ բան, բացատրեց Վախթանգը:

— Ավելի լավ, վոր այդպես ե. մենակ չես լինի, Ելիսո տատիկն ել քեզ լավ կպահի, մանավանդ վոր մայրիկն ել այդպես ե ասել: Միայն մի բան. Ելիսո տատիկին վոչինչ չասես նամակների մասին, — ասաց ընկեր Սուսանը:

— Այդ գիտեմ, — պատասխանեց Վախթանգը, — նամակների մասին վոչ վոքի չի կարելի ասել. մայրիկն ասաց, վոր սա մեծ գաղտնիք ե:

Ընկեր Սուսանը շոյեց Վախթանգի գլուխը և ճանփու գրեց: Վախթանգը դուրս յեկավ բակը, բայց կանգ առավ ու մտածմունքի մեջ ընկավ:

— Ել ինչո՞ւ կանգ առար, Վախթանգ ջան, — հարցրեց ընկեր Սուսանը:

— Հապա մայրիկը... Նա ինչպես կապրի բանտում. քաղցած, ծարավ...

— Մայրիկիդ մասին յես կհոգամ. նրա համար ճաշ կուղարկեմ, չեմ թողի քաղցած մնա, — ասաց ընկեր Սուսանը և ավելացրեց, — դու հանգիստ կաց:

Վախթանգը ճանապարհին շարունակ մայրիկի ու Լիլիկի մասին ե մտածում... Նա ինքն-իրեն հուսադրում ե, թե՛ Հոկտեմբերը շուտով կհաղթի և ամեն ինչ կարգի կընկնի. մայրիկին ել կազատեն, հայրիկն ել կզա... Իսկ մինչև Հոկտեմբերի հաղթելն ընկեր Սուսանը կպահի մայրիկին ել, Լիլիկին ել...

Ի՞նչ լավն ե ընկեր Սուսանը, — մտածում ե Վախթանգը ..

* * *

Յերբ Վախթանգը յեկավ բժշկի մոտ ու պատմեց ամբողջ անց ու դարձի մասին, հայտնեց նաև, թե ինչպես այնուհետև ինքը պետք ե նամակները հասցնի ընկեր Սուսանին, բժիշկը և՛ զարմացավ, և՛ ուրախացավ: Նա փող տվեց Վախթանգին, ինչպես և մի տաք բլուզ ու վիզը փաթաթելու շալ նվիրեց, վոր Վախթանգը չմոռի, և որեր նշանակեց, թե յերբ դա Վախթանգը նամակի յետևից:

Վախթանգն ուրախ ե, վոր ինքը հիմի փոխարինում ե մայրիկին, մեծի գործ ե կատարում: Հոկտեմբերին վոր տեսնի, անպատճառ կհայտնի, թե նամակների մեծ մասն ինքն ե տեղափոխել՝ Կուտիկի հետ միասին: Հոկտեմբերը նրան կսիրի, կփայփայի և Կուտիկի համար ել նոր վզկապ կառնի...

Վախթանգը վատ չի ապրում: Փող ունի ձեռին: Մայրիկն ել հայտնել եր ընկեր Սուսանի միջոցով, թե ինքն ել ե լավ ապրում, Լիլիկն ել: Բժիշկը մի սալ փայտ եր առել և ուղարկել, վոր Վախթանգը չմոռի: Ամեն ինչ կարգին ե: Ելիսո տատիկն ամեն բանի հոգսը քաշում ե: Թե՛յ ե պատրաստում, ճաշ յեփում, մինչև անգամ սենյակը կարգի բերեց, իրերը տեղավորեց, մաքրեց: Վախթանգը վոր մեծանա, տատիկի համար անպատճառ շորեր ե առնելու: Տատիկի շորերը շատ են մաշված...

Ձմեռնացել ե արդեն, բայց Վախթանգն ինչի՞ հոգս ունի. վոչ մի բանի: Նրան լավ են պահում Ելիսո տատիկը, ընկեր Սուսանը, բժիշկը: Վախթանգն ել իր հերթին կատարում ե բոլոր հանձնարարությունները, իսկ վոր գլխավորն ե, պարծենկոտ յերեխայի պես սրան-նրան չի պատմում իր արածների մասին: Գիտի, վոր սա մեծ գաղտնիք ե, վորի մասին վոչ վոք չպիտի գիտենա:

* * *

Փետրվար ամիսն ե: Դուրսը շատ ցուրտ ե, ձյուն, սառնամանիք: Վախթանգը տաք ե հագնված, բայց շարունակ մրտածում ե մայրիկի մասին, թե նրա տեղն ինչպես ե, տաք ե, թե վոչ: Հայրիկն ուր ե արդյոք: Վախթանգը շատ ե կարոտել նրանց...

Փետրվարի կիսին կռիվներ սկսվեցին: Քաղաքն իրար ե անցել: Յերկաթուղու գնացքներն անդադար գործ են տեղափոխում: Քաղաքից հարուստ մարդիկ փախչում են դեպի Բաթում: Փողոցներում խոսում են այն մասին, թե հարուստները փախչում են Հոկտեմբերից, վորը վեր ե կացել, թե հաղթի: Վախթանգը հիմի ավելի յե հասկանում, վոր Հոկտեմ-

բերը վոչ միայն միլիցիոներներին և հակառակ, այլ և հա-
րուսաններին:

Հոկտեմբերը նրանց թշնամին է, դրա համար ել նրանից
վախենում են, տուն ու տեղ թողնում, փախչում, վոր գոնե
զլուխներն ազատեն:

Կոիվների պատճառով դպրոցներն արձակել են, պարապ-
մունքներ չկան. շատ դպրոցներ վեր են ածել դորանոցների
ու հիվանդանոցների, ուր տեղավորում են հիվանդ ու վիրա-
վոր զինվորներին: Քաղաքում ամենքն ել խոսում են այն մա-
սին, թե մեծ քանակությամբ բանվորներ ու գյուղացիներ են
ձերբակալել և աքսորել:



Այս խառն որերին եր, յերբ մի
առավոտ Վախթանգը Կուտիկի մի-
ջրով նամակն ուղարկեց ընկեր
Սուսանին: Կուտիկը սովորականից
շատ ուշ վերադարձավ, այն ել այն-
պիսի դրուժյամբ, վոր առանց
խղճահարվելու վրան նայել չեր
լինի: Ամբողջովին ցեխոտված եր,
զզզված, ծեծված, մի վտախ ել
կազի յեր տալիս:

Ի՞նչ է պատահել...

Վախթանգը վրա թռավ, Կուտիկին գրկեց, խեղճ Կուտիկն
ազիտորմ ծմբում եր ու լիզում Վախթանգի ձեռները: Վախ-
թանգը չի հասկանում, թե բանն ինչունն է, ով է ծեծել Կու-
տիկին: Կուտիկի վրայի ցեխն ու կեղտը մաքրելու նպատա-
կով Վախթանգն արձակեց Կուտիկի վզկապը և ի՞նչ...

Ուղարկած նամակն ինչպես տարել, այնպես ել յետ եր
բերել Կուտիկը:

Վախթանգը յերկար մտածեց, թե ինչ անի: Գնա՛, ար-
դյոք, ընկեր Սուսանի մոտ. բայց հիշեց, վոր ընկեր Սուսանը
վերջին ժամանակներս խիստ արգելել եր գնալ Վախթանգին
իր մոտ: Հապա ի՞նչ անի... Գուցե նամակը շատ կարևոր նա-
մակ է: Մտածեց, մտածեց ու վորոշեց գնալ բժշկին հայտնել
այս մասին:

Բժիշկը շատ դարձացավ, յերբ Վախթանգին տեսավ: Նա
չեր հասկանում, թե ինչու յե Վախթանգը նշանակված ժամա-
նակից առաջ յեկել:

Վախթանգը պատմեց յերկուլթյունը և նամակը հանձնեց:
Բժիշկը նամակն իսկույն պատառոտեց, ասաց «հասկանալի յե»
և ավելացրեց.

— Սիրելի փոքրիկ, ընկեր Սուսանին յերևի տարել են
մայրիկիդ մոտ, բայց վոչինչ, շուտով ամեն ինչ կ երջանա:
Հիմի կգնաս տուն, վոչ մի տեղով չհեռանաս, տանից դուրս
չգաս, վոչ վոքի հետ վոչ մի բանի մասին չխոսես. յեթե հարց-
նող լինի, թե ճանաչում ես ընկեր Սուսանին, կասես, վոր
չես ճանաչում: Յեթե վորևե նոր բան չպատահի, վաղը յերե-
կոյան տան դուռն ամուր կկողպես, բանալին կտաս Ելիսո տա-
տիկին, Կուտիկին ել կառնես ու կգաս ինձ մոտ: Հասկացար...
Ի՛ն հիմի գնա ու տանից դուրս չգաս:

Վախթանգը վերադարձավ տուն: Վառարանը վառեց, ջուր
տաքացրեց, Կուտիկին լավ լողացրեց, մաքրեց, հետո ինքն ու
Կուտիկը միասին ընթրեցին ու հանգիստ քուն մտան:

V

Հաջորդ յերեկոյան Վախթան-
գը ներկայացավ բժշկին, վորի
մոտ մի մարդ կար՝ յերկաթուղու
ծառայողի տարազով:



— Ընկեր Բաբկեն, սա մեր
Վախթանգն է, վորին պետք է
հետդ տանես,— ասաց բժիշկը, ա-
պա, դառնալով Վախթանգին, շա-
րունակեց,— իսկ դու, Վախթանգ

ջան, կգնաս ընկեր Բաբկենի հետ: Նա քեզ կտանի, կհասցնի
այն գյուղը, վորտեղ հայրիկդ է: Լավ:

— Լավ,— ուրախացած պատասխանեց Վախթանգը, ապա քիչ
մտահոգած՝ թե,— հապա մայրիկը...

— Մայրիկի մասին յես հող կտանեմ, վոր շուտ արձակեն, իսկ այժմ ուշադրութեամբ լսիր, թե ինչ եմ ասում:

Բժիշկը մի մեծ թուղթ հանեց զըպանից, վրան ինչ-վոր գծեր ու թվեր նշանակած: Թուղթը բարակ, շատ բարակ թուղթ էր, ծխախոտի թղթի նման: Բժիշկը խնամքով ծալեց թուղթը, Կուտիկի վզկապը քանդեց, դրեց մեջը, ամուր կարեց ու կապեց Կուտիկի վիզը: Կուտիկն անհանդիստ ցատկոտեց, մոտեցավ դռանը, վտտներով չանգռեց դուռը, վոր բաց անեն, յենթադրելով, թե պետք է վաղի ընկեր Սուսանի մոտ: Վախթանգը բռնեց Կուտիկին, պատվիրեց, վոր հանգիստ մնա:

— Այ, այսպես, ընկեր Վախթանգ, — ժպտալով ասաց բժիշկը, — պետք է վաղը յերեկո ես թուղթն անպատճառ հասցնես հայրիկիդ: Ընկեր Բաբկենը քեզ համար հարմարութուններ կգտնի: Մի պայման ևս: Յեթե զնացքի մեջ քեզ հարցնող լինի, թե ով է ընկեր Բաբկենը, կասես, վոր քո հայրիկն է: Իրեն հետ խոսելիս ել՝ հայրիկ կասես: Լնվ: Սա անհրաժեշտ է:

Վախթանգը նայեց ընկեր Բաբկենին, համեմատեց իր հայրիկի հետ, ժպտաց, վոր իսկի նման չեյին իրար. իսկ ընկեր Բաբկենը շոյեց Վախթանգի դուխը, վորի պատճառով Կուտիկը հարձակվեց նրա վրա, յենթադրելով, թե անձանոթ մարդը կամենում է վնաս տալ Վախթանգին, բայց Վախթանգը չթողեց:

Յերբ բաժանվում եյին, բժիշկը շոյեց Վախթանգի գրուխն՝ ասելով.

— Իմ քաջ տղա, տեսնեմ ինչպես կկատարես ես մեծ գործը: Տես, թուղթը կտաս միմիայն հայրիկիդ. ուրիշ վոչ վոքի, իմացար...

— Լնվ. կանեմ ճիշտ այնպես, ինչպես ասացիր, — պատասխանեց Վախթանգը, ապա դառնալով ընկեր Բաբկենին, ծիծաղելով ասաց. — Դե, զնանք, հայրիկ:

Բժիշկն ու ընկեր Բաբկենը ծիծաղեցին:

— Լավ է, շատ լավ է, խելոք տղա, այդպես ուշադիր յեղիր, — ասաց բժիշկը:

— Կուտիկ, յեկ, խոտեմ, — ասաց Վախթանգը և Կուտիկին գրկեց:

— Ինչո՞ւ յես գրկում, — հարցրեց բժիշկը, — թող իր վտտով զնա:

— Դուռը բաց անենք թե չե՛ կվաղի դեպի ընկեր Սուսանենց տուն, հենց կիմանա նամակն այնտեղ ե տանելու, — բացատրեց Վախթանգը:

Դուրսը խալար էր, յերբ ընկեր Բաբկենը, Վախթանգը և Կուտիկը բժշկի մոտից դուրս գալով՝ դիմեցին դեպի յերկաթուղու կայարան:

* * *

Ընկեր Բաբկենը յերկաթուղու զնացքի վագոնն ուղեկցող կոնդուկտոր էր: Հենց վոր վագոն մտան, ընկեր Բաբկենը Վախթանգին ու Կուտիկին տեղավորեց իրեն համար հատկացված փոքրիկ, նեղ ճսնյակում, վորին կուպե եյին ասում: Մի յերկար նստարան էր միայն, մեկ ել լուսամուտին կաձ մի փոքրիկ սեղան: Ուրիշ վոչինչ:

Վագոնն այնքան լիքն էր զինվորներով, մարդկանցով, վոր, ինչպես ասում են, ասեղ գցելու տեղ չկար: Վախթանգը գրկել է Կուտիկին ու պառկել: Գնացքը մեղմ որորում է նըրանց: Անիմները միալար տկտկում են: Վախթանգը կես-քուն՝ կես-արթուն էր, յերբ կուպեյի դուռը բաց արեց ընկեր Բաբկենը, վորի մոտ զինված մարդիկ եյին կանգնած, հայրիկին ու մայրիկին ձերբակալողներին նման: Վախթանգը վախեցավ. «չլինի՞ ընկեր Բաբկենին ել են ձերբակալել, — մտածեց նա, — հետո ինչ կպատահի իրեն, յեթե ընկեր Բաբկենին տանեն... Ինչպե՞ս կհասնի հայրիկի մոտ. չե՞ վոր ինքը վոչ ճանապարհ գիտե, վոչ ել մարդ է ճանաչում»...

Վախթանգի մտածմունքն ընդհատեց զինված մարդկանցից մեկը, վոր կռացավ, նայեց Վախթանգի պառկած նստարանի տակին, ապա, դառնալով ընկեր Բաբկենին, հարցրեց.

— Ո՞վ է ես երեխեն:

— Տղաս է, — պատասխանեց ընկեր Բաբկենը, — զահլես տարավ, թե տար տատիկի մոտ. տանում եմ ենտեղ թողնեմ. մի բան, վոր դուրսներն ել փակ են:

— Քանի տարեկան ե, — հարցրեց զինված մարդկանցից մեկ ուրիշը:

— 7—8 տարեկան ե, — պատասխանեց ընկեր Բաբկենը, — կուզեք վեր կացնեմ, տեսեք:

— Դեսից-զենից հո չի՞ դուրս տալ գյուղում...

— Խելքն ինչ ե կտրում, թե ինչ ասի. յերեխա յե, կուզեք հետը խոսեցեք, — ասաց ընկեր Բաբկենը:

— Կարիք չկա. թող քնի, — ասաց առաջին խոսողը:

Հետո դուռը փակեցին ու գնացին:

Վախթանգը հիմի հանգիստ ե. նրա միակ մտածմունքն այն ե, թե յերբ են աեղ հասնելու, վոր նամակը շուտ հանձնի հայրիկին:

* * *

Լուսադեմին, մի կայարանում, ընկեր Բաբկենը Վախթանգին ու Կուտիկին իջեցրեց վագոնից: Մարտափելի ցուրտ եր: Առավոտվա սառնամանիքը դանակի պես կտրում եր:

Ընկեր Բաբկենը, Վախթանգն ու Կուտիկը սանդուխտներով իջան ցած, մտան մի մեծ շենք: Ընկեր Բաբկենը թեյ բերեց, խմացրեց Վախթանգին, վոր տաքանան. Կուտիկի համար ել ուտելիք գտավ:

Վախթանգը նայում եր բարձր սարերին, խոշոր ժայռերին, մերկացած անտառներին ու զարմանում, թե ես ուր ե ընկել, հիմի ինչ ե լինելու... Միթե ես սարերում ու անտառներում մարդիկ են ապրում...

Կայարանի առջև կանգնած, այսպիսի մտքերի մեջ եր Վախթանգը, յերբ ընկեր Բաբկենը, մի գյուղացու հետ մոտեցավ:

— Ես երեխեն ընկեր Ալեքսու տղեն ա, — ասաց ընկեր Բաբկենը գյուղացուն, — ետոր անպատճառ պետք ա հասցնես հոր մոտ, ձիով լինի, սայլով, վոտով. մի խոսքով ետոր անպատճառ տեղ հասցրու:

— Աչքիս վրա, — պատասխանեց գյուղացին, — ուզում ես շալակեմ, շալակած տանեմ, միամիտ գնա բանիդ: Դու ես ասա, ուզածս բանը ձարեցի՞ր, բերի՞ր...

— Ա, դիր ջեբդ, — ասաց ընկեր Բաբկենն ու, զրպանից հանելով մի քանի կտոր շաքար, տվեց գյուղացուն:

— Շատ շնորհակալ եմ. խեղճ մերս հիվանդ ա, եսա չայ կտանք կիմի, կլավանա... Հրես հալբաթ Հոկտեմբերը ճամփեքը բաց կանի, սրա կարոտն ել չենք քաշիլ... Դե, բալա ջան, վեր կաց գնանք, ճամփեն յերկար ա, — ասաց գյուղացին ու Վախթանգի թևից քաշեց:

Կուտիկը դժգոհ մոռացրեց ու քիչ եր մնում հարձակվի գյուղացու վրա:

— Հլա ես թուլի՞ն... Ես ումն ա, ինչ ել զալումն ա երեւում...

— Իմ Կուտիկն ա, — պատասխանեց Վախթանգը:

— Հմ-մ, բալա ջան, շունը լավ բան ա, հավատարիմ ջանլու*) ա... դե, վեր կաց գնանք: Անուենդ լինչ ա, տղա ջան:

— Վախթանգ:

— Վախթանգ... լավ անում ա: Շանդ անումն ինչ ա...

— Կուտիկ:

— Կուտի... լինչ կուտի... վոր բան չտամ, վերջիան կուտի... — ծիծաղեց գյուղացին և, մնաս բարով ասելով ընկեր Բաբկենին, ճամփա ընկավ Վախթանգի ու Կուտիկի հետ միասին:

* * *

Թե ինչպիսի կեռ ու մեռ ճանապարհներով գնացին, ինչպիսի սարեր բարձրացան, ինչ նեղություններ քաշեցին ճանապարհին ցրտից ու ցեխից, այդ մասին թող Վախթանգը պատմի:

Յերեկոյան դեմ հասան գյուղ: Վախթանգին տանող գյուղացու տանը Վախթանգի գլուխն ու վոտները լվացին, թեժ կրակի մոտ կերակուր տվին: Միայն թե տան մայրիկը մի բանից դժգոհ մնաց, վոր Կուտիկը Վախթանգի հետ միասին տանն եր, նրա մոտ նստած ու հետն ել բան եր ուտում: Մինչև անգամ ուզեց Կուտիկին տանից դուրս անի, գյուղացին արգելեց, ասելով. «Քաղաքի շունը տանն ապրելու սովոր ա. բան չունես, թող երեխի հետ մնա»:

— Հիմի քու ասելով ետ երեխի ծոցումն ա քնելու ետ հարամ շան լակոտը, — զարմացած հարցրեց մայրիկը:

*) Զանլու — կենդանի:

— Բա վո՞նց գիտես... Սրանց համար հարամ բան չկա. սրանք շան հետ մի ամանից հաց ել կուտեն, դու քնե՛լն ես ասում,— պատասխանեց գյուղացին:

— Վո՞ւրի... Ա՛ տղա, ետ ի՞նչ ես ասում, ետ հու տեղաշորս կհարամվի...

— Սարսաղ, ի՞նչը կհարամվի... Են մենշիկի միլիցեն տեղաշորումդ քնում եր, կատաղած շանից ել վատթար բաներ եր անում, տեղաշորդ չեր հարամվում, հիմի ես բալճևիկի շունը նրանից հարամ ամ...

Իրսից ձայն տվող յեղավ. նրանց վեճն ընդհատվեց:

Վախթանգն ավելի ամուր գրկեց Կուտիկի գլուխը, կարծես ապացուցելու համար, վոր ինքը յերբեք չի բաժանվի իր Կուտիկից:

Ներս մտավ մի հաղթանդամ տղամարդ ու հայտնեց, թե կռիվները սաստկացել են, գյուղերում ել մարդ չի մնացել, ամենքն ել գնացել են դիրքերը:

— Ընկեր Ալեքսին հիմի վճրտեղ ա, — հարցրեց Վախթանգին բերող գյուղացին:

— Բավական հեռու յա, — պատասխանեց յեկվորը:

— Ես երեխեն ընկեր Ալեքսու տղեն ա. բա վո՞նց անենք, վոր հոր մոտ հասնի:

— Վո՞նց պտենք անիլ. գիշերս եստեղ կմնա, առավոտը կտանենք հետներս:

— Ի՞նչ կասես, Վախթանգ ջան, — դիմեց գյուղացին:

— Ծտոր գնանք, բժիշկն ասեց, վոր ետը անպատճառ հայրիկին տեսնեմ, — պատասխանեց Վախթանգը:

— Եսա մուլթը վրա յա հասնում. չի լինի՞, վոր եգուցառավոտ գնամ...

— Ձե, չի կարելի, դուք ճամփեն ցույց տվեք, յես մենակ կգնամ. անպատճառ պետք ե իրիկունս տեսնեմ, — կըտրուկ պատասխանեց Վախթանգը:

Գյուղացիք իրար յերեսի նայեցին. հետո ինչ-վոր խոսեցին Վախթանգին անհասկանալի լեզվով, վորից նա բան չհասկացավ. ապա յեկվորն առաջարկեց Վախթանգին.

— Դե, վեր կաց, գնանք: Ձիու գավակին կարան պինդ նստես:

— Ձի չեմ նստած, բայց վոչինչ, կնստեմ, — վստահ պատասխանեց Վախթանգը:


Վախթանգը նստեց ձիու գավակին, վորին կապեցին մարդու մեջքից:

— Բա Կուտիկին վոնց անենք, — հարցրեց Վախթանգը:

— Կուտիկը մեզ մոտ կմնա, — պատասխանեց գյուղացին:

— Ձե, չի կարելի, առանց Կուտիկի յես հայրիկի մոտ չեմ գնալ:

— Դե, վոր ետպես ա, թող շունը մեր յետևից վազի, — ասաց ձիավորն ու ձին ասպանդակեց:



Կուտիկը դժգոհ ծմբաց, թռավ թե բարձրանա Վախթանգի մոտ, բայց ձին վոռացրեց: Ձին վազեց, Կուտիկն ել նրա յետևից:

Վախթանգը պինդ կպել ե մեջքից ու շուտ-շուտ յետ ե նայում, թե Կուտիկը հո չի ուշանում, հո չկորնավ...

Կուտիկը ձիու առջևից ե վազում, ի՞նչ ուշանալ...

* * *

Պինդ մուլթն եր, յերբ տեղ հասան:

Յերբ ներս մտան այն տան բակը, վորտեղ Վախթանգի հայրիկն եր, նրանց առջև կտրեց մի զինված գյուղացի և թույլ չտվեց, վոր վերև բարձրանան, տան յերկրորդ հարկը:


— Մա ընկեր Ալեքսու տղեն ա, ետոր ա յեկել Թիֆլիսից, իմաց տուր, Թող ընկեր Ալեքսին դուրս գա, — ասաց Վախթանգին բերողը:

— Հավ, մի քիչ համբերի, հրես իմաց կտամ, — ասաց պահակն ու ցեխոտ սանդուխքներով վեր բարձրացավ:

Պատշգամբում լավեց Վախթանգի հայրիկի ձայնը: Կուտիկն սկսեց հաջել ու ցատկոտել:

— Կուտիկ, Կուտիկ, — լավեց վերևից:

Կուտիկը վազեց: Ալեքսին գրկեց շանը, փայփայեց: Վախթանգին թույլ ավին, վոր բարձրանա. բայց դեռ սանդուխք-



ների կիսին չեր հասել, յերբ մի գյուղացի ամուր գրկեց նրան ու սկսեց համբուրել: Մթության մեջ Վախթանգը չճանաչեց հայրիկին, վորն այնքան փոխվել էր: Շորերը գյուղացու շորեր էին, գլխին մի մեծ փափախ, յերեսն ամբողջովին մազով պատած:

Վախթանգը քաղաքում վոր տեսներ՝ չեր ճանաչի, թե դա իր հայրիկն է:

Սենյակում մարդիկ կային, վումանք զինվորական հագուստով, վումանք գյուղացու: Ամենքն էլ զինված էին: Մարդկանցից մեկը վեր թռավ տեղից, Վախթանգին խեց հայրիկի գրկից ու սկսեց ինքն էլ համբուրել: Մա յել Վախթանգի հայրիկի բանվոր ընկերներից էր, վոր հայրիկի հետ ձերբակալվեց ու հետո նրա հետ միասին էլ հեռացավ:

— Ին, հիմի ասա, Վախթանգ ջան, թե եդ վնց յեղավ,

վոր յեկար. ինչո՞ւ յեկար. ի՞նչ նոր բան կա քաղաքում, — հարցրեց հայրիկը:

— Ենքան բան կա, — բացականչեց Վախթանգը, — մեկ-մեկ կալատմեմ. իսկ հիմի, այ, ես թուղթն ետոր քեզ պետք է հասցնեյի անպատճառ, դրա համար էլ բժիշկն ինձ ուղարկեց... Ընկեր Սուսանին տարան մայրիկի մոտ, յես մնացի մենակ... Ընր՛, ան:

Վախթանգն արագությամբ Կուտիկի վզկապն արձակեց, միջից հանեց թուղթը և ավեց հայրիկին:

Հայրիկը թուղթը փռեց սեղանին ու, մինչդեռ Վախթանգը հերթով պատմում էր իրենց գլխին անցած-դարձածը, հայրիկն ու մյուս մարդիկ ուրախ-ուրախ բացականչում էին, վոր չափազանց կարևոր տեղեկություններ են ստացել հակառակորդի զորքի քանակի մասին և այժմ գիտեն, թե վորտեղ ինչ զեք կա, ինչքան զինվորով, թնդանոթով և այլն:



Թշնամու զերբերը ճիշտ գծված էին թղթի վրա: Հակառակորդի զինվորական գաղտնիքն արդեն բացված էր: Վախթանգը ճիշտ ժամանակին էր հասցրել թուղթը, վորը յեթեուշանար՝ անտեղի զոհեր պիտի տային հայրիկի ընկերները, վորոնք կուվում էին Հոկտեմբերի համար, վոր շուտով ոգնության հասնեն քաղաքի մյուս ընկերներին, վորոնք արդեն մեծ կովի մեջ էին միլիցիոններին և հարուստներին հետ:

Վախթանգն որվա հերոս եր դարձել. նա ձեռքից-ձեռք եր անցնում: Մեկը գրկում եր՝ մյուսին սալիս:

Կուտիկն ել պակաս պատվի չարժանացավ: Ենքան մսի կտորներ տվին, վորը յեփած, վորը հում, վոր կուտիկը վորը տազեցրել է ու չի կարողանում տեղից շարժվի:

Հայրիկը կարգադրեց, վոր Վախթանգին մի փափուկ ու տաք անկողնում քնացնեն, վորովհետև շատ է հոգնել, իսկինքն ու ընկերները ճանապարհվեցին դեպի դիրքերը, վոր թուղթը ցույց տան ու փոխեն ուժերի դասավորությունը, համաձայն այն ցուցմունքների, վորոնք տրված էին Վախթանգի բերած թղթում:

* * *

Առավոտը Վախթանգը վերկացավ միանդամայն կազդուրված: Վոչ մի ցավ չեր գգում: Հայրիկը տանն եր: Նա թեև առաջուց ել գիտեր, վոր Վախթանգի մայրիկին ու ընկեր Սուսանին ձերբակալել են, բայց և այնպես ուզեց ավելի մանրամասնություններ իմանալ, թե ինչ պայմաններում են ձերբակալել: Վախթանգը պատմում եր ու պատմում...

Յերբ Վախթանգը վերջացրեց պատմությունը, հայրիկը նրան ասաց.

— Դե, Թանգո ջան, հիմի յես գնալու յեմ. քեզ եստեղ պահ կտամ մեկի մոտ. կմնաս, մինչև ինքս կգամ ու կտանեմ:

— Յես ել գամ քեզ հետ, հայրիկ ջան, չի՛ կարելի, — հարցրեց Վախթանգը:

— Գաս ի՞նչ անես. եստեղ քո տեղը չի. կռիվներ են լինելու, հրացանաձգություն. դա մեծերի գործն է:

— Գամ Հոկտեմբերին տեսնեմ ու յես գամ, — ասաց Վախթանգը և գլուխը կախ սպասում եր հայրիկի կարգադրությանը: Հայրիկը ծիծաղեց, ապա, քիչ մտածելուց հետո, ասաց.

— Լավ, գնանք — Հոկտեմբերին տես, յեթե եղքան շատ ես ուզում:

Վախթանգը նստեց հայրիկի ձիու գավակին, ձեռները պատ տվեց հայրիկի մեջքովը: Ձին վազեց, կուտիկն ելնրա յետևից: Տեղ հասան:

Ես ի՞նչքան զինված մարդիկ կան... Բանվորներ, գյուղացիներ, զինվորներ, հրացաններ, թնդանոթներ...

Վախթանգը շշմել է:

— Իսկ ո՞ւր է Հոկտեմբերը, — հարցրեց Վախթանգը:

— Հոկտեմբերը... Հոկտեմբերը մենք ամենքս ենք: Ա՛յ, ինչ վոր տեսնում ես, ում վոր տեսնում ես, մենք ամենքս միասին Հոկտեմբերն ենք, — բացատրեց հայրիկը:



Վախթանգը չի հասկանում: Ինչպե՞ս թե այս բոլոր գյուղացիները, բանվորները, զինվորները, զենքերը, ամենքը, միասին Հոկտեմբերն են... Մայրիկը ճիշտ եր ասում, թե՛ «կմեծանաս, հետո կհասկանաս»: Բայց Վախթանգը հիմի մի բան լավ է հասկանում, վոր այսքան մարդիկ յեթե գնան ու քաղաքի ընկերներին միանան, անպատճառ կհաղթեն ու կքշեն բոլոր նրանց, ովքեր ձերբակալում են բանվորներին, մայրիկին, ընկեր Սուսանին և մյուսներին:

Յերբ հայրիկն ուզեց Վախթանգին յես ուղարկել գյուղ, ընկերներից մեկն ասաց.

— Թող մնա, կապի համար կարող է պետք գալ:

Վախթանգը թեև չհասկացավ, թե ինչ է նշանակում «կապի համար կարող է պետք գալ», բայց ուրախ եր, վոր մնալու յե հայրիկի և ընկերների մոտ:

— Ուզում ես մեզ մոտ մնաս, — հարցրեց հայրիկը:

— Այո, կմնամ, — լճուական պատասխանեց Վախթանգը:

— Լավ, մնա, կդառնաս Հոկտեմբերի մի փոքրիկ մասը, — ասաց հայրիկը և Վախթանգին ու կուտիկին ուղարկեց հովից շինած մի տնակ, վոր չմրսեն:

Կոնիվերն սկսվեցին: Առաջ եյին շարժվում: Ճանապարհին ինչ գյուղի վոր հասնում եյին, գյուղացիք ուրախ-ուրախ դիմափորում եյին զուռնա-գիտով: Հետո զինվածները միանում եյին, դառնում Հոկտեմբերի մասը և ել ավելի նոր ուժերով առաջ շարժվում:

Վախթանգը սովորել է պատերազմին: Թնդանոթի վորտար կամ հրացանների ճարճատյունը սովորական բան են դարձել նրա համար:

Հիմի ամենքն ել ճանաչում են փոքրիկին, վորը գանազան տեղեկություններ ու գրություններ է տանում զիրքից-զիրք ու բոլորովին չի վախենում վոչ գնդակներից, վոչ վորտից:

Հայրիկն սվ գիտե վորտեղ է, իսկ Վախթանգը կատարում է բոլորի հանձնարարությունները: Ամբողջ որը վագվում է մեկ այս, մեկ այն կողմ: Կուտիկը պոկ չի գալիս նրանից: Գիշերները նրանց քնացնում են մի սայլակի վրա, շինելներով ծածկում, վոր չմրսեն, իսկ առավոտները կրկին գործի յեն անցնում:

Վախթանգի համար այս բոլոր լեռներն ու դաշտերն անձանոթ են. չգիտե վորտեղ են, շուտ են հասնելու քաղաք, թե չե: Նրան թվում է, թե գնում են, գնում, յերբեմն ել յետ նահանջում: Չե՞ վոր ինքը գիշերով դուրս յեկավ քաղաքից, իսկ առավոտն արդեն կայարանումն եյին: Հիմի այս քանի որ է գնում են, գնում, տեղ չեն հասնում: Ի՞նչ է պատահել... Բաղաքը հո չի փախել... Բաղաքը կարող է փախել...

Հայրիկն ել մոտը չի, թե հարցնի, իսկ իրեն մոտի մարդիկն է բան չեն ասում, ժամանակ չունեն, իսկի չեն ել խոսում...

Մի որ, յերեկոյան դեմ, հասան մի սարի տակ, ուր փոքրիկ գյուղեր կային միմյանցից 4—5 վերստ հեռավորությամբ շարված: Մութը վրա հասավ, այդ գյուղերից մեկի մոտ գիշերեցին: Վախթանգն ու Կուտիկը դարձյալ քնած եյին սայլակի վրա: Կոնվը շարունակվում եր սարի գլխին:

Կուտարացին, յերբ Վախթանգն աչքերը բաց արավ, տեսավ, վոր սայլակը սարի գլխին է: Կոնվ չկար, ինչպես այդ սովորաբար լինում եր առավոտները:

Վախթանգը ցած թռավ սայլակից: Նրա աչքի առաջ, հովտում, փոված եր քաղաքը:

— Մեր քաղաքը, մեր քաղաքը, — ուրախ բացականչեց Վախթանգը, հրեն, հրեն մեր տունը...

Կուտիկը բռթացրեց, ցատկոտեց, հասկանալով Վախթանգի ուրախությունը:

— Ընկեր, կթողես գնամ մեր տուն, — հարցրեց Վախթանգը սայլապանին:

— Ձեա կարող, հեռու յե, ճամբեն կկորցնես, հրես հրաման կատանանք, ձիերն իսկույն կքշեմ, ավելի շուտ կհասնենք, — պատասխանեց սայլապան ընկերը:

— Ձեմ կորչի, բեռի ջան, չեմ կորչի, այ, եսպես վոր վագեմ ես ճանապարհով կիջնեմ, կհասնեմ մեր տուն, հեռու չի, թող գնամ, — խնդրեց Վախթանգը:

— Եղ ի՞նչ ա ասում եղ երեխեն, — հարց տվեց հարևան սայլապանը:

— Ուզում ա գնա քաղաք, ասում եմ մնա, մինչև հրաման գա, վախում եմ կորչի, — պատասխանեց Վախթանգի սայլապանը:

— Թե ճամփեն զիդա, թող գնա, չի կորչիլ: Բալա ջան, զիտես ճամփեն, — հարցրեց հարևան սայլապանը:

— Գիտեմ, զիտեմ, այ, եսպես կվագեմ. հրեն, մեր տունն ել յերևում է. կգնամ, — վոզկորված պատասխանեց Վախթանգը և մի քանի քայլ արավ, վոր սարից իջնի:

Բաղաքում ուրախություն եր: Հեռվից լսվում եր յերաժըշտության ձայն. յերևում եյին կարմիր դրոշակներ:

— Դե, գնա, վոր եղքան ուզում ես, գնա. բան չի պատահիլ, որը պարզ ա, արև:

Վախթանգին հենց ես եր պետք. անմիջապես սարից ցած թռավ:

Վրնց են վագում Կուտիկն ու ինքը...
Վորքան մեծ յեղավ Վախթանգի զարմանքը և ուրախությունը, յերբ տուն հասավ ու տեսավ, վոր մայրիկը տանն է:


Մայրիկն ուրախությունից լացեցաւ ու դրկեց և Վախթանգին, և Կուարիկին:

— Հոկտեմբերին տեսա՞ր, բալիկ ջան, իմ քաջ, իմ հերոս բալա, — համբուրելով ասաց մայրիկը:

— Հենց զիտես Հոկտեմբերը մտրդ ե, մայրիկ...

— Հապս, բալիկ ջան...

— Հոկտեմբերը... Հոկտեմբերը... Ա՛յ, եսպես շատ, շատ... Միասին... Բանվորներն են, գյուղացիներն են, զինվորներն են... Հրացաններ, թնդանոթներ ու եսպես շատ բաներ... Բոլորը միասին... Ա՛յ, յես ել եմ պատիկ Հոկտեմբեր... Կաց պատմեմ, թե ինչ տեսակ բաներ ե անում Հոկտեմբերը...



Վախթանգը յերբ ցած իջավ մայրիկի դրկից, վոր պատմի ու մայրիկին բացատրի, թե ով ե Հոկտեմբերը, նկատեց, թե ինչպես հայրիկը դռան մեջ տեղը կանգնած ժպտում ե:

— Հայրիկ, հայրիկ... Հայրիկն ել ե Հոկտեմբեր, — բացականչեց Վախթանգն ու ընկավ հոր դէրկը:

Ա՛յ թե ուրախություն եր...

ՀԱՅՐԻԿԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅՐԻԿԻ ՀԱՄԱՐ

Յուրա առավոտ ե: Սառնամանիք:

Մեծ քաղաքը ծածկված է ձյունի սավանով: Ամենքը փակվել են իրենց տներում: Փողոցներում համարյա շարժում չկա: Խաղաղ ե: Մեկ-մեկ փողոցով անցնող սահնակները զրնգոցն ե միայն խանգարում այդ հանգիստը:

Քաղաքի հեռավոր, խուլ փողոցներն ու ցածրիկ խրճիթները, ուր բնակվում են քաղաքի չքավոր դասն ու բանվորությունը, գրեթե թաղվել են ձյունի տակ:

Փոքրիկ Միշան, վոր հագիվ տաս տարեկան եր, վեր ե կացել անկողնից, հագնվել և որորում ե իր քույրիկին, վոր որորոցում զարթնել ու ճչում ե: Մայրիկը տանը չե, գնացել ե շուկա, վոր ուտելիք բերի, իսկ հայրիկը... Հայրիկը յերկուամսից ավելի յե, ինչ տուն չի յեկել: Մի գիշեր յեկան վոստիկանները ու նրան տարան:

— Դե, սուս կաց ե, վա... մաման տանը չի...— խրատում ե Միշան քույրիկին, բայց անոգում:

Նա ավելի յե ճչում:

— Չես իմանում, վա... Սուս կաց, սյ, թե չե հայրիկը վոր դա, կասեմ...

Ու, հայրիկը վոր տանը լիներ, չեր թողնի վոր մրսեն. փայտ կառներ...

Իսկ ինչո՞ւ հայրիկի ընկերներից վոչ վոք չի գալի նրանց տուն, հայրիկը քանի տանն եր նրանք շուտ-շուտ ելին գալիս, չե՞ նրանք ել հայրիկի պես բարի յեն... Չլինի՞ նրանց ել են տարել վոստիկանները, զարադավոյներ... Ա՛խ ինչ չար ու վատ մարդիկ են նրանք...

Իսկ գործարանը, ուր աշխատում եր հայրիկը իր ընկերների հետ միասին, ո՞վ ե բանեցնում... Ի՞նչ լավ ե այնտեղ... Մեքենաներ, մեքենաներ, անվերջ մեքենաներ...

Պատույտ են գալիս անիվները, շարխերը, հալում են, թափում, գործիքներ են շինում... Միշտն վոր մեծանա, անպատճառ բանվոր պիտի դառնա, անպատճառ...

Ու ես մտածմունքների մեջ չնկատեց, թե ինչպես մայրիկը ներս մտավ:


— Ինչո՞ւ չես որորում, չես լսում, վոր յերեխան լաց ե լինում:

— Հայ... հայ... ըիկի մասին եյի մտածում, — քնից սթափվածի պես կմկմաց Միշտն ու սկսեց շարժել որորոցը:

Մայրիկը լռեցրեց Սոֆիկին, ապա ուտելու բան տվեց Միշային ու ինքն սկսեց տունը կարգի բերել:

* * *

Միշտն բարձրացել ե պատուհանի տախտակին, ցուցամատով նկարներ ե գծում՝ գոլորշիապատ ապակու վրա, յերբ հանկարծ աչքովն ընկավ փողոցով անցնող բանվորների մի խումբ, վոր մի քահանայի առաջնորդությամբ գնում եր:



— Մամա, մամա, տես... Ի՞նչքան մարդիկ են գնում...

Մայրը մտեցավ լուսամուտին:

— Ո՞ւր են գնում, մամա...

— Գնում են թագավորի մոտ, վոր խնդրեն հայրիկին ազատի:

— Հայրիկին ազատելու համար են գնում...

— Այո:

«Գնում են թագավորի մոտ, վոր խնդրեն հայրիկին ազատի», մտածում ե նա: «Իսկ ո՞վ ե թագավորը, նրա ինչի՞ն ե պետք հայրիկը... Ինչո՞ւ յե տարել իրեն մոտ... Իսկ յեթե չադատի»...

Ու հանկարծ գոչեց.

— Մամա, մամա, դու տանը կաց, վոր Սոֆիկին պահես, իսկ յես գնամ նրանց հետ, թագավորին խնդրեմ, վոր հայրիկին թողնի գա մեզ մոտ...

— Ձի կարելի, քեզ չի կարելի, դուրսը ցուրտ ե, կմրսես, կհիվանդանաս:

Միշայի դեմքը հանկարծ փոխվեց, լրջացավ: Նա ինչ-վոր բան եր մտածում, վոր նրա փոքրիկ ուղեղը չեր կարողանում լուծել:

Միշտն շատ խնդրեց մայրիկին, շատ լաց յեղավ, մոտեցավ, համբուրեց, բայց մայրիկը վոչ մի կերպ չհամաձայնվեց:

Միշտն տխուր - տրտում, լուսամուտի մոտ կանգնած նայում եր անցորդներին, վորոնք ավելի ու ավելի եյին շատանում:

Ու մին ել, յերբ մայրիկն զբաղված անային գործերով, իր բանին եր, Միշտն նրա «աչքը գողացավ» ու ենպես դուրս թռավ սենյակից, վոր մայրը չնկատեց:

Նա ձյունի մեջ թավալվելով, խոշոր ձնագնդի պես գլորվելով, հասավ մարդկանց մեծ խմբին:

— Տուն կորի, ա՛յ լակոտ, ի՞նչ ես դուրս յեկել, վոտի տակ կկորչես, — նրա վրա բարկացավ մի վոստիկան:

— Հայ... հայ... ըի... կիս մոտ եմ գը... գը... նում...

— լացակումած ասեց Միշտն ու առաջ վազեց:

Բայց անա դյադյա վիկտորը: Նա տեսավ Միշային, մոտեցավ նրան ու գրկեց: Նա հայրիկի ամենամոտ ընկերն եր:

— Բախկա, ինչո՞ւ յես ես ցրտերին դուրս յեկել, կմրսես, չէ, մայրիկը կբարկանա:

— Դյադյա Վիկտոր, մաման աբաց, թե գնում եք թագա-
վորին խնդրեք, վոր հայրիկին ազատի, յես ել եմ ուզում գամ,
ինձ ել տարեք հեաներդ:

Դյադյա Վիկտորը Միշային պինդ սեղմեց կրծքին ու ա-
ռաջ անցավ:



Հասան մի մեծ հրապարակ: Ի՞նչքան մարդ կար այնտեղ...
Միշան դյադյա Վիկտորի կրծքին պինդ կպած՝ շժմած նայում եր:
Նա առաջին անգամն եր այդքան մարդ տեսնում:

«Ինչ բարի մարդիկ են, ամենքն ել յեկել են հայրիկի
համար խնդրելու», — մտածում է նա:

Բայց ո՞ւր է թագավորը... Նա չի յերևում:

Մարդիկ ինչ-վոր անհանգստանում են, խոսում, աղաղա-
կում: Ահա տերտերը մի ճառ խոսեց, մարդիկ նրան լսում են,
հավանություն են տալիս նրա ստածներին:

— Առաջ անցեք, առաջ... Թագավորի մոտ...

Ամբոխը շարժվեց:

Բայց մեկ ել դիմացից դուրս թռան մի խումբ գինված
ձիավորներ մտրակները ձեռներին:

— Յրվեցեք... ցրվեցեք... — գոռում էին նրանք:

— Թագավորին ենք ուզում, թագավորին... — գոչեց ամբոխն
ու առաջ շարժվեց ավելի խիստ շարքերով:

Միշան այլևս բան չեր հասկանում, նա չգիտեր վորտեղ է
և ինչ է կատարվում, այնքան եր հիշում միայն, վոր դյադյա
Վիկտորի պատվերը պետք է կատարել: Իսկ դյադյա Վիկտորը
պատվիրել եր, վոր ձեռները պինդ փաթաթի նրա վզին, վոր
պոկ չգա:

— Ծեծում են, ձեծում են... — լսվեց զանազան կողմերից:

Այդ ձիավորներն էլին, վորոնք մտրակներն առած ձեծում
էին մարդկանց և թույլ չէին տալիս թագավորի մոտ գնալու:

«Վայ թե դյադյա Վիկտորին ել ձեծեն», — մտածում է
Միշան, բայց չի կարողանում ասել:

«Վոչինչ, իրենք հեռու յեն», — ինքն իրեն սիրտ եր տալիս
Միշան:

Դյադյա Վիկտորը կամենում է յետ դառնալ, բայց չի կա-
րողանում: Մարդիկ սարսափելի ճնշում են ամեն կողմից:

«Գոնե այս յերեխան չլիներ», — ասաց դյադյա Վիկտորը
մտար կանգնած ընկերին, վոր լսեց Միշան:

— Տրախ, տա, տա, տա... տրախ, տրախ... տա, տա,
տա... տրախ, գր՛ոռ... տրախ...

Տանիքներից սկսեցին կրակել:

— Ըրզզ՛... ու... ու... վրզզ՛...

Գնդակները վզզալով անցնում էին Միշայի գլխի վրայով,
բայց նա քարացել եր:

Հրացանների պայթույթ, և ամբոխի աղմուկը, մի անա-
սելի խառնաշփոթ էին, զցել: Ամենքը գլուխները կորցրել էին,
շատերը յետ փախչելու տեղ գնում էին դեպի գնդակները...

Միշան կուշ եր յեկել, կպել դյադյա Վիկտորի կրծքին,
նա աշխատում եր գլուխը թագցնել դյադյա Վիկտորի թևի տակ:

Դյադյա Վիկտորը սիրտ եր տալիս Միշային, վոր չփախե-
նա. ինքն ել աշխատում եր մի կերպ ազատվել, յերբ մին ել

մի դնդակ՝ «վրզզ՛» արավ ու կպավ դյադյա Վիկտորի գլխին:

Դյադյա Վիկտորը հազիվ «ոհ» արավ, ու շունչը փչեց:

Իեռ բավական ժամանակ նա կանգնած ամբոխի ալիքի
հետ գնում - գալիս եր արնաշաղախ, մեռած, յերբ մեկ ել

խիստ գրոհից ընկավ ամբոխի վտանների տակ:
Լսվեց մի յերեթայի սուր աղիողորմ ճիչ:

Միշան եր, վոր ընկել եր ամբոխի վտանների տակ...

Յերեկո յե: Սափար, մառախլապատ յերեկո:

Յերկինքը հոնքերը կիտել ու ձյունի արցունք ե թափում:


Յերեկվա անց ու դարձից հետո, փողոցում փոշ մի շունչ-արարած չի շարժվում:

Մի կին միայն, յերեխան կրծքին սեղմած, ձյունի քուլաների հետ կովելով վազում ե ու կանչում.

— Միշն... Միշն...

Մայրն եր:

Ա Ն Դ Ր Ո



I

— Ես ո՛վ ես, եհէյ, ա՛յ երեկա, ես ինչ ես շինում ես կողմերը...

— Յես եմ, Անդրոն եմ, մեր յեզներին եմ ման գալի:

— Բա ես տեսակ խառը ժամանակ յեզները տանից դուրս կանե՞ն, վոր դուք դուրս եք արե՞լ...

— Դե, ի՛նչ անենք, հիմիկվանից վոր յեզները տանը պահենք, խոտ տանք, ձմեռս խոտը կհատնի, յեզները սոված կլմանն. դեան ենք անում, վոր քանի հանդուժը խոտից-բանից ճարվում ա, արածեն:

— Բա ես քարի գլխից ինչքան մտիկ եմ անում, ապրանք չի երևում...

— Քոլը մտած կրլեն, հրես ամեն ծառի տակ մտիկ կանես, կզանես:

— Դե վոր գտնես, տանես տուն, հորդ կասես, վոր ել դեսը չանի:

— Քոլը դադադա յա՛...

— Շադադա յա, թե դադադա չի, քեզ ինչ վոր ասում են, են ել արա:

— Լավ, կասեմ:

Սրանով ել վերջացավ խոսակցությունը: Անդրոն մտավ անտառը, իսկ նրան ձայն տվող մարդը, բարձր քարի գլխին նստած, հրացանի հետ խաղում եր պարապությունից ու հետևում, թե ուր ե գնում Անդրոն:

Աշուն եր արդեն. հոկտեմբեր ամսի վերջին սրերը, շատ ծառեր կխով չափ տերևաթափ եյին յեղել, բայց անտառը դեռ ես զգեստավորված եր գույնզգույն: Վերևից այնքան ել հեշտ չեր դիտել ու հեպկել: Անդրոն մեկ կորչում եր, մեկ յերևում:

Անդրոն մի 10—12 տարեկան դուրեկան զեմքով ու խելք աչքերով աղա յեր, իսկ ձայն տվող մարդը գյուղի չորս բոլորը հսկող զինված մարդկանցից մեկն էր:

Անդրոն ամեն որ մի քանի հաց ու մի մեծ կտոր պանիր թիկունքին կապած զալիս էր այս կողմերը, կամ յեզներն արածացնելու կամ յեզներին ման գալու, վորոնելու, իսկ քարի գլխին ամեն որ փոխվող պահակը տեսնում էր նրան և ուշք էլ չեր դարձնում: Բայց այսօր, այդ նոր պահակն ինչո՞ւ այդպես խիստ խոսեց նրա հետ, Անդրոն չկարողացավ հասկանալ: Չլինի՞ր պահակը գիտե Անդրոյի գաղտնիքը... Անդրոն վախեցավ: Ձե՞ վոր Անդրոյի գաղտնիքը գյուղում գիտե իր հայրը միայն, մեկ էլ ինքը: Ուրիշ վոչ վոք: Կարող է մայրիկն էլ գիտենա, բայց նա վոչ վոքի չի ասիլ:

Անդրոն մտավ անտառի խորքը: Պահակի աչքից ընկավ:

Պահակը մինչև պինդ մութն ընկնելը հսկեց, թե տեսնի Անդրոն յե՞ր է դուրս գալիս անտառի միջից, յեզներն իսկապես գտավ թե չե, տունն է տանում թե չե, իսկ Անդրոն իր սովորական ճանապարհը փոխել էր և վաղուց տունն գնացել, պահակի աչքից ծածուկ, հենց այն քարի տակի կածանով, վորի վրա պահակն էր նստած:

Յերբ նոր պահակ յեկավ փոխարինելու, Անդրոյի հետ խոսող պահակը հայտնեց նորեկին, թե Անդրոն ցերեկով յեկել մտել է անտառը և կորել, հարկավոր է ուշք դարձնել:

— Անդրոն հրեն իրենց տանը, — ասաց նորեկը, — յերևի քնել էս, քնով անցել, չես տեսել, թե վոնց Անդրոն յեզներն առաջն արած գնացել է:

— Ի՞նչ էս ասում, այ մարդ, ի՞նչ քնել, ինչ բան, երկու աչքս տասներկուս եմ շինել, մարդ կամ երևիսա չե, քանի թոչուն վոր անց ա կացել, տեսել եմ, բա հենց են ժամանակ քուացա, վոր Անդրոն ու յեզներն անց կենալիս չտեսա... —

— Թոչունը բանը գլուխս չի մտնում, — պատասխանեց յեկվորը, — քեզ ասում եմ Անդրոն էլ ա հրեն իրենց տանը, յեզներն էլ:

Սրանով էլ վերջացավ նրանց վեճը:

Գնում է առաջին պահակը զեպի տունն ու ինքն իրեն մտածում. «Միւրը վորտեղով գնաց էս սատանի ճուտը, վոր չտեսա»...

II

Անդրոյենց գյուղը Ազրբեջանի սահմանին մոտ է:

Այդ այն տարին էր, յերբ Ազրբեջանն արդեն խորհրդային էր դառել, Հայաստանը դեռ դաշնակների ձեռին էր, իսկ Վրաստանը — մենչևիկների:

Գաշնակ կառավարութունը խիստ արգելք էր դրել, վոր վոչ մի հայ գյուղացի թուրքերի մոտ չգնա, ինչպես և բռնում ու պատժում էր այն թուրքին, վոր կուզեր անցնի հայերի մոտ: Մի խոսքով՝ ճանապարհները փակել էր, հսկող — պահակներ նշանակել ամեն տեղ և խիստ հետևում էր:

Անդրոյենց գյուղը շատ մեծ կարիքի մեջ էր: Ճանապարհը, վոր փակել էին, գյուղն Ազրբեջանի վրայով վոչ շաքար էր ստանում քաղաքից, վոչ նավթ, վոչ էլ առհասարակ ուրիշ ապրանքներ: Իսկ այդ բոլոր բաները յերկաթուղին էր բերում Բազվից կամ Թիֆլիսից: Ուրիշ ճանապարհ էլ չկար: Լուցկին ինչ է, լուցկին էլ էր կարվել:

Անդրոյենց գյուղում բուլչեիկներ կային: Եղ բուլչեիկներից մեկն էլ հենց Անդրոյի հորեղբայր Կարոն էր, վոր իրենցից բաժան էր ապրում:

Մի իրիկուն հորեղբայր Կարոն, մի քանի մարդ էլ հետը, նույնպես իրենց գյուղացի, հավաքվեցին Անդրոյենց գոմում: Անդրոյի հայրիկը տանը չեր, նրան ժողովի էլին կանչել: Հորեղբայր Կարոն կանչեց իր մոտ Անդրոյին ու ասաց.

— Անդրո ջան, գոմի կտերը կկանգնես ու լավ մտիկ կանես դես - դեն. հենց վոր տեսնես մարդ ա մոտենում, բարձր ձենով կկանչես. «Ետ սվ էս, այ ոքմի, մեր յեզը կորել ա, չես տեսել»: Ենքան կկենաս, վոր մենք գոմիցը դուրս կգանք: Իմացար, խելոք ջան:

— Լավ, ապի, վոնց վոր ասեցիր, ենպես էլ կանեմ:

Գյուղը խավարի մեջ կորել էր: Վոչ մի տեղ ճրագ չի վառվում: Նավթ վոր չկա, ճրագ վորտեղից լինի... Ես խավա-

րի վրա մի ուրիշ խաւար ել ավելացաւ: Մառախուղը ճանկերն
ենպես եր թաղել գետնին, վոր կարծես ել պոկ չեր գալու
յերբեք:

Անդրոն ման եր գալիս գոմի կտերը: Մեկ-մեկ մոտե-
նում ե գոմի աղբաձակին, ախանջը մոտեցնում, վոր իմանա,
թե ինչ են խոսում ներսը, բայց վոչինչ չի կարողանում լսի-
շատ ցածր են խոսում:

Կես գիշերին մոտ ե: Անդրոյի քունը տանում ե, բայց
վոնց հեռանա. առանց այն ել հորեղբայր Կարոյի հետ հակա-
ռակվել են ամենքը, խմբապետը հրամայել ե, վոր բռնեն,
սպանեն, չեն կարողանում գտնեն:

Ինքը վոր հեռանա, տեղն իմանան, գան ու բռնեն, տա-
նեն, կորցնեն, սպանեն... Մտածում ե Անդրոն ու քիչ եմնում
լաց լինի:

Այսպես սարսափելի մտքերի մեջ եր, վոր մին ել տեսով
հրեն մի մարդ մոտենում ե: Անդրոն այնքան շփոթվեց, վոր
լեզուն կապ ընկաւ, բայց իրեն հավաքեց ու բղավեց.

— Ետ ո՞վ ես, եհե՛յ, մեր յեզը կորել ա...

— Ի՛նչ յեզ, ինչ բան, ի՛նչ ես շինում եստեղ ես կես
գիշերին...

— Մեր յեզը կորել ա, ինձ տանիցը դուս են արել, վոր
մինչև չգտնեմ, տուն չգնամ, հիմի ես ցրտումը փետացել եմ
ես ա, են անդերը չկա ու չկա:

— Բալքի գոմումն ա, գոմը տեսել ես...

— Գոմը տակն ու վրա յեմ արել, զաղ չկա:

— Դե, արի, արի գնանք ձեր տուն, կասեմ քեզ չթակեն,
եգուց ման կգաս, կգտնես:

— Չե, կարալ չեմ, ինձ կմորթեն. դու գնա, յես ել դես
-դեն աչք ածեմ, վոնց գնամ տուն, բա վոր գիշերս գելն ու-
տի...

Անդրոն սկսեց լաց լինելով հեռանալ, իսկ մարդը, վոր
գյուղամեջը հսկող պահակն եր, շարունակեց իր ճանապարհը:

Հորեղբայր Կարոն ու իր ընկերները, լսելով այս խոսակցու-
թյունը, նկատելով, վոր պահակը հեռացաւ, դուրս յեկան գո-
մից: Կարոն մոտեցաւ Անդրոյին, զրկեց, համբուրեց, գրպա-
նից մի քանի տանձ ու ինձոր հանեց, տվեց նրան ու ասաց.

— Անդրո ջան, մենք գնում ենք մեծ քարկապի տակի
քոլը. հայրիկդ վոր ժողովից դա, նրան կասես, վոր մենք ես-
տեղ ժողով արինք ու գնացինք, ել գյուղը չենք գալու: Ամեն
որ յեզները կբերես արածացնելու մեր կողմը. հեռդ մեզ հա-
մար հաց կբերես ու հայրիկիդ ել կասես, գյուղում ինչ նոր
բան վոր պատահի, թող մեզ հայտնի քո միջոցով: Դու վոր
դաս, թե քոլը մտնես, մենք քեզ կտեսնենք ու ինքներս կմո-
տենանք: Ուրիշի ես մասին բան չասես:

— Լավ,— ասեց Անդրոն,— ուրիշի բան չեմ ասիլ. ինքս
ել ամեն որ ձեզ համար հաց ու խաբար կբերեմ:

Գյուղամիջում խոսակցութեան ձայն լսվեց: Ժողովը վեր-
ջացել եր. խալխը ցրվում եր:

Հորեղբայր Կարոն ու իր ընկերներն անմիջապես անհայ-
տացան, իսկ Անդրոն գնաց իրենց տուն:

III

Անդրոն ամեն որ գնում եր անտառ յեզներն առաջն ա-
րած կամ առանց յեզների: Նա ճշտութեամբ հաղորդում եր
այն բոլոր լուրերը, ինչ վոր հայրը նրան ասում եր: Անդրոն
չեր հասկանում, թե ինչու յեն հորեղբայր Կարոն ու իր ըն-
կերներն անտառում կենում, ինչու գյուղում բոլորը գինված
են, ինչու դրսից յեկած մարդիկ, վորոնց խմբապետ են ա-
սում, սրա-նրա յեզը կամ կովը մորթում են... Հրեն մի քանի
հոգու յել բռնել են գոմը գցել, վորից գյուղացիք գժգոն են,
ինչու յեն ամեն որ գյուղամեջ կանչում հորեղբայր Կարոյի ու
նրա հետ յեզող գյուղացիների կանանց, չարչարում, հարցնում
նրանց մարդկանց կամ տղաների տեղը և նման բաներ:

Չենց այն որն ել, յերբ պահակը խոսեց Անդրոյի հետ, գյու-
ղից գիշերով փախել ելին մոտ 20—30 հողի—Դասին, Հայ-
րապետը, Տիգրանը և ել ուրիշներ: Անդրոն գնում եր հենց
այդ լուրը հայտնելու:

Հորեղբայր Կարոն, վոր լսել եր պահակի ու Անդրոյի խո-
սակցությունը, Անդրոյին քարի տակով ճամփա գնելուց առաջ
պատվիրեց.

— Անդրո ջան, եզուց մենք եստեղ չենք լինի, գիշերս տեղափոխվելու յենք Շար քարի տակը: Հայրիկիդ կասես, իմանա, թե վոր կողմն են փախել Ղասին ու մյուսները, առավոր վաղ կզնաս նրանց մոտ ու կհայտնես մեր տեղը. ենտեղից ել կգաս մեզ մոտ ու նրանց տեղը կասես: Տես, ճանապարհին մարդ կպատահի, բարեկամ կամ ազգական, կխոսացնի, բան կուզի իմանա, վոչինչ չասես մեր մասին:

— Լավ, — ասաց Անդրոն, — բա վոր նրանք շատ հեռու տեղ գնացած լինեն, եզուց չհասնեն, վոր գնամ-գամ, վմնց անեմ:

— Են ժամանակ մյուս որն արի, կամ խելքդ վոնց վոր կարի, ենպես ել արա:

* * *

Գյուղի չորս բոլորը պահակն ավելի յե ուժեղացված: Ինչպես ասում են— «ծիտ ել չեն թողնում անցնի»: Առավորը վաղ, լույսը համարյա չբացված, Անդրոն մի խուրճին լիքը հաց իրենց ելի վրա դրած, ինքն ել վրեն նստած, դուրս եր գալիս գյուղից: Գյուղի ծայրին նրան կանգնեցրեց պահակը:

— Ո՛ւր ես գնում. ի՞նչիդ բեռն ի՞նչ ա, — հարցրեց պահակը:

— Գնում եմ մեր բլինեն, հաց եմ տանում, — պատասխանեց Անդրոն:

— Հաց. մի խուրճին լիքը...

— Հա, մի խուրճին լի-

քը հաց:

— Դե մի իշիդ գլուխը յետ թեքի դրա գեղամեջ:

— Ի՞նչ կա վոր, թող գնամ, բինումը սոված եմ:

— Գեզ ասում եմ առաջ անցի. խալխն եստեղ սովից կոտորվում ա, դու մի խուրճին լիքը հաց ես տանում...

— Սոված ես, ասա մի հաց տամ կեր, ել գեղամեջ ուր գնամ:

— Յես գիտեմ ետ հացն ում համար վոր տանում ես: Բինեն ալիբ կտանեն, վոր հաց թխեն. հաց տանելն ով ա իմացել: Թո՛ղ, թո՛ղ...

Ու պահակն իշին խփելով՝ առաջ արավ:

Անդրոն իշի վրայից ցած թռավ, բռնեց իշի գլուխը, վոր առաջ չշարժվի ու դիմադրեց:

— Դենը կաց, այ լակոտ, թե չե...

— Թե չե ի՞նչ. թալան ա...

— Տո, հարամզադա, եդ երեխա տեղովդ ինձ ես ուզում խաբես... Հացը տանում ես դաշաղների համար, սուտ ասում ես բլինեն ես տանում...

— Ի՞նչ դաշաղ, ինչ բան...

— Հորախպերդ դաշաղ ա ընկել, սաղ գեղը վոտի հանել, դցել բոլերը, վոր եզուց-եյոր գան մեզ կոտորեն, դու ել նրանց համար հաց ես տանում...

— Թե չես հավատում, վոր բլինեն եմ գնում, հետս ալի, տես դրուստ եմ ասում, թե չե...

— Առաջ անցի, քեզ ասում եմ, գնանք խմբապետի մոտ, նա կպարզի ամեն ինչ:

— Յես խմբապետի մոտ չեմ գալ:

— Չես գալ... Ա՛յ թե չես գալ:

Պահակը հրացանի կոթով մի յերկու անգամ խփեց Անդրոյի մեջքին: Անդրոն ծվաց, ճչաց, ապա մի կոյմ փախչելով՝ քարեր հավաքեց, շարտեց պահակի վրա: Պահակը հրացանը յետ բերեց, սուտ չխլչխկացրեց, թե իբր ուզում ե կրակի, վորից Անդրոն ավելի վախեցավ ու փախավ, բայց գյուղը վերադառնալու փոխարեն, հակառակ կողմը վազեց:

Պահակը գոռաց վրան, վոր յետ դառնա, հայհոյեց, հետո մեղմացած ասաց Անդրոյին, վոր յետ դառնա ելը տանի, բայց Անդրոն չհավատաց նրան ու քայլերն ավելի արագացնելով՝ ծածկվեց պահակի աչքից:

Պահակն եղն առաջն արած գյուղ մտավ, հանդիպողին պատմելով, թե Անդրոն փախստականների համար հաց եր տանում, ձեռքիցը խլեց:

Վագու՞մ է Անդրոն շուտ-շուտ յետ նայելով, թե հո մարդ չի տեսնում կամ հետևում իրեն: Դուրս յեկավ մեծ ճանապարհից, հիմի յեւ թփերի ու մացառների միջով ե գնում: Քրտնել է. սիրտն արագ բարախում է. հոգնած է, բայց պետք է շուտ տեղ հասնել. վտանները ցավում են. ծնկները մթմթում են... Թիի տակից մի նապաստակ դուրս պրծավ, ականջները խլշեց ու վազեց: Անդրոյին հենց է թվում, թե նապաստակը կաղի յե տալիս. շլինի՞ վիրավորված է: Անդրոն վազեց թե բռնի, բայց նապաստակի յետևից հասնել կլինի... «Ի՞նչ կլինի յես եւ նապաստակ դառնամ ու ենպես վազեմ» — մտածում է Անդրոն: Նապաստակն աչքից ընկավ: Անդրոն շարունակում է ճանապարհը նույն արագությամբ:

Հասավ են անտառին, վորտեղ պետք է թաղնված լինեյին Ղասին և մյուսները: Բայց վերտեղ կլինեն, ի՞նչ իմանա... Կանգնել է Անդրոն մի ծառի տակ ու միտք է անում, թե ուր գնա: «Արի ձեն տամ» — մտածում է Անդրոն: «Ձե, վայ թե ուրիշ մարդ լինի ետտեղ, իմանա... Հետո՞. ետ հո ավելի վատ կլինի»... Գիշ եւ առաջ գնաց, բարձրացավ մի ծառի կատար, վոր աջտեղից դիտի, գուցե մարդ յերևա, մեկն ու մեկին տեսնի: Վոչ վոր չկա, վոչ մի շունչ արարած: Բտ հիմի՞ ինչ անի... Շվարել է Անդրոն, քիչ է մնում արտասպի: Մին եւ մի շվիոցի ձայն հասավ ականջին: Իսկապես շվոց է, թե իրեն է այդպես թվում: Շվոցը կրկնվեց, անտառը մեղմ արձագանքում է: Անդրոն կծկվեց ծառի վրա, դարձավ մի գունդ: Թըվում է Անդրոյին, թե ամեն կողմից մարդիկ են մոտենում, ուր վոր է ծառը կըջապատեն ու իրեն կբռնեն. խաշամի խշխշոցն եւ ավելի յե ուժեղանում: Գալիս են: Անդրոն շունչն իրեն քաշած կպել է ծառի ճյուղից. նայում է չորս բոլորը, բայց մարդ չի տեսնում: Հրեն, կարծես ծառը շարժվեց. թըվաց, թե մի մարդ անցավ դիմացի քարի տակով. յետևի կողմից մի չորացած, գետին ընկած, ծառի ճյուղ ճրթաց. ան-

պատճառ, մարդու վորտի տակ կտորեց ճյուղը... Հեռվում, շատ հեռվում հրացանի պայթյունի ձայն լսվեց. վորսկաններ են, թե կռիվն արդեն սկսվում է. չե՞ վոր հայրիկն ասաց, թե ետոր կամ եգուց կռիվներ են սկսվելու: Անդրոն ականջները սրել է. աչքերը չոել ու նայում է հեռուները, հետն եւ մտածում, թե ինչ պետք է անի, յեթե Ղասուն ու իր ընկերներին չհանդիպի. մտքով ճանապարհ է վորոշում, թե ինչպես գնա հորեղբայր Կարոյի մոտ: Ախրը ինչո՞ւ առաջ հորեղբոր մոտ չգնաց. այ եսպես բան չեք պատահիլ, վորովհետև հորեղբայր Կարոն հեռվից կտեսներ ու ինքը կմոտենար:

Հեռվում հրացանաձգությունն ուժեղացավ: Անդրոն թեև վախկոտ չէ, բայց սիրտն ահ է ընկել հիմի: Գյուղը չի վերադառնալ, ինչ եւ լինի, մինչև չտեսնի ու մանրամասնություններ չհաղորդի Ղասուն կամ հորեղբայր Կարոյին. չե՞ վոր հորեղբայր Կարոն և մյուսները պետք է կապվեն հարևան գյուղերից նույնպես անտառ փախածների հետ, վորոնք ուզում են խմբապետին ու նրա մարդկանցը գյուղերից դուրս անեն ու վերջ տան թալանին ու քյասիբ մարդկանց կովը, յեզը կամ հավերը մորթոտելուն: «Համա ի՞նչ լավ կանեն ե, — մտածում է Անդրոն, — յես եւ փեշս քարով կլցնեմ ու են հացս խլողին քարալարանուկ անելով խոփի կտամ, կըջեմ... եւ վո՞նց եմ մեռել, վոր մի մարդ եւ չփախցնեմ»...

Անդրոն տարվել է այս մտքով. քարը փեշն ածած հալածում է խմբապետին ու նրա մարդկանց: Համարձակություն է ձեռք բերել, վորդևորվել, դեմքն ուրախությունից փայլում է, յերևակայում է, թե ինչպես հացը խլող պահակը փախչում է, աղաչանք-պաղատանք անում, վոր քարով գլուխը չկտորի Անդրոն: Իսկ Անդրոն հալածում է...

— Անդրո Ղան, ետ դու յե ս, — լսվեց ծառի տակից:

— Հա, յես եմ, ապի Ղան, — ուրախությունից ճչաց Անդրոն ու զարմանքից քիչ մնաց խելքը թոցներ...

— Դե, ցած արի, քեզ մատաղ, ցած:

Անդրոն ինքն եւ չի մացավ, թե ինչպես իջավ ծառից:

Հորեղբայր Կարոն ամուր զրկեց Անդրոյին ու սկսեց համբուրել:

Շվարել է Անդրոն ու չի կարողանում հասկանալ, թե հորեղբայր Կարոն վճռաբեղից լույս ընկավ այստեղ. չէ՞ վոր նա յերեկ այնքան հեռու աեղ զնաց — Շար քարի տակը...



Շուտով հավաքվեցին և մյուսները: Ի՞նչ շատ են...

— Անդրոն նստել է հորեղբայր Կարոյի գոգին, վորին շրջապատել են ամենքը, և պատմում է իր գլխին յեկածը:

— Են, երեխիս մի կտոր միս ու հաց տվեք, սոված կլի,—ասեց հորեղբայր Կարոն ու ավելացրեց.

— Անդրո ջան, մեզ համար բերելիք հացը խլեցին, ելի:

— Հն, ասլի ջան, խլեցին, —վշտացած պատասխանեց Անդրոն:

— Բան չկա, մենք հաց շատ ունենք. հրեա հենց քչենք ետ հաց խլողներին, վոր թողնեն ել չեբեա:

Անդրոն ուրախ է. նա գիտե, վոր հորեղբայր Կարոն և իր ընկերները, վորոնց նա ճանաչում է, շատ քաջ են ու անվախ:

— Անդրո ջան, բեզարած ես, արի գնանք վերև մի լավ տուն ունենք, ենտեղ քնի, հետո մի բան կանենք, քեզ տուն կտանենք,—ասաց հորեղբայր Կարոն:

* * *

Տուն կոչվածը մի քարայր եր: Անդրոյի տակը մի շինել փոեցին, վրան ել մի չուխա գցեցին, վոր չմրսի: Անդրոն զրլուխը զրել է իր փափախին ու դեռ չի քնել: Նրա մտքերը

հազար ու մի տեղ են թռչում: Գլուխը ծանրացել է. հենց են է պիտի քներ, յերբ ահանջովն ընկավ հետևյալ զրույցը.

— Բա հիմի ես երեխի բանը վճնց պտի լի,—հարցրեց Ղասին:

— Վճնց կա, թե վճնց ըլի, կմնամեղ մոտ, ելի,—պատասխանեց հորեղբայր Կարոն:

— Կխանգարի, վոտներս կկապի: Մի բան պատահի, մենք գլուխներս կառնենք սար ու քոլ կընկնենք, սրմն ում պահ տանք, երեխա յա,—խոսեց Հայրապետը:

— Բա ասում եք՝ վճնց անենք,—հարցրեց հորեղբայր Կարոն:

— Ասում, եմ, մութը վոր ընկնի, մեզանից մեկն ու մեկը տանի, հասցնի գյուղի ծերը ու ինքը յեա գա,—ասաց Ղասին:

— Երեխեն կասկածի տակ ա, կչարչարեն. վնյ թե շատ նեղություն տան, վնասակար բան ասի,—տարակուսանք հայտնեց Տիգրանը:

Ոոսակցությունը յերկարում եր: Անդրոյի քունը չտարավ: Յերբ համարյա թե վորոշում եյին, վոր Անդրոն վերադառնա տուն, Անդրոն ել չհամբերեց, վեր կացավ տեղից ու վճռական ասաց.

— Յես ել տուն չեմ գնալ, քանի խմբապետն ենտեղ ա. կմնամ ձեզ մոտ, եստեղ, ուր ել զնաք, հետներդ կղամ, ինչ ել ասեք, կանեմ:

Հարցը վճռվեց ինքն: Իրեն: Անդրոն մնաց:

* * *

Հետևյալ որը, առավոտյան, գյուղից մարդ յեկավ ու հայտնեց, թե Անդրոյի հորը բռնել են, բանտարկել և պահանջում են, վոր Անդրոյին բերել տա, թե չե իրեն խիստ կպատժեն: Հայտնեց նաև, թե զորք են տեղափոխել դեպի Աղբբջանի սահմանը, վոր կռիվ սկսեն:

— Ընկերներ,—ասաց հորեղբայր Կարոն,—ել ժամանակ կորցնել չի կարելի. ամենից առաջ պետք է կապ հաստատենք

Աղբրեջան փախած մեր տղերանց և Կարմիր բանակի հետ: Մենք պետք է ետեղից, թիկունքից սկսենք կռիվը և խընդ-
րենք, վոր Կարմիր բանակը մեզ ոգնության գա, թե չե մենք
վոր չսկսենք կռիվը՝ Կարմիր բանակը չի հարձակվիլ: Խորհրդա-
յին իշխանությունը մենք պետք ա հաստատենք, մենք պետք
ա ձեռք բերենք, մենք պետք ա ազատվենք ետ դաշնակ խըմ-
բապետներից ու թալանչիներից. են ժամանակ ել Կարմիր
բանակը մեզ ոգնության կգա: Վոնց վոր Աղբրեջանի չքավոր
գյուղացիները քշեցին մուսավաթականներին և նրանց ոգնեց
Կարմիր բանակը, հիմի յեւ վոր մենք սկսենք, մեզ կոգնեն և՛
Աղբրեջանի թուրք չքավոր գյուղացիները, և՛ Կարմիր բանակը:
Անդրոյին ել կուղարկենք գյուղ, վոր նրա հորն ազատեն:

Անդրոն տխուր է. նախ նրա համար, վոր իր հայրիկին
բանտարկել են, և յերկրորդ, վոր ինքը վերադառնալու յե
գյուղ: Բայց ի՞նչ կարող է անել:

Հորեղբայր Կարոն կարգադրեց, թե ով ինչ պետք է անի:
Ով պետք է մյուս գյուղերի բուլջերիկների հետ կապ պահպա-
նի և պայման կապի, վոր ապստամբությունը միանգամից
սկսեն ամեն տեղ, ինչ ծրագրով և վորտեղից, ապա դարձավ
Անդրոյին.

— Անդրո ջան, ետեղից կգնաս բինեն. կասես մի տոպ-
րակ մածուն կտան, վոր հետդ տուն տանես: Յեթե գյուղ գնաս
և քեզ հարց ու փորձ անեն, կասես, վոր զիշերը մնացել են
բինում ու հիմի յետ են գնացել: Կպատվիրես, վոր բինումն
եւ նույնն ասեն, թե հարց ու փորձ անող լինի: Կգնաս գյու-
ղը և ել վոչ մի տեղով չես շարժվիլ: Մենք ետեղ չենք լինի-
որես դենը մեզ չփնտռեք: Շուտով, շատ շուտով մենք ինք-
ներա կգանք:

— Կարո, — ձայն տվեց Ղասին, — ախրը ես երեխեն մեզ
կարող ա պետք գա գյուղումը:

— Ի՞նչ կարող ա անի...

— Ատում եմ...

Ղասին այլևս չշարունակեց խոսքը: Նա գրպանից հանեց
պատրույզի մի ողակ, մի կտոր կտրեց, տվեց Անդրոյին և ա-
ռաջարկեց, վոր ծայրը վառի:

Անդրոն ծանոթ էր պատրույզի հետ վարվելու ձևին: Նրա
հայրը հաճախ քարեր եր պայթեցնում նրանով:

— Ես հո ֆիթիլ ա, ափսոս ա վոր վառեմ, սրանով քար
են կտորում, — ասաց Անդրոն:

— Դե վոր ետքանը դիտես, տղա ջան, — ասաց Ղասին, —
անյ, սրանից քեզ յերկու արշին կտամ, շալվարիդ վրովը կկա-
պես գոտիի տեղ ու ծածուկ կպահես մոտդ. հենց վոր կռիվ-
ներն սկսվեն, ենքան հարմար ժամանակի կսպասես, վոր շտա-
բի մոտի զինանոցի մոտ մարդ չլինի, ֆիթիլը դռան ճեղ-
քովը ներս կգցես, մի ձեռը դռան մոտ կթողես, վոր վա-
ռես:

— Պահ, ետ հո սաղ տունը տալիս ու վրա կանի, ենտեղ
ենքան բարութ (վառող) ու պատրոն (փամփուշտ) կան... —
բացականչեց Անդրոն:

— Մենք ել հենց ետ ենք ուզում, ելի, վոր խմբապետի
պաշարը վառվի, վոր մեր դեմ կուվելու համար վոչինչ չունե-
նա, — վոզևորեց Ղասին:

— Կանես, Անդրո ջան, թե կվախես, — հարցրեց Կա-
րոն:

— Ինչից պետք ա վախեմ. ենա ծածուկ ներս կգցեմ
ֆիթիլը, ինքս ել կվառեմ ձեռը ու կիախչեմ, վոնց վոր իմ
հերն ա անում քարը լազմա անելիս (պայթեցնելիս). ուզում
ես մի քիչ բարութ տուր հրես ես ծառի տակը վոս անեմ,
մեջս ածեմ ու տրաքացնեմ, ծառը վեր ընկնի, — պատաս-
խանեց Անդրոն, վորի աչքերը վառվում էյին ուրախու-
թյունից:

— Չե, — առարկեց Հայրապետը, — ետ երեխի բան չի.
կտա համ իրեն կվառի, համ ել կարող ա մի փորձանք բերի
խալխի գլխին. հանաք - մասխարություն չի զինապահետի
պայթեցնելը: Բացի ետ, մի հանգամանք ել կա. ետ խմբապետ
չները հոտ են առել, վոր Անդրոն մեզ հետ կապ ունի. ինչ-
քան չըլի երեխա յա, կրոնեն, կչարչարեն, բերնիցը խոսք
կթոցնի, գործներս խարաք կանի:

— Բա վոնց ես ուզում, ուրեմն ասում ես Անդրոյին
չուղարկենք, — հարց տվեց Ղասին:

— Հնա, ասում եմ շուղարկենք. կմնա մեզ մոտ. աչքաբաց երեխա յա, կուղարկենք հարևան գյուղերը, վոր կապ հաստատի մեր ու մյուս գյուղացիները հետ. մեզանից վորն երևա, կկասկածեն, բայց սա երեխա յա, սրա վրա ուշք դարձնող չի լինի, — հաստատ շեշտով ասաց Հայրապետը:

— Խելքից մոտիկ բան ես ասում, — համաձայնվեց Ղատին:

Մյուսները ևս չառարկեցին: Հարցը վորոշված էր. Անդրոն պետք է մնար:

Անդրոն թեև ուրախ էր, վոր մնալու յե, բայց մի քիչ էլ տխուր էր, վորովհետև նրան շատ էր վողկորել զինապահեստը պայթեցնելու հերոսության գաղափարը:

IV

Անդրոն դարձավ սուրհանդակ: Ամեն որ լուրեր է տանում ու բերում: Նա արդեն ճանաչում է հարևան գյուղերի բողջեկներին, նրանց գլխավորներին. գիտե նրանց թիվը, տեղը. գիտե, թե ինչ պատրաստություններ են տեսնում, գիտե պայմանական խոսքեր, վորոնցով իրար ճանաչում են անձանոթ բողջեկները, գիտե, թե ինչքան զինված ուժ կա անտառներում պահված. մի խոսքով ամեն մանրամասնության տեղյակ է: Հանձնարարությունները կատարում է բերանացի: Պատվիրում են, թե ինչ պետք է ասի, կրկնել են տալիս, ապա ճամփու գնում: Տաք շոր ու վոտնամաններ են տվել Անդրոյին: Վազում է Անդրոն սարից-սար, անտառից-անտառ: Պատվիրել են, վոր մեծ ճանապարհով չգնա. յեթե մարդ նրկատի, պահվի, թագնվի թփի յետևը, կամ բութա անի քարին: Անդրոն գիտե, վոր չափազանց մեծ գաղտնիք է իր արածը:

Մի որ Անդրոյին ուղարկեցին շատ հեռու տեղ: Չյունածածկ սարի տակին, խոր ձորում, թագնված բողջեկներ կային, պետք էր նրանց իմաց տալ, վոր դան ու միանան, վորովհետև ապստամբության որը մոտենում էր:

Գնաց Անդրոն դեպի իրեն անձանոթ սարը: Հոբեզբայր Կարոն ճանապարհք ցույց էր տվել զանազան նշաններով: Մի տեղ պիտի հանդիպեր ապառաժների, ապա մի մեծ կաղնի ծառի, հետո ծածման աղբյուրի, այնուհետև պիտի անցներ վորքիկ գետակը և բարձրանար վեր, հասներ ինչ - վոր քանդված գոմի, հետո պիտի իջներ ցած, մտներ խոր ձորը և զրտներ քարայրը: Ահա, հենց այդ քարայրում պիտի լինեյին բողջեկները:

Մութը վրա յեր հասնում, յերբ Անդրոն հոգնած, ուժասպառ, հասավ խոր ձորը: Թեև դեռ լույս կար, բայց ձորն այնքան խորն էր և խիտ անտառով պատած, վոր Անդրոյին թվաց, թե ինքն ընկել է խավար անդունդը:

Վերտեղ է քարայրը... Ո՛ւր գնա Անդրոն, վոր կողմը, վոր գտնի...

Խավար ձորում մոլորված, շվարած, մեկ այս կողմ է գնում Անդրոն, մեկ այն կողմ: Անտառը լուռ է. ծառերն են միայն մեղմիվ որսբում իրենց մերկացած գլուխները— աշնան ցուրտ քամուց...

Անդրոյի սիրտն ահ է ընկել, վայ թե գազան պատահի այս խոր ձորում, գայլերը դան ուտեն: Ի՞նչ անի...

Հիշեց Անդրոն պապի պատմած հեքյաթը գայլերի մասին, թե նրանք կրակից վախենում են: Գրպանից հանեց կայծհան քարը և արեթը, ուղեց կրակ անի, բայց մտածեց, թե մի գուցե ուրիշ մարդ պատահի, իրեն բռնի, տանի խմբապետի մոտ, ու նորից գրպանը դրեց:

Պինդ մութն է արդեն: Խավարը գիրկն է առել սար ու ձոր: Հեռվում լսվում է միայն բարակ վտակի միալար վըշշոցը: Անդրոյի ականջները ծանրացել են, թշուռ են: Տուրտը նեղում է:

Քինչ ուղում է թող լինի, — մտածեց Անդրոն ու խաշամ հավաքեց, կրակ արավ, ապա շոր փայտ վրա տվեց, վոր կրակն ավելի ուժեղ լինի: Անտառը բոցավառվեց: Անդրոն անզաղար փայտ է ավելացնում կրակին: Բոցը ծառերի կատարներն է խանձում. կատարյալ խարույկ է: Կրակը կարծես կենդանություն տվեց. մի կողմից կրակն է հոռում, մյուս կողմից

փայտն է ճարճատուժ: Անդրոն հիմի, կարծես, մենակ մի զգում իրեն: Մեջքին կապած թաշկինակն արձակեց, փռեց գետնին, հացը դեմ արավ կրակին, վոր տաքանա, ապա սկսեց տաք հացն ու պանիրն ուտել: Անդրոն քաղցած է. ամբողջ օրը վոչինչ չի կերել: Ի՞նչ համով է հաց ու պանիրը... Անդրոյին թվում է, թե իր օրում այդքան համով հաց չի կերել:

✓ Կրակը շոյում է Անդրոյի հոգնած մարմինը, վորը դուրեկան մեծժուժ է: Ծանրացել է Անդրոյի գլուխը, քունը տանում է: Քունը փախցնելու նպատակով Անդրոն նորից սկսեց փայտ հավաքել ու վրա տալ խարույկին: Կրակը թեժացավ: Անդրոն կանգնել է ծառին հենված ու նայում է կրակին: «Այ թե եստեղ լիներ են խմբապետը, գցեյի ես կրակի մեջ», — մտածում է նա ու ակամա ժպտում: Կրակն այրում է Անդրոյի դեմքը, բայց մեջքը կարծես մրսելիս լինի: Անդրոն, առանց յերկար մտածելու, մեջքը դեմ արավ կրակին ու մեկնելուց, փափախը դնելով գլխատակին, հաստատ վորոշելով, վոր չի քնելու: Բայց... աչքերն իրենց-իրենց փակվում են: Անդրոյին այնպես է թվում, թե վերի կոպերն արձձի պես ծանրացել են: «Ի՞նչ կլինի վոր,— ինքն իրեն ասում է Անդրոն,— աչքերս կփակեմ ու չեմ քնիլ»...

Հոգնած մարմնին հենց այդ ել պետք էր: Անդրոն աչքերը փակեց թե չէ՝ քնի ծանր վերմակը ծածկեց նրան:

Անտառում մարդիկ շարժվեցին. զինված մարդիկ, վորոնք ողակաձև մոտեցան կրակին և Անդրոյին ու կրակն առան իրենց մեջ:

— Երեխա յա, — շնչաց մարդկանցից մեկը:

— Ես ի՞նչ սրտի տեր ա ես մի մատը քորփեն, վոր մենակ ես ձորն ա մտել... Դուշն իր թևովը մենակ ես վիրուճի ձորը չի մանիլ, — ասաց մյուսը:

— Հալա մի լավ մտիկ, տես, բալքի ճանաչես...

Մարդկանցից մեկը մոտեցավ, կրակին ցախ ավելացրեց, վոր լույսով ավելի լավ տեսնի Անդրոյի դեմքը: Բայց դեռ բան չեր ասել, յերբ հեռվից մեկը բացականչեց.

— Արա, ետ հս մեր երեխեն ա, իմ Անդրոն: Անդրո ջան, Անդրո, Անդրո...

Անդրոն խայթվածի պես վեր թռավ: Ապշած նայում է չորս բուրբ, մարդ չի տեսնում, կարծես աչքերին փառ են քաշել: Անդրոն տրորում է աչքերը: Մարդիկ ծիծաղում են:

— Անդրո ջան, ետ վո՞նց ես եստեղ ընկել...

Մի մարդ ամուր գրկել է Անդրոյին ու համբուրում է:

Անդրոյին թվում է, թե ձայնն իր հայրիկի ձայնն է. ուզում է խոսի, բայց գլուխն ընկնում է մարդու գոգը, աչքերը փակվում են. նուճնը կարծես ցանցել է նրա վողջ եյուր-թյունը. գլուխը կարծես պոկած լինեն ու ձմերուկի պես գլորելիս...

Մարդիկ նորից ծիծաղում են:

— Վեր կալ, վեր կալ գնանք, մեղք ա, մի չարչարի, թող քնի...

Մարդը գրկեց Անդրոյին. մյուսները կրակը հանգցրին ու գնացին:

* * *

Կուշտ քնից հետո, յերբ Անդրոն աչքերը բաց արավ, շուրջը վոչ կրակ կար, վոչ անտառ: Քարանձավումն էր: Կողքին մի մարդ կար պառկած, վորն ամուր գրկել էր նրան ու վրան գցած մուշտակի կիսով ծածկել Անդրոյին, վոր չմրսի: «Ո՞վ է ես մարդը, — մտածում է Անդրոն, — չլինի՞ ելի յերագումն եմ»...

Քարանձավը խավար է: Անդրոն աչքերը չուել է, նայում է մարդուն, ուզում է ճանաչի: Մարդու դեմքը չի յերևում: Անդրոն սկսեց շոշափել մարդու ձեռները, շորերը ու հանկարծ ճչաց.

— Ապի ջան, ապի, ապի...

Քարանձավում մարդիկ շարժվեցին:

— Ապի, ապի, վեր կաց, վեր կաց, թե երագում չեմ,

— գոչեց Անդրոն:

— Հ՞ը, ի՞նչ, հս, Անդրո ջան...

Անկապ բացականչութիւններ արավ մարդը ու վրա նըստեց:

Անդրոյի հայրիկն էր:

Վննց ե ուրախ Անդրոն...

— Բա ստեղին, թե քեզ բռնել են, ապէ, ետ վննց ա ետեղ ես, — հարցնում ե Անդրոն, դեռ ես կասկածելով, թե յերազ ե:

— Փախա, քե մատաղ, փախա, բա, վննց ես ընկել ես վիրուճի ձորը...

— Կարո ապին դարկեց, վոր ետեղի բողբոջներին ա սեմ... Գեզ երազում տեսա... Կրակի կողքին քնած... Հալբաթ քունս տարել եր, — շտապ ու անկապ սկսեց խոսել Անդրոն:

Քարանձավի մարդիկ հավաքվեցին:

Անդրոն պատմեց իր գալու նպատակը, ասաց ինչ վոր պատվիրել եր հորեղբայր Կարոն: Մարդիկ գովեցին Անդրոյի քաջութիւնը, վորսի մտով կերակրեցին:

Մինչդեռ Անդրոն նախաճաշում եր, մարդկանցից մեկը մի թղթի կտոր ծնկանը դրած ինչ-վոր բան եր գրում: Գրութիւնը վերջաձայնուց հետո, մարդը մոտեցավ Անդրոյին, շոյեց նրա գլուխը, հետո պատվիրեց, թե ինչ ե հաղորդելու հորեղբայր Կարոյին ու ձեռքի նամակը տվեց նրան:

— Ես նամակը չկորցնես, — ասաց մարդը, — բերանացի ինչ վոր ասեցի՝ կասես Կարոյին ու ես նամակն ել կտաս իրան: Հիմի, ես ա լուսը բացվելու վրա յա. քեզ հավաքի, հաց ու միս ել վեր կալ ու ճամբա ընկի, իմ խելոք տղա:

Ապա դառնալով մի ջահելի, ասաց.

— Ես երեխին կտանես, կհասցնես մինչև քանդված գոմը, ենտեղից ճամփեն շանց կտաս ու ինքդ յետ կգառնաս:

Սյգպես ել արին:

Անդրոն վտան ու ձեռն ամրացրեց ու ճանապարհվեց:

V

Գնում ե Անդրոն վաղելով: Ինքն իրեն մտածում ե, թե ինչպես պատահեց, վոր ընեց կրակի մոտ, հայրիկն ինչպես ե

փախել բանտարկիւած տեղից ու նման բաներ: Չանաղան ծրբազրեր ե քաշում, թե ինչպես պետք ե այդ բոլոր փախած բողբոջներին հետ միասին ինքն ել կովի խմբապետի դեմ: Ափսոս, վոր հրացան չունի: Ստենք, հրացան չի կարող բանեցնի, բայց լավ կլինի, վոր իրեն մի ատրճանակ տան: Տեղ հասնի թե չե՝ հորեղբայր Կարոյին կխնդրի, վոր իրեն մի ատրճանակ տա:

Անդրոն հասավ առփակին: Առվակը սառել ե. յերեսի բարակ սառուցի տակից շուրը խլխլալի հոսում ե: Անդրոն կանգնել, միտք ե անում, վոր յեթե վտար դնի սառուցին, սառուցը կկտորի, ինքը կընկնի ջրի մեջ, լաջն են ե քարեր գցի առփակի մեջ, վոր վտար դնելու տեղ լինի ու վրայից թռչի, անցնի մյուս ափը:

Անդրոն քարեր ե գցում առփակի մեջ: Խոշոր քարերը դժվարութեամբ են պոկվում. ցուրտը նրանց մեխել ե գետնին. բայց Անդրոն, թեև դժվարութեամբ, պոկում ե ու գլորելով գցում ուզած տեղը: Վերջապես Անդրոն ցատկեց առփի մյուս ափը: Բրանել ե Անդրոն: Նա յերեսը լվացավ ու առփի մոտ նստեց, վոր քիչ հանգստանա:

Անդրոն հանել ե նամակը ե նայում ե. ուզում ե կարդա, թե ինչ ե գրած, բայց նամակը թարս ե դրած: Անդրոն շուռ ու մուռ ե տալիս, բայց չի կարողանում վոչ մի տառ ել ե շոկի:


Հենց այս միջոցին եր, վոր մի զինված մարդ կանգնեց Անդրոյի գլխավերիը ու գոռաց.

— Ետ ինչ թուղթ ա, ետ վճարտեղից ես գալիս...

Անդրոն, առանց վայրկյան կորցնելու, թուղթը գցեց առփի մեջ: Ջուրը պտույտ-պտույտ անելով նամակը տարավ, կոխեց սառույցի տակ:

— Ինչ ես անում, տո շան լակոտ, — գոռաց զինված մարդը, բամփեց Անդրոյի գլխին, ապա սառուցը կտորելով թուղթը հանեց:

Թուղթը թրջվել էր, տեղ-տեղ պատառոտվել, իսկ վոր գլխավորն ե՛ր քիմիական մատիտով գրվածը բոլորովին փչացել էր, գրվածքի տեղ միմիայն ներկված թուղթ էր յերեվում:



Ձինված մարդը զայրացավ, հայիտյանք թափեց Անդրոյի գլխին, մի քանի հարված ել տվեց ու հրամայեց.

— Դե, առաջ անցիր, շան լակոտ, հրես վոր քեզ հազ ե— հազ կտրտենք, են ժամանակ կիմանաս, թե վոնց ես տեսակ թղթերը շուրը գցեա:

Գնում է Անդրոն գլուխը կախ, արցունքն աչքերին: Մեկ մտածում է փախչի, մեկ ել գտնում է, վոր անկարելի յե. զինված մարդը կարող է մինչև անգամ սպանի: Անդրոն լավ գիտե, վոր արդեն բռնվել է ու մտածում է, թե ինչ պատասխան է տալու խմբապետին, վոր կատաղած հարձակվելու յե վրան:

Ձինված մարդն ինչքան բան է հարցնում, Անդրոն վոչ մի պատասխան չի տալիս. շարունակ լաց է լինում, թե իբր ցավից վոչ մի բան չի կարող ասի: Ձինված մարդը հարցերին

պատասխան չստանալուց կատաղում է ամեն անգամ, ու հրացանի կոթով հարվածում Անդրոյի թիկունքին, մեջքին, վոտներին...

Ձինված մարդը, այսպես ծեծելով ու հարվածելով, Անդրոյին հասցրեց իրենց գյուղը և առաջն արած սարավ ուղղակի այն տունը, վորտեղ խմբապետն էր ապրում:

Վողջ գյուղը թափվել է տան առջևի հրապարակը: Գոռում-գոռումն ընկել է: Գյուղացիք պահանջում են, վոր խմբապետն արձակի վոչ միայն Անդրոյին, այլև մյուսներին, վորոնք կասկածով բռնված ու բանտարկված են:

Խմբապետը հրամայեց իր զինվորներին, վոր հավաքված խալխին քշեն հրապարակից: Մտրակներն սկսեցին իրենց գործը. ել մեծ ու փոքր չեն հարցնում, կնիկարմատ ու ծեր չեն հարցնում, վորի զուխն են արշունվա արել, վորի յերեսը...

* * *

Խմբապետը հարց ու փորձ է անում Անդրոյին:

Անդրոն միայն մի պատասխան է տալիս, թե ինքը վոչ մի բանից տեղեկութուն չունի:

— Վերտեղ ե հայրդ:

— Յես ինչ գիտեմ, — պատասխանում է Անդրոն, — յես վոր մեր բլնեն գնացի, իմ ապին տանն էր, հիմի չեմ գիտում վորտեղ ա:

— Հորեղբայրդ վորտեղ է:

— Չեմ տեսել:

— Ես նամակն սվ քեզ տվեց:

— Նամակն առվի մոտ գտա, ուզեցի կարդամ, են մարդը վոր վրես բղավեց, վախից ձեռիցս վեր ընկավ, ընկավ առուն:

Խմբապետը շուռ ու մուռ է տալիս նամակը, վոչինչ չի կարողանում հասկանա: Ինչ-վոր ապակի հանեց գրպանից, դրեց թղթի վրա, ապակին բարձր ու ցածր արավ ու գլուխը թափահարեց: Հետո հայելին դրեց առաջը, նամակը դեմ արավ հայելուն, մի քանի տառի անուն փնթփնթաց քթի տակ ու զայրացած դեն շարտեց հայելին ել, թուղթն էլ:

— Ուրեմն չես ասում, ելի, թե վորտեղ են հայրդ, հորեղբայրդ ու նրանց ընկերները, — գոռաց խմբապետը:

— Յես վոչ մի բան չգիտեմ, — գլուխը կախ պատասխանեց Անդրոն:

— Չգիտես, հրես կիմանաս, — ասաց խմբապետը, ձեռքն առավ մտրակը և սկսեց անողորմաբար ծեծել Անդրոյին:

Անդրոն սկզբում ցավեր երզգում, բայց հետո, հատակին ընկած, միայն նվում եր: Անդրոյին թվում է, թե իր մարմինը մի ուռած մսագունդ է, վորին հարվածում են ու տրորում, վորից ինքը վոչինչ չի զգում:

Անդրոյին քարշ են տալիս, բայց նա խելքն արդեն կորցրել է. այլևս չի հասկանում, թե ինքը վորտեղ է, կամ ինչ են անում իր հետ:

Անդրոն յերբ ուշքի յեկավ, հասկացավ, վոր ինքը թոնրի մեջ է: Ուղեց տեղից շարժվի, չկարողացավ, ձեռն ու վորտեղ կարծես իրենը չլինեն. մեջքը ցավում է, գլուխն ուռել է, աչքերը հաղիվ են բացվում: Թոնրի գլուխն ամուր ծածկած է. Անդրոն չի կարողանում հասկանա գիշեր է, թե ցերեկ: Բանն այն է, վոր վոչ քաղց է զգում, վոչ ցուրտ:

Թոնրի բերանը բացվեց. ինչ-վոր մարդ կուացավ, բռնեց Անդրոյի թևից ու թոնրից հանեց:

Խավար գիշեր է: Անդրոն հիշում է, վոր իրեն ծեծեցին յերեկոյան, բայց չգիտե, թե մի ամբողջ գիշեր ու ցերեկ ընկած է յեղել թոնրի մեջ: Թոնրից հանելուն պես Անդրոյի ցավերը սաստկացան, բայց չի կարողանում ճշա. ցրտից ձայնը կտրել է:

Անդրոյին համարյա քարշ տալով տարան խմբապետի մոտ:

Խմբապետը նորից հարց ու վորձ արավ. անողում. Անդրոն վոչինչ չի ասում, չի յել կարողանում ձայն հանի:

— Շամփուրները բերե՞ք, — հրամայեց խմբապետը:

Ծայրերը շիկացած շամփուրներ բերին:

— Տեսնում ես ես շամփուրները, — ասաց խմբապետը, — յեթե ամեն բան չասես, աչքերդ հանելու յեմ սրանցով:

Անդրոն սարսափեց: Մի բուպե նրա մտքովն անցավ, թե ինքն արդեն կույր է, աշուղի պես, և սկսեց հեկեկալ:

— Շամփուրները յետ տարե՞ք, — կարգադրեց խմբապետը, — թող լացը վերջացնի, հետո կասի:

Նստել է Անդրոն ապուշ կտրածի պես ու չի իմանում ինչ անի, կամ ինչ ասի: Յավերի հետ միասին քաղց էլ է զգում, բայց ինչպես ասի, թե քաղցած է. խմբապետը նրան հո հաց չի տալ... Սովից քիչ է մնում ուշքը գնա:

Խմբապետը դարձյալ նույն թուղթն է խաղացնում ձեռքին:

— Հսիր, այ լավ տղա, — մեղմ ձայնով ու սիրալիր ասաց խմբապետը, — մենակ ասա, թե ես նամակն ով քեզ տվեց, ինչի համար, քեզ կազատեմ, կգնաս ձեր տուն. մորդ էլ կազատեմ, վոր հրեն գոմի միջին. ինչ վոր հայրդ փախել է, նա բանտարկված է: Մայրդ մեղք է:

— Գիտեմ, հիմի համ քաղցած ես, համ մրսած, համ ել ամբողջ մարմինդ ցավից մժմժում է: Ա՛յ, սրանից էլ հեշտ բան. տես, ինչքան լավություն կլինի. մայրիկդ կազատվի, երեխեքն ուրիշի դռներին չեն մնալ, դու էլ կգնաս ձեր տուն, կուշտ հաց կուտես ու փափուկ անկողնում կքնես. քեզ փող էլ կբախշեմ, շաքար էլ կտամ, վոր չայ խմես, աչքերդ էլ չեմ հանիլ, մի ձի յել կբախշեմ, վոր նստես ու քշես. ուզում ես մի ատրճանակ էլ կտամ, մի հրացան էլ, վոր մեծանաս, վորս անես: Յես քո լավն եմ ուզում. ինչ վոր ուզես, կտամ, նոր նոր շորեր, վոտնամաններ, մի խոսքով ինչ վոր քեֆդ ուզի: Դե, ասա, լավ տղա, ասա:

Խմբապետը մինչև անգամ մոտեցավ, շոյեց Անդրոյի գլուխը:

Գյուղի ծայրին մի հրացան պայթեց. ապա յերկրորդը,
յերրորդը...

Խմբապետը հեռացավ Անդրոյի մոտից, ատրճանակը վերց-
րեց սեղանի վրայից, դուռը ծեղկ արավ:

Գյուղի զանազան կողմերում թռչող լուսատուիկներ յերե-
վացին: Լույս են տալիս ու հանգչում, վորից հետո լավում է
հրացանի վորտը: Խմբապետը կապեց փամփուռտակալները,
հրացանը ձեռն առավ, ուղեց դուռս գալ, բայց հենց այդ մի-
ջոցին ներս ընկավ գյուղի տանուտերը և սարսափահար գոչեց.

— Փախչենք, պարոն խմբապետ, թե չե մեզ կկտու-
րեն:

— Ի՞նչ խաբար ե...

— Սազ գեղը վորտի կանգնած դեսն ա գալի, հալա մի
տես...

Չողերի ծայրին կապած լաթեր են վառվում գյուղի ծուռ
ու մուռ փողոցներում: Աղմուկ է, իրարանցում, հրացանա-
ձգություն, շների հաջոց...

Մարդկանց ճիչն ու աղաղակը բռնել է վողջ գյուղը:
Լույսերն ամեն կողմից գալիս են դեպի կենտրոն, դեպի այն
տունը, վորտեղ խմբապետն է: Ահա ինչ-վոր դուռը ջարդեցին:
Աղմուկն ավելի սաստկացավ: Լսվում են ուրախ բացականչու-
թյուններ.

— Կեցցե՛ն ազատությունը...

— Կորչեն խմբապետները...

— Կորչի՛ր դաշնակցական կառավարությունը...

— Կեցցեն բուլշևիկները...

— Կոտորեցեք խմբապետ շներին...

Բանտարկված բուլշևիկները — կանայք, թե սղամարդիկ —
ազատված են:

Լույսերը, հազարավոր աչքերի պես, մոտենում են:

Խմբապետը դուրս յեկավ, ձին հեծավ, հրամայեց, վոր իր
զինվորները, տանուտերը և ելի մի քանի հոգի — հարուստնե-
րից — հետևեն իրեն, բռնեն գյուղի վերին դիրքը և սկսեն հրա-
ցանաձգությունը:

Լույսերը մոտեցան խմբապետի շներին:

Մի կին ճշարով ներս ընկավ.

— Անդրո ջան, բալա ջան...

Անդրոն ինքն էլ չիմացավ, թե ինչպես իր ձայնը բաց-
վեց, ուրախ գոչեց.

— Ե ս տ ե դ եմ, նանի ջան, ե ս տ ե դ ե մ, վախիլ
մի...

— Բաց արեք զինապահեստը, — գոչեց մեկը բակում, —
բաց արեք ու ով վոր գենք կարա բանացնի, զենք տվեք, քշե-
ցեք ետ շներին...

Բաժանում են — հրացաններ, ատրճանակներ, փամփուռ-
տներ...

Վերևում դիրք մտած խմբապետն ու իր կողմնակիցները
կրակում են գյուղի վրա:

— Անդրոյին հարցրեք, թե տղերքը վորտեղ են, մարդ
ուղարկեցեք, թող իմաց անի, գան, — դարձյալ գոչում է նույն
ձայնը:

Անդրոն մոռացել է իր ցավերը: Սկզբում նրան մի դող
բռնեց, իսկ հիմի վողջ մարմինն այրվում է. այնքան տաք է,
վոր ցավ չի զգում:

Անդրոն հազիվ պոկ եկավ մոր գրկից, ցած թռավ բակը
և արագ-արագ հայտնեց, թե վորտեղ են պահված հորեղբայր
կարոն ու մյուսները:

— Դե, գյուլլեց էլ շուտ թոցրու ձիդ ու հասիր տղե-
րանցը, ասա թող դուշի թևով հասնեն...

Մեկը ձին ասպանդակեց ու կորավ խավարի մեջ:

— Լույսերը հանգրեք, — կարգադրեց նույն ձայնը, —
կնանիք, դուր տեղը փամփուռտ չփչացնեք. վոչ վոք չկրակի.
տասը հոգի թող աջ գնա, տաս-տասնհինգ հոգի — ձախ, մնա-
ցածն էլ իմ յետևից յեկեք, սուս, ձեն չհանեք, բալբի շրջա-
պատենք ետ շներին...

Լույսերը հանգան: Գյուղում հրացանի պայթյուն չի լրս-
վում, միայն վերևի դիրքերից խմբապետն իր մարդկանցով
գնդակի կարկուտ է թափում գյուղի գլխին: Խավարի մեջ
զնդակները վզզում են ու խրվում դեզերի մեջ կամ քանդում
կտուրները...

Գիշերը կարծես այնքան է յերկարել, վոր իսկի լույսը չի բացվելու:

Մեկը վազում է. վտտոմն ինչ-վոր փափուկ բան ընկավ. կանգ առավ, անդդեց. յերեխա յե, ոմ է, կուացավ. խավարում վոչինչ չի շոկում. հրացանն արձակեց ընկածի դեմքին մոտ...


Անդրոն է անշարժ ընկած:

— ՌՖ, են շներն ես երեխին սպանեցին, — մղկտոցով բացականչեց անցվորը, Անդրոյին գրկեց ու հասցրեց իրենց տուն:

Անդրոյի ամբողջ մարմինը կապտած է, տեղ-տեղ ուռած: Մայրը ծվում - ճշում է, մաղերը փետում:

Կանչեցին Չորանանց Ավոյին: Իննսուն տարին անց ծերունի հովիվը ներս մտավ, անդդեց Անդրոյի մարմինը, ականջ դրեց սրտին ու ասաց.

— Երեխեն սաղ ա, գյուլա չի դիպել, ես վոր անորենն ա եսքան վտտի տակ տրորել... Մըաղ բերեք, արաղ...



Չորան Ավոն սկսեց ողիով տրորել Անդրոյի մարմինը: Ապա փաթաթեց ու պառկացրեց տաք անկողնում, պատվիրելով, վոր չարթնացնեն մինչև ինքն իրեն չարթնանա:

— Մի տարի... — չիբուխը լցնելով սկսեց իր պատմությունը ծերունին, — մի տարի ես մեր Ովագիմի երեխեն ինչ ա, են վոր հիմի փախած ա... Հա, դե են վախտն երեխա յեր, ելի .. Սխըր խոսքը, վոր տակիցը չասես՝ վերջը դուզ չի գար:

Ես մեր Ովագիմը մի արջի քոթոթ եր բռնե, բերել բինեն: Ասեցի, Ովագիմ, ետ քոթոթը մի փորձանք կբերի մեր գլխին, սա թե՛ ինչ փորձանք, քաղբումն արջին պար գալ ել են սովրացնում...

Սմբապետի բռնած դիրքում հրացանաձգությունն ուժեղացավ. լավեցին անընդհատ համադարկեր...

Լույսը բացվում եր: Հրացանաձգության ձայները հետզհետե հեռանում ելին:

Հեռու սարի գլխին վորտաց մի թնդանոթ: Դա — Կարմիր բանակի թնդանոթն եր, վոր վողշունում եր ապստամբ գյուղացիների հաղթանակը:

* * *

Անդրոն յերբ աչքերը բացեց, նրա ականջին հասավ գուռնի ձայնը:

Վողջ գյուղը ցնծության մեջ եր:

Այն տան գլխին, վորտեղ խմբապետն եր ապրում, մի



կարմիր դրոշակ ծվում եր աշնան քամուց:

Հորեղբայր Կարոն հեղափոխական կոմիտեյի նախագահն եր:

— Անդրոն ուզեց վեր կենալ տեղից, չթողին:

— Սխըր յես ել եմ ուզում ուրախանամ ամենքի հետ, — ասաց Անդրոն:

— Ես ե քեզ ել կուրախացնենք, — ասաց մայրիկը ու տանից դուրս յեկավ:

Մի քիչ անց, գուռնան արդեն նվազում եր Անդրոյենց դռանը:

Հորեղբայր կարոն ներս մտավ, գրկեց Անդրոյին ու մի կարմիր ժապավեն կապեց նրա կրծքին:

— Ես կարմիր կտորը, — ասաց հորեղբայր կարոն, — մեր հեղափոխական կարմիր դրոշակի մի մասն ա. վոնց վոր մենք, մեծերս ամուր ենք պահում Հոկտեմբերի կարմիր դրոշակը, հնպես ել դու ամուր պահի քո կրծքին ես փոքրիկ դրոշակը, վոր միշտ հաղթես մեր թշնամիներին:

Ներկա յեղողները բարձր գոչեցին — «Կեցցե մեր Անդրոն», «Կեցցե Խորհրդային իշխանութիունը»...

Զուռնան նվազում եր պարի յեղանակ:

Ի՞նչ ուրախութիուն եր...

ԿԱՐՄԻՐ ԹԱՇԿԻՆԱԿ

ԿԱՐՄԻՐ ԹԱՃԿԻՆԱԿ

Ապրում եյինք մեծ քաղաքի խուլ ու յետ ընկած փողոցներին մեկի վրա գտնվող խոնավ ու խավար նկուղում: Հորս չեմ տեսել, նրան սպանել են, յերբ յես վեց ամսական եմ յեղել: Մայրս շատ բան չի պատմել հորս մասին: Հենց վոր սկսում եր, թե հորս կյանքը նկարագրի, աչքերը լցվում եյին արցունքով, և խեղճ կինը միայն թուքն եր կուլ տալի, ասելով «կմեծանաս, բալաս, ինքդ կիմանաս»: Ասենք, յեթե պատմեր ել—բան չեյի հասկանա, վորովհետև դեռ շատ փոքր եյի հասկանալու համար այն ամենը, ինչ վոր հետո իմացա հորս ընկերներին:

Հագիվ հիշում եմ, վոր ինձնից յերկու տարով մեծ քույրըս մեռավ թոքերի բորբոքումից ու մնացինք յես ու մայրս:

Դժվար եր մեր ապրուստը, մայրս ամբողջ որը դուրսն եր լինում, լվացք եր անում հարուստ մարդկանց տներում, և իրիկունը հոգնած, վտանքը հագիվ քարշ տալով վերադառնում տուն, ընկնում մահճակալին ու շարունակ գանգատվում կրոնների ցավից: Շատ եյի խղճում մայրիկիս, բայց ինչքան մըտածում եյի իմ փոքրիկ ուղեգով, վոչ մի հնար չեյի գտնում նրան ոգնելու, ու մի բանով եյի մխիթարում ինձ, վոր կիծանամ, կախշատեմ ու լավ կապրենք:


Մեր բակում մեզ պես չքավոր մարդիկ եյին ապրում, վորոնք ցերեկները պահում եյին ինձ իրենց մոտ, ու շատ անգամ ել կերակուր տալիս:

Յես արդեն մեծացել եյի, դարձել յոթը տարեկան, մայրըս մտածում եր ինձ դպրոց տալ: Բայց ահա, մի որ, յերբ

մայրս տուն մտալ, նրա յերեսի գույնը թուել եր, յեղունգ-
նէրը կապտել, իսկ ինքը դողում եր աշնան տերևի նման: Նա
հագիւմ անկողին մտալ, վորից հետո տաքություն սկսվեց: Մեր
հարեան Պավելը, վոր մի բանվոր եր և հորս ընկերներից,
բժիշկ կանչեց, մի անգամ ել հագիւմ վճարեց բժշկի ու դեղի
փողը ու կարծելով, թե դրանով ամեն բան վերջացաւ, ինձ
հանգստացրեց, թե մայրիկը կլավանա, ու ինքը գնաց իր հող-
սին: Իսկ մայրիկը չեր լավանում, նա քանի գնում—այնքան
ավելի վատանում եր:

Մի փոքրիկ լամպ վառած, մայրիկիս անկողնի մոտ նըս-
տած շարունակ նայում եյի դեմքին ու սպասում, թե յերբ ե
չուր ուզելու, վոր տամ—այրվող բերանը թաց անելու համար:
Հարեան կանայք շուտ-շուտ մանում եյին մեզ մոտ, հաշց-
նում՝ թե ինչպես ե գգում իրեն հիվանդը, և վոչ մի բան
չհասկանալով նրա դրությունից ուսները վեր քաշելով նորից
գնում:

Մի գիշեր մինչև լուսաբաց մայրս շատ տանջվեց տաքու-
թյունից, յես ել նստած, շարունակ այն եյի մտածում, թե ինչ



ե լինելու: Ու շատ մտածմունքից քունս տարել՝ քնել եյի, յերբ
մայրս ձայն տվեց: Նա իր փոքրիկ արկղն ուզեց: Նստեց ան-
կողնում, բաց արավ արկղը, հանեց միջից թղթի մեջ փաթա-
թած մի արյունոտ թաշկինակ ու դեմ արավ ինձ:

— Առ, բալա ջան, սա հորդ թողած միակ հիշատակն ե,
լավ պահիր: Յերբ նրան սպանեցին, այս թաշկինակը գտանրա
արյունաշաղախ ծոցում, պահեցի, վոր յերբ մեծանաս, քեզ
տամ, վոր դու իմանաս, թե ինչպես ե ապրել հայրդ, ինչու
յես սպանվել և ով ե սպանել նրան,—ասաց մայրս:

Նրա աչքերը նորից լցվեցին արցունքով, նա ինձ համ-
բուրեց ու կրկին թեք ընկաւ անկողնում:

Արյունոտ թաշկինակը ձեռիս, մոլորված նստել եյի, յերբ
մեր հարեան Պավելի կինը ներս մտաւ: Նա մոտեցաւ անկող-
նին, ապա դարձաւ դեպի ինձ, թեիցս բռնեց ու տարաւ ի-
րենց տուն:

— Թող մայրիկը հարգիստ քնի, բալաս, իսկ դու մեզ
մոտ մնա,—ասաց նա:

Յես այլևս մայրիկիս չտեսա: Նա մեռել եր, թաղել եյին
առանց ինձ:

Այս, հորս արյան մեջ թաթախված, կարմիր թաշկինակը
յես շարունակ պահում եյի իմ ծոցում, և ինձ թվում եր, թե
իմ հայրիկը շարունակ ինձ հետ ե, իմ կրծքին կպած, իմ
սրտի մեջ: Վոչ վոր չգիտեր թաշկինակի գոյության մասին,
մինչև անգամ քեռի Պավելը, վորի տանն եյի ապրում, և վորը
պահում եր ինձ իր վորդու պես:


Յես արդեն տաներիւ տարեկան եյի, աշխատում եյի
հենց նույն գրասենյակում, ուր աշխատել եր իմ հայրիկը:
Յես բավական տեղեկություններ եյի հավաքել հայրիկիս մա-
սին, և գիտեյի, վոր նա դեմ ե յեղել գործարանի տիրոջը,
թագավորին, նա կազմակերպելիս ե յեղել բանվորներին, վոր
կռվեն նրանց դեմ, վորի պատճառով և վոստիկանությունը
մի որ շրջապատել ե նրա կազմակերպած ժողովատեղին, ու-
զել ե կոտորել ամենքին և, հրացանաձգության ժամանակ,
սպանել ե հայրիկիս: Այս ամենը գիտեյի, բայց չեյի կարո-
ղանում հասկանամ պատճառը:

Ահա հենց այդ ժամանակ եր, վոր հեղափոխություն ծա-
ղեց:

Դուրս յեկան բանվորները կարմիր գրոշակներով: Քեռի
Պավելը մի ձառ արտասանեց: Շատ բան չհասկացա նրա ա-

սածից, միայն մի բան շատ խիստ տպավորվեց իմ ուղեղում,
այդ աչքերը, վոր նա ասաց:

— «Այս կարմիր դրոշակը ներկված է բանվորների կար-
միր արյունով, յերգվեցեք ամուր պահել այն, հիշեցեք 1905
թիվը»:



Ինձ թվաց, թե քեռի Պավելը խոսում է իմ հայրիկի և
նրա արյունոտ թաշկինակի մասին, յես շատ հուզվելուց լաց
յեղա ու ծոցիցս հանելով կարմիր թաշկինակը, բարձր բռնե-
լով ճչացի:

— Ճիշտ է ասում քեռի Պավելը, ահա հայրիկիս արյու-
նով ներկված կարմիր թաշկինակը:

Լ Ո Ի Ի Չ Ա

Լ Ո Ւ Ի Յ Ա

(Պարիզի կոմունայի դեպքերից)

I

Մի շաբաթից ավելի չե, ինչ փոքրիկ Լուիզան չի տեսել իր հայրիկին:

Պատահում ե, վոր հայրիկը գիշերները բոլորովին տուն չի գալիս, իսկ յեթե գալիս ել ե, ապա այնքան ուշ, վոր Լուիզան քնած ե լինում:

Գալիս ե և, ինչպես մայրիկն ե ասում, առանց քնելու կամ հանգստանալու, կրկին վերադառնում ե իր ընկերների մոտ:

Լուիզան հազիվ 8 տարեկան ե, թրվուուն, ուրախ, խարտյաշ, շիկահեր գանգուրներով մի աղջիկ, վորի խոսակիներն ողակ-ողակ իջնում են նրա վարդագույն թշերի վրա, վորոնց հետ շատ ե սիրում խաղալ հայրիկը, յերբ գործարանից տուն ե դառնում յերեկոները:

Լուիզայի փոքրիկ ուղեղը չի կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ հայրիկն իր սովորական աշխատանքին չե, ինչո՞ւ յերեկոները տուն չի գալիս իր ժամանակին, ինչո՞ւ այժմ նրա ձեռին հրացան կա, մի բան, վոր առաջ յերբեք չի տեսել ինքը վոչ հայրիկի ձեռին, վոչ ել իրենց տանը:

Բանն այն ե, վոր միայն հայրիկը չի այդպես, այլ նրա հետ աշխատող բոլոր այն բանվոր ընկերները, վորոնց Լուիզան ճանաչում ե: Նրանք ել են գլինվոր դառել, թեև առանց գլինվորական համազգեստի:

Լուիզան չի կարողանում հասկանալ նմանապես, թե ինչու բոլոր դպրոցները փակվել են և ինքը չի գնում սովորելու: Մի անգամ նա տեսել է, վոր իր ուսուցիչներին մեկը, այ, են բարձրահասակ, բարի, ժպտացող, մանուկներին սիրող պարոն ժանը նույնպես հրացանը ձեռին ման է գալիս փողոցում, կարծես պահակ լինի...

Առաջ հրապարակներում հավաքվում էին մարդիկ, բանվորներ, կանայք, մինչև անգամ յերեխաներ. խոսում էին, ճառեր արտասանում, վորոնցից Լուիզան համարյա բան չէր հասկանում, թափահարում էին կարմիր դրոշակներ, ցնծադին աղաղակում, ծափահարում, «կեցցե» զոչում, ուրախանում, իսկ, այ, մի շաբաթից ավելի յե, ինչ ամեն բան լուել է. փողոցները, դրեթե, դատարկ են լինում, իսկ յերեկոները տանից դուրս գալն արգելված է: Մի խոսքով այնքան տխուր է, վոր Լուիզան չի կարողանում, մինչև անգամ, իր ընկերուհու՝ ժակլինայի մոտ գնալ: ժակլինան բավական հեռու յե ապրում, իսկ մայրիկը թույլ չի տալիս հեռու տեղ գնալ: «Վատնգավոր է,—ասում է,—կարող ե մի բան պատահի»: — Իսկ թե ինչ «բան» կարող է պատահի, Լուիզան այդ չգիտե, մայրիկը չի ասում:

«Ձեռ հասկանա, դեռ փոքր ես»,—ասում է մայրիկը շոյելով նրա գանգուրները: Իսկ յերբ Լուիզան սկսեց լաց լինել, բողբոջեց, ասելով թե ինքը շատ լավ էլ կհասկանա, մայրիկը նրան մի բառ միայն ասաց, վոր շատ ամուր մեխվեց Լուիզայի փոքրիկ ուղեղում: Մայրիկն ասաց, թե հեղափոխությունն է: Ճիշտ է, Լուիզան լուեց, բայց իրոք չհասկացավ, թե ինչ բան է հեղափոխությունը:

— Իսկ յերբ կվերջանա այդ հեղափոխությունը,—հեղելով, ու շվարած հարցրեց Լուիզան,—յես շատ, շատ եմ կարոտել հայրիկին. թող վերջանա, եղ ինչ վոր ասում ես, այ, եղ բանը, հեղափոխությունը... Շնուտ կվերջանա...

Մայրիկը ժպտաց, շոյեց, համբուրեց նրա խոսողիկները և քնացրեց:

Լուիզան յերագների մեջ էր, յերբ հայրիկը տուն վերադարձավ: Ուշ գիշեր էր, Լուիզան թեև իմացավ հայրիկի դալը, բայց քուշը գլխին՝ չկարողացավ վեր կենալ: Գլուխն այնքան ծանր էր... կարծես կապար էլին լցրել մեջը: Պոլ՝ը,—այսպես էր Լուիզայի հոր անունը, հրացանն զգուշությամբ դրեց անկյունում, նստեց տաբուրետին ու խնդրեց, վոր ուտելու բան տան իրեն:

Լուիզայի մայրիկը կամաց փափաց Պոլ՝ի ականջին.

— Մի քիչ հաց ու պանիր կա: Ինչ վոր ունեյինք վերջանալու վրա յե, հաղիվ յերկու որ բավականանա շաքարը, նույնպես և ալյուրը: Ի՞նչ ես մտածում...

Պոլ՝ը շատ տխուր էր ու մտազբաղ. լուռ ծածկում էր չոր հացը:

— Ի՞նչ լուր կա,—բաժակը սուրճ լցնելով հարցրեց մայրիկը,—շնուտ կվերջանա այս դրությունը, թե՛ յերկար է տեվելու...

— Բանն այն է, ժաննա,—ասաց Պոլ՝ը,— վոր ամբողջ քաղաքն է կարիքի մեջ, միայն մենք չենք: Մեր դեկավարները չեն համաձայնվում ձեռք տալ բուրժուայների ունեցվածքին—վոչ տանը, վոչ փողին, վոչ էլ կալվածքներին: Թեև կոմունարները համբերությամբ տանում են ամեն մի զրկանք, քաղց, նեղություն, և այլն: Հետո... Բուրժուայներն ու զինվորականները, վորոնք փախել են Վերսայլ *), այժմ մեզ ողակի մեջ են առել և շատ եմ կասկածում, թե կոմունան դիմանա: Դրությունը շատ լուրջ է:

— Իսկ սվքեր են Վերսայլցիների դեկավարները, վորոնք ուզում են կոմունան խորտակեն:

— Գլխավորը Տիյերն է, բայց զինվորական հրամանատարը Գալիֆեն է, վոր գիտես, թե ինչ գազան է. յեթե քաղաք մտնի, քար ու քանդ կանի, էլ կին ու յերեխա չի թողնի... Բայց...

*) Պարիզից (Ֆրանսիայի մայրաքաղաքը) 20 վերոտ հեռավորության վրա գտնվող քաղաք:

Սյտեղ նա խոսքը կտրեց — ու նայելով Լուիզայի կողմը, դարձավ կնոջը.

— Ինձ ե... կարող ե լսել:



— Ինձ ե, քնած. վոչինչ չի լսի: Խեղճ յերեխաս կարոտել ե քեզ, այնպես ե կարոտել, վոր յերեկ ամբողջ օրը քո մասին եր խոսում: Գոնե մի անգամ շուտ արի, տես, խոսիր հետը, վայփայիր...

Պոլն այնուհետև սկսեց պատմել դեպքերի մասին, նրանց վտանգավոր լինելու մասին, և ելի շատ ու շատ բաներ:

Լուիզան, վոր արդեն զարթնել եր, բայց անկողնում անշարժ լսում եր, այնքան ել բան չեր հասկանում: Միայն յերեք անուն նրա փոքրիկ գլխում շարունակ խառնվում ելին իրար. Վերսայլ, Տիյեր, Գալիֆե...

Նա լսել եր Վերսայլի մասին, բայց թե ո՞վքեր ելին այդ Տիյերն ու Գալիֆեն, վորոնք այդքան վատ մարդիկ ելին, և վարոնցից հայրիկը վախենում եր, թե կարող են հանկարծ քաղաք մտնեն ու յերեխաներին... Ինչո՞ւ հայրիկը կանգ առավ... Ի՞նչ կանեն յերեխաներին... Կձե՞ծեն, շատ խիստ կձե՞ծեն... — վճռեց Լուիզան իր մեջ, վորի սիրտն սկսեց ուժգին բարախել...

— Ի՞նչ վատն են դրանք... — ճշաց Լուիզան անսպասելի կերպով թե իր և թե ծնողների համար:

Ծնողներն անմիջապես վեր թռան ու մոտեցան Լուիզայի անկողնին: Լուիզան քիչ մնաց լաց լինեց, բայց զսպելով իրեն, հայրիկի վզովը փաթաթվեց ու սկսեց համբուրել նրան:

Ինչքան գունատվել ե հայրիկը... Նրա յերեսն ամբողջովին ծածկվել ե մազերով:

— Ի՞նչ պատահեց քեզ, բալիկս, — համբուրելով Լուիզայի խելոք աչքերն ու գանգուրները, հարցրեց հայրիկը:

— Վոչինչ, — շփոթված պատասխանեց Լուիզան: — Սյ, են... են... Գալիֆեն... Գալիֆեն...

— Ուրեմն արթնն ելիր, լսեցիր ինչ վոր խոսում ելինք... — թեթև դժգոհությամբ հարցրեց հայրիկը:

— Սյն, հայրիկ ջան, լսեցի, ամեն բան լսեցի... Ա՛յ, յես կգամ քեզ հետ, կգամ են չար ու վատ Գալիֆեյի մոտ, կկրկնեմ հետը, վոր քեզ չչարչարի... Վոր յերեկոները շուտ տուն գաս...

II

Լուսադեմ եր:

Լուիզան այլևս չքնեց: Նա հագնվեց, հայրիկի գոգում նստած սուրճ խմեց: Իսկ յերբ հայրիկը վեր կացավ, թե ընկերների մոտ — դիրքերը գնա, Լուիզան ել պոկ չեկավ նրանից:

Ծնողների վոչ մի խնդիր կամ հորդորանք ոգուտ չարավ: Ինչքան ել բացատրեցին, թե վտանգավոր ե, չի կարելի, չկարողացան համոզել փոքրիկ Լուիզային, վորն արդեն արտասվում եր մի անկյուն քաշված և սպառնում, վոր յեթե հայրիկն իրեն չտանի հետը, ինքը մենակ կփախչի տանից ու կգնա:

— Լավ, — անաց հայրիկը, — կտանեմ, միայն իսկույն պետք ե վերադառնաս տուն:

Սպա դարձավ կնոջը, հանգստացրեց, ասելով.

— Վոչինչ, այսօր կարելի յե, դեռ մեծ վտանգ չի սպառնում. թող գա, յես իսկույն յետ կուղարկեմ...

Ու մայրիկի հետ համբուրվելով, փոքրիկ Լուիզան դուրս
յեկավ տանից հայրիկի ձեռք պինդ բռնած:

* * *

Գարնան պարզ ու տաք առավոտ էր բացվում: Քամին
մեղմորեն շոյում էր Լուիզայի խոպոպիկներն ու զվարթ դեմ-
քը: Փողոցները դատարկ էին, հատ ու կենտ մարդիկ էին
հանդիպում, վորոնք հրացաններն ուսին շտապում էին այս
ու այն կողմ:

Պատահեց հայրիկի ընկերներից մեկը — «ընկեր ժանը»,
ինչպես կանչում էին նրան ամենքը: Սա — թուխ թեմբուկ,
միջահասակ, արագ շարժումներով ու ծիծաղկոտ աչքերով մարդ
էր. սիրում էր յերեխաներին նստեցնել ուսերին ու վազվզել:
Հենց վոր Լուիզային տեսավ, անմիջապես մոտ վազեց, շոյեց
նրա կարմրած թշերն ու բարձրացրեց, զրեց ուսին:

— Սրան ուր ես տանում,— դարձավ ընկեր ժանը Լուի-
զայի հայրիկին:

— Ուզում ես անպատճառ Գալիֆեյին տեսնի,— ժպտալով
պատասխանեց Պոլը. — Ինչքան արի, չկարողացա համոզեմ,
վոր մնա տանը:

— Սև մահը տեսնի Գալիֆեյին, — պատասխանեց ընկեր
ժանը. — մենք նրան ցույց կտանք, թե ինչ է նշանակում մեր
դեմ կռվել...

Ու սկսեցին խոսել զանազան հարցերի մասին:

Փոքրիկ Լուիզան, վոր ընկեր ժանի ուսերին նստած նա-
յում էր քաղաքի տներին ու փակված լուսամուտներին, դար-
մացավ, յերբ նկատեց, թե ինչպես քաղաքի ծայրամասերի փո-
ղոցները լլքն էին զանազան տնային և այլ իրերով, վորոնք
իրար վրա դարսել, մի տեսակ, պատ էին շինել: Ել տակառ-
ներ, ել սեղաններ, թիթեղե հին վառարաններ, գերաններ,
քարեր, յերկաթյա ձողեր, մեծ ու փոքր պահարաններ, տա-
բուրեաներ, աթոռներ... Մի խոսքով ամեն տեսակի իրեր,
վորոնք արգելում էին փողոցների անց ու դարձը:

— Վոչինչ, բավական ամուր բառիկադներ են շինված,—
գոհունակութամբ ասաց ընկեր ժանը. — քաղաքը հեշտութամբ

չենք տա, թեկուզ ամենքս ել այս բառիկադների տակ մնանք,
— ավերացրեց հաստատ ու վճռական:

Լուիզան չէր հասկանում այս ամենի իմաստը, բայց ու-
րախ էր, վոր նոր բաներ է իմանում ու տեսնում: Կպատմի
մայրիկին, հենց վոր տուն վերադառնա:

— Լսիր, Պոլ,— հանկարծ կանգ առավ ընկեր ժանը՝ դառ-
նալով Լուիզայի հայրիկին, ուսերից ցած առնելով Լուիզային:

— Լսիր, տես ինչ եմ ասում...



Ու Պոլի թևից քաշելով յերկուսով անցան պատի կողմը:
Լուիզան նայում էր բառիկադներին, ինչպես ընկեր ժանն էր
ասում, իսկ հայրիկն ու ընկեր ժանը ինչ-վոր լուրջ դեմքով,
ցած ձայնով խոսում էին միմյանց հետ, վորից Լուիզան վոչ
մի բան չլսեց:

— Վճռված բան է,— բացականչեց հանկարծ ընկեր ժանը:
Սպա մոտեցավ Լուիզային, բարձրացրեց, կրկին ուսերին դը-
րեց ու բացականչեց.

— Պոլ, շտապիր:

Վազում է ընկեր ժանը, վոնց է վազում... ձիու պես.
Իսկ Լուիզան կշկշալով ծիծաղում է ու ձեռով նշան անում
հայրիկին, վոր իրենց յետևից հասնի: Հայրիկի դեմքը շատ
տխուր թվաց Լուիզային: «Ինչո՞ւ», մտածում է Լուիզան:

Քաղաքից դուրս յեկան:

— Դէ, փոքրիկ կոմունարս, — ասաց ընկեր ժանը և ուսերից ցած առավ Լուիզային, — բավական ե ինչքան ձեռով ըզբոսնեցիր, այժմ ել քիչ վոտով գնա: Ո՛ր... ի՞նչ մեծ գործ ես կատարելու, գիտե՞ս... շատ, շատ մեծ գործ...

Լուիզայի հայրիկը, վոր քիչ յետ եր մնացել, հասավ նրանց:

— Պոլ', թուղթ ունե՞ս, — հարցրեց ընկեր ժանը:

— Ունեմ, — տխուր ձայնով պատասխանեց հայրիկը, ծոցի զրպանից հանեց մի ծալծլված թղթի կտոր ու ավեց ընկեր ժանին:

Ընկեր ժանը մատիտը հանեց, կռացավ, ծունկը «սեղան» շինելով ինչ-վոր բան գրեց, ապա չորս տակ ծալեց ու դարձավ Լուիզային:

— Դէ, փոքրիկ կոմունարս, հանիր աջ վոտիդ կռիկը:

Լուիզան հանեց կռիկը: Ընկեր ժանը ծալած թուղթը դրեց կռիկի մեջ, վորից հետո Լուիզան նորից հագավ կռիկը:

— Պատրաստ ե, — ուրախ բացականչեց ընկեր ժանը և Խուրջ գեմքով, ինչպես մեծերի հետ են խոսում, դարձավ Լուիզային, — այսպես, փոքրիկ կոմունարս, դու այստք պետք ե մի շատ մեծ գործ կատարես, շատ մեծ գործ... Դու, իհարկե, ճանաչում ես քո ընկերուհի փոքրիկ Ժակլինայի նորը, ընկեր Եղմոնին...

Լուիզան գլխով նշան արավ, թե ճանաչում ե և ասաց:

— Այո, նա ինձ համար իմ ծննդյան տոնի օրը մի մեծ գիրք բերեց, վորտեղ շատ նկարներ կան, աղվես... աքաղաղ... փիղ...

— Այո, հենց նա, — շարունակեց ընկեր ժանը: — Ընկեր Եղմոնը և մի խումբ ուրիշ ընկերներ գտնվում են այ, են յերևացող բլրից քիչ այն կողմը: Այ, են փոքրիկ ճանապարհով կվազես. հենց վոր հասնես բլրին, կծուվես դեպի ձախ և ուղիղ առաջ կգնաս. այնքան կգնաս, վոր առաջդ կգա մի ուրիշ բլուր. կբարձրանաս այդ բլրի գագաթը և բարձր ձայնով

կկանչես — «Պոլ', Պոլ', հայրիկ», իբր թե հայրիկիդ ես փրնառում: Քեզ կտեսնեն զինված մարդիկ ու կմտտենան: Չվախենաս, դրանք մեր ընկերներն են: Կհարցնես, թե վորտեղ ե ընկեր Եղմոնը, և յերբ քեզ նրա մոտ տանեն, կհանես կռիկդ և այս թուղթը կհանձնես նրան: Հասկացար...

— Հասկացա, — ուրախ պատասխանեց Լուիզան:

— Դէ, կրկնիր ինչ վոր ասացի քեզ:

Լուիզան մի առ մի կրկնեց սոսիսալ:

— Այդպես, բալիկս, — շոյեց Լուիզայի գլուխը ընկեր ժանը և ավելացրեց. — տես, վոչ վորքի չտաս այդ թուղթը, վոչ վորքի, բացի ընկեր Եղմոնից, իմացար, վոչ վորքի, ով ել վոր լինի: Սա շատ մեծ գաղտնիք ե. ով ել վոր հարցնի, թե ուր ես գնում, կամ ում ես փնտռում, կասես, թե հայրիկիդ մոտ ես գնում. ուրիշ վոչինչ:

Նամակի մասին վոչ մի բան չասես: Հետո ընկեր Եղմոնը քեզ նույնպես մի նամակ կտա. նույն ձևով կռիկիդ մեջ կըդնես ու զնացած ճանապարհով կրկին յետ կգաս մեզ մոտ: Ընկեր Եղմոնից բերած նամակն ել կա՛ր ինձ կտաս, կամ հայրիկիդ. ուրիշ վոչ վորքի, հասկացար, վոչ վորքի, մինչև անգամ մայրիկին ել չի կարելի տալ... հասկացար, բալիկս. այս բանը վոր գլուխ բերես, դու մի հարյուր մարդ կազատես են չար ու վատ Գալիֆեյի ձեռից:

Ընկեր ժանը մի անգամ ել կրկնեց, մեկ ել ճանապարհը ցույց տվեց, նորից պատվիրեց Լուիզային իր անելիքը, ապա նա ու հայրիկը համբուրեցին Լուիզային ու ճամփու դրին ասելով:

— Շուտ դնա, շուտ ել արի, մենք այստեղ սպասում ենք քեզ:

III

Վազում ե փոքրիկ Լուիզան լախ ու արձակ դաշտի վերայով, յերիզի նման ձգված նեղ ճանապարհով. վազում ե ու մտքում շարունակ կրկնում ինչ վոր պատվիրել ե ընկեր ժանը, թե ինչպես նամակը տալու յե միմիայն Ժակլինայի հայ-

ընկին, վորը Լուիզայի գլուխը կշոյի, կասի.— «Ապրես, փոքրիկ Լուիզա, վոր այդպես քաջ ես, այդպես անվախ»...



Հայրիկն ու ընկեր ժանը հետևում են նրա ամեն մի շարժումին: Ահա նա, փոքրիկ Լուիզան, իր կարմիր գլխարկով ու վարդագույն շորով, նոր կանաչող դաշտի միջով, փեշերը քամուն տըված, առաջ է վազում, կարծես կակաչ լինի քամու հոսանքի հետ շարժվելիս: Ահա մտնեցավ բլրին կարծես կանգ առալ: Լուիզան այժմ դարձել է մի կետի չափ փոքր, արդյոք շարժվում է նա, թե ճամփան մոռացել է, կանգ առել: Ընկեր ժանի սիրան ուժգին բարախում է:

Բայց անա «կետը» շարժվեց դեպի ձախ և բոլորովին կորավ նրանց աչքից:

— Կեցցես, աղջիկս, — ուրախ բացականչեց ընկեր ժանը և թոթվեց Պոլի ուսը, վոր քարացած դիտում էր դեպի հեռուն:

Պոլի աչքերը ջրակալել էլին:

— Ի՞նչ է, լաց ես լինում, — հարցրեց ընկեր ժանը, թափահարելով Պոլին:

— Չե, եսպես... յերկար նայելուց աչքերս ջրակալեցին, — հուզված պատասխանեց Պոլը:

— Փոքրիկս հերոս է, հերոս, — սիրա տվեց ընկեր ժանը:

— Միակ յերթն այդ էր, ուրիշ վոչ մի կերպ չեյինք կարող կապ ստեղծել, տեղեկութուն իմանալ. ո՞վ ուշադրութուն կդարձնի յերեխային, իսկ նա գործը գլուխ կբերի: Մի տես, ինչպես եմ պարելու, հենց վոր նրա կարմիր գլխարկը յերեվա բլրի քամակից դեպի մեզ գալիս...

Նրանց խոսակցութունը հանկարծ ընդհատեց հրացանի մի ձայն, վորին հաջորդեց յերկրորդը, յերրորդը...

Վո՞ր կողմից ե... Ականջները սրեցին. չլինի Լուիզայի վրա յեն կրակում... Բայց վոչ, ձայնը մտտիկ դիրքերից է դալիս:

— Պոլ, շտապենք դիրքերը, տեսնենք ի՞նչ լուր կա, ինչ կրակոց է. նորից յես կզանք մեկս ու մեկս այստեղ ու կապասենք փոքրիկին, — ասաց ընկեր ժանը, և քաշելով Պոլի թևից, յերկուսով անցան դիրքերի կողմը:

Կռիվն սկսված էր: Վերսայցիները յեռանդուն կրակ էլին բացել կոմունա: սաշտպանող դիրքերի վրա: Կոմունարները նույնպիսի յեռանդով պատասխանում էլին, յերբ ընկեր ժանը և Պոլը մտան դիրքերը և հրամանատարին հայանեցին իրենց ուշանալու պատճառը:

— Վատ չի, յեթե աջողվի, — մտալ դեմքով պատասխանեց հրամանատարը. իսկ այժմ գործի անցեք, կռիվն ինչպես յերևում է վճռական է լինելու...

IV

— Պոլ, Պոլ, հայրիկ... — յերկար ու ձիգ ձայն է տալիս փոքրիկ Լուիզան բլրի գագաթից, բայց վոչ մի մարդ չի պատասխանում:

Լուիզան քրանած է, նրա թշերը վառվում են, իսկ աչքերը կարծես կրակի փոքրիկ կայծեր լինեն շարժվելիս: Նա հողնած է, բայց չի նստում. ընկեր ժանն ասաց, վոր պետք է կանգնած կանչի: Կոշիկի մեջ նամակը, վոր ճանապարհին անհանգստացնում էր նրան վաղելիս ու խանգարում, այժմ ցավեցնում է վորը, բայց չի կարելի հանել, պետք է միմիայն տալ ժակլինայի հայրիկին: Իսկ ինչո՞ւ մարդ չի յերևում...

Ու նորից կանչում է Լուիզան.

— Պոլ, Պոլ, հայրիկ...

Թամին տանում է նրա ձայնը հեռու, հեռու...

— Պոլ, Պոլ, հայրիկ...

— Ո՞վ ես, մոտ յեկ, աղջիկս, — մի բաժը ձայն կանչեց նրան բլրի ներքևում ընկած մի քարի տակից:

Լուիզան մոտ վագեց ու առանց սպասելու, արագ-արագ, հեվալով ասաց.

— Յես Պոլի աղջիկն եմ, ուզում եմ տեսնել ժակլինայի հայրիկին՝ պարոն Եղմոնին:

— Իսկ ո՞վ ե քեզ այստեղ ուղարկել,— հարցրեց մարդը, հետաքրքրությամբ դիտելով փոքրիկ Լուիզային:

— Հայրիկը և ընկեր ժանը, — կտրուկ պատասխանեց Լուիզան:

— Իսկ ինչո՞ւ յեն ուղարկել...

— Ուղարկել են ժակլինայի հայրիկի մոտ:

— Իսկ յեթե քեզ ժակլինայի հայրիկի մոտ չտանեմ, ինձ չեն ասի, ինչ վոր նրան պետք ե ասես:

— Յես նրան վոչինչ չեմ ասելու, վա՛... դուք հո Պալի ֆեն չե՞ք, վորը յերեխաներին չարչարում ե...

Մարդը ժպտաց, գրկեց Լուիզային ու համբուրելով տարավ ժակլինայի հայրիկի մոտ:

— Պարոն Եղմոն... — ուրախացած բացականչեց Լուիզան... — Ահա այստեղ... սպասեցեք... իսկույն...

Ու կոշիկը հանելով նամակը հանձնեց:

— Փոքրիկին ծածկեցեք մի բանով, վոր չմըսի, քրտնած ե, ուտելու բան տվեք, սոված կլինի,— կարդադրեց ժակլինայի հայրիկը: Սպա սկսեց ուշի-ուշով կարդալ նամակը: Կարդաց մի քանի անգամ: Հետո մոտեցավ Լուիզային, շոյեց, փայփայեց, համբուրեց ու կրծքին սեղմելով հարցրեց.

— Իմ փոքրիկ կոմունար, իմ քաջ, իմ հերոս... տեսնել ես ժակլինային...

— Ժակլինային... վո՛չ, չեմ տեսել. մայրիկը չի թողում նրա մոտ գնամ, ասում ե հեռու յե, կարող ե «մի բան պատահի»:

Եղմոնի սիրտն սկսեց ուժգնորեն բաբախել, քիչ եր մնում լաց լինի, բայց իրեն զսպեց, ավելի ամուր սեղմելով իր կրծքին փոքրիկ Լուիզայի գլուխը:

— Տուն վոր գնաս, բալիկս, անպատճառ գնա մեզ մոտ և ժակլինային ասա, վոր ինձ տեսել ես...

— Այո, կասեմ, լավ,— ժպտալով պատասխանեց Լուիզան:

Հավաքվեցին ուրիշներն ել, վորոնց Լուիզան տեսել եր հաճախ հայրիկի հետ, բայց անունները չգիտեր: Սրանք

նույնպես բանվորներ եյին, իսկ այժմ գինվոր են դարձել: Նրանք ամենքը շոյում են, փայփայում Լուիզային, շատերը համբուրում են, ինչ-վոր բաներ նվիրում. դատարկ փամփուշտներ, փոքրիկ արկղներ գնդակներ և այլն:

Ինչպես ուրախ ե Լուիզան...

Իսկ հեռվում լսվում ե հրացանների ու թնդանոթների վորոտը:

— Ինչպես յերևում ե սկսված ե արդեն,— ասաց ժակլինայի հայրիկը.

— զգույշ կացեք, ընկերներ, ամեն մեկն իր դիրքում, մեր տեղը դեռ չգիտեն...

Մարդիկ ցրվեցին զանազան կողմեր: Մնաց մենակ ժակլինայի հայրիկը, վորը գրկելով Լուիզային՝ տարավ հողի տակ շինված մի խրճիթ, վերադառնալով փոքր գետնին, Լուիզային պակեցրեց վրան, ծածկեց սփռոցի նման մի վերմակով ու գլուխը համբուրելով ասաց.

— Մութն ընկնելու վրա յե, բալիկս, իմ քաջ, իմ անվախ, փոքրիկ կոմունար. այս գիշեր մեզ մոտ հանգիստ կը քնես ու առավոտը վաղ կգնաս հայրիկիդ մոտ:

«Ի՛նչ լավն ե ժակլինայի հայրիկը. ինչպես հասկացավ, վոր Լուիզան հոգնած ե, քունը տանում ե, և թե ինչպես ցավում ե նրա աջ վորտը, վոր նամակը հարել եր ճամփին», — մտածեց Լուիզան ու քնեց:

* * *

Լույսը նոր եր բացվել: Արևելքի կողմի ամպերը կարմիր եյին հաղել, իսկ արևը դեռ չեր յերևում, յերբ Լուիզան աչքերը բաց արավ: Ժակլինայի հայրիկը նամակն արդեն պատրաստել եր: Նա ծալած թուղթն իր ձեռով դրեց Լուիզայի վրանամանի մեջ, ինքն իր ձեռով հագցրեց կոշիկը, թելերն ամուր կապեց, ասպա կերակրեց Լուիզային պաքսիմատով ու զրկած տարավ մինչև բլրի գագաթը: Մի անգամ ել յերկար



համբուրեց նրան, ապա ցույց տվեց ճանապարհը և պատվիրեց.

— Նամակը կտաս միայն հայրիկիդ, կամ ընկեր ժանին, հասկացանք, բալիկս, ուրիշ վոչ վոքի. ժակլինային կհաս բուրեքս իմ փոխարեն...

— Լավ, — ասաց Լուիզան ժպտալով, իր խելոք ու ժիր աչքերն արագ արագ թարթելով:

Լուիզան բլբլեց իջնելով սկսեց վազել: Նա մտածում է մայրիկի մասին, վորը յերևի չգիտե, թե վորտեղ է և ինչ է անում «իր փոքրիկը», իսկ հայրիկը տուն գնացած չի վրնի. նա ընկեր ժանի հետ միասին սպասում է քաղաքի ծայրին:

Ինչքան բան է պատմելու Լուիզան...

V

Շուրջն ամեն ինչ խաղաղ է, հանգիստ. վոչ մի մարդ չի յերևում, մեկ-մեկ միայն ինչ-վոր ծտեր են թռչում, ապա իջնում, կաչում գետնին ու նորից թռչում:

«Ախ, յեթե յես ել սրանց նման թեվեր ունենայի ու թռչեյի, — մտածում է Լուիզան, — կթռչեյի, իսկույն նամակը կտայի ընկեր ժանին, հետո կթռչեյի դեպի տուն, կնստեյի պատշգամբի սյուներից կապած լվացքի թոկին և կկանչեյի մայրիկին, ա՛յ, եսպես — ծը՛տ-ծը՛տ, ծը՛տ-ծը՛տ, մամա, յեկել եմ, տես, ինչ փոքրիկ թևեր ունեմ... Այնտեղից ել կըթռչեյի, կնստեյի ժակլինայի տան առաջի փոքրիկ ծառին ու կկանչեյի. — ծը՛տ-ծը՛տ, ժակլինա, ծը՛տ-ծը՛տ, յես տեսել եմ քո հայրիկին, ծը՛տ-ծը՛տ, արի քեզ համբուրեմ պապայիդ տեղ... ժակլինան կուզի թե բռնի, իսկ յես «թը՛ո» կանեմ, կփախչեմ»...

Այսպես մտածմունքների մեջ եր Լուիզան, յերբ մին ել առջևը ցցվեց մի կարճահասակ, կոպիտ դեմքով մարդ: Նա ձեռքին հրացան ուներ, իսկ քիթն այնքան մեծ եր, վոր Լուիզան քիչ մնաց փոթկար:

— Կանգնիր, — գոռաց մեծքթանի մարդը:

Լուիզան շվարած կանգ առավ:

— Անունդ ինչ է, — հարցրեց մեծքթանին:

— Լուիզա:

— Ո՞ւմ աղջիկն ես:

— Պոլի:

— Վերտեղից ես գալիս:

— Ժակլինայի հայրիկի մոտից:

— Իսկ յերեկ վոր այստեղից անցար, ում մոտ էյիր գնում:

— Ժակլինայի հայրիկի մոտ:

— Իսկ ինչո՞ւ էյիր գնում այդ քո ժակլինայի հայրիկի մոտ:

— Հայրիկն ու ընկեր ժանն ուղարկեցին:

«Հը՛մ... հը՛մ» արավ մեծքթանին, բռնելով Լուիզայի ձեռից, կոպտաբար քաշեց, ցավեցնելով ձեռը, և խիստ ձայնով ասաց.

— Գնանք:

— Բայց ո՞ւր գնանք, — բողոքեց Լուիզան, — յես շտապում եմ. մայրիկը...

— Յեկ, ասում եմ քեզ, — գոռաց կոպիտ դեմքով մարդը, քաշեց Լուիզայի թևից և համարյա քարշ տալով տարավ:

Քիչ հետո Լուիզան կանգնեց խողի պես հաստիկ, խըրխուացող ձայնով մի մարդու առաջ: Լուիզային տանող մեծքթանին, աջ ձեռը բարձրացնելով ճակատի մոտ, ասաց.

— Պարոն հրամանատար, սա այն աղջիկն է, վորի մասին ձեզ յերեկ հայտնեցի:

Ապա պատմեց Լուիզայի ասածները, թե ով է, վորտեղից է գալիս, և ովքեր են ուղարկել նրան:


Լուիզան շժամ՝ կանգնել ու չի հասկանում, թե ուր է ընկել և ովքեր են իրեն հարց ու փորձ անողները:

Նրա փոքրիկ ուղեղում հազար ու մի մտքեր են խառնրվում: Լուիզան վախով նայում եր խողի նման մարդուն և մտածում, թե մի գուցե նա հենց ինքը — Գալիֆեն է, վոր յերեխաներին ծեծում է:

— Լավ, գնա, — ասաց խողի նման մարդը Լուիզային բերողին:

Մեծքթանին գնաց:

- Ասա անունդ, հորդ անունը և ազգանունդ, — գլուխը կախ, խրխուալով ասաց խոզի նման մարդը:
- Լուիզա, Պոլի աղջիկը, ազգանունս — Կրամեր:
- Ժակլինայի հոր անունը:
- Պարոն Եղմոն. ազգանունը չգիտեմ:
- Կարող ես ցույց տալ, թե վորտեղ ե այդ Ժակլինայի հայրիկը — պարոն Եղմոնը:
- Վնչ:



- Ի՞նչպես թե վոչ, — գոռաց խոզի նման մարդը և աչքերը չոեց Լուիզայի վրա: — Տեսնո՞ւմ ես այս մտրակը, այնքան կծեծեմ, վոր կաշիդ կպոկվի:
- Դու Գալիֆե՞ն ես... — լացակուժած հարցրեց Լուիզան: Խոզի նման մարդը այս հարցից շշմած, մի բոպե սառած մնաց, ապա կատաղած, գլուխը շարժելով, դարձավ մտառ նստած մի ուրիշ մարդու, վոր լուռ գրում էր Լուիզայի ասածները:
- Տեսնո՞ւմ ես այս լակոտին...
- Մարդը գլուխը շարժեց ու դեմքը թթվացրեց:
- Յես քեզ հարցնում եմ. կարող ես ցույց տալ պարոն Եղմոնի տեղը, — բորբոքված հարց տվեց կրկին խոզի պես մարդը:

- Ասացի վոչ. չեմ կարող... ճանապարհը չգիտեմ... — դողդողջյուն ձայնով պատասխանեց Լուիզան:
- Հապա ի՞նչպես գնացիր նրա մոտ:
- Քաղաքի ծայրից հայրիկը և ընկեր ժանն ինձ ուղարկեցին. ճանապարհը նրանք ցույց տվին. իսկ հիմա, վերադառնալիս, ինձ ճանապարհից բերին այս կողմը...
- Իսկ յեթե քեզ տանենք այնտեղ, վորտեղից քեզ բերին, կարող ես տեղը գտնել...
- Չգիտեմ: Բայց յեթե ինձ տանեք հայրիկիս կամ ընկեր ժաննի մոտ, այնտեղից կարող եմ նորից գնամ, այստեղից չըգիտեմ...
- Իսկ Եղմոնը մե՞նակ ե, թե՞ ուրիշ մարդիկ ել կան հետը:
- Ուրիշ մարդիկ կան. շատ... հարյուր... հազար... շատ... շատ...
- Հրացան ունե՞ն:
- Այն, շատ...
- Պարոն Եղմոնը քեզ վոչինչ չի՞ պատվիրել, վոր հայրիկիդ ասես:
- Վնչ. նա միայն խնդրեց, վոր տուն դառնամ թե չե, գնամ Ժակլինայի մոտ, հայտնեմ, վոր նրա հայրիկին տեսել եմ և համբուրեմ. ուրիշ վոչինչ չի ասել:
- Խոզի նման մարդն ինչ-վոր բան մրթմրթաց մտառ չի ակննջին, ապա բարձր ձայնով կանչեց.
- Ո՞վ կա այդտեղ:
- Ներս մտավ մի զինվոր:
- Կվերցնես հետդ յերկու հոգի ևս: Յերեքով կտանեք այս աղջկանը ելի նույն տեղը, վորտեղից բերել են և կստիպեք, վոր ցույց տա Եղմոնի տեղը. հակառակ դեպքում... մնացածն ինքներդ գիտեք, — ասաց խոզի նման մարդը:
- Լսում եմ, ձերդ մեծություն, — պատասխանեց զինվորը. և Լուիզայի թևից բռնելով դուրս տարավ:
- Չինվորը, մեծքթանին, վոր բռնել էր Լուիզային, և մեկ ել մի ուրիշը, վորի մազերը քիչ ձերմակել էին ու դեմքն էլ բարի թվաց Լուիզային, նրան տարան առաջվա տեղը:

Ժակլինայի հայրիկի նամակը հարում ու ցավեցնում է
Լուիզայի վտոր, բայց նա բոլորովին չի թվացնում, թե աջ վտոր
ցավում է: «Նամակը միայն կարելի յե հայրիկին կամ ընկեր
Ժանին տալ»,—հիշեց Լուիզան պարոն Եդմոնի պատվերը:

Տեղ հասան:

Սկսվեց հարց ու փորձը: Լուիզան վոչինչ չի հիշում, նա
մինչև անգամ չի յե կարող այնտեղից վերադառնալ հայրիկի
մոտ:

Մեծքթանին ուզում է ծեծի «համառ աղջկանը», բայց
ճերմակ մազեր ունեցողը թույլ չի տալիս:



— Պետք է մորթել, —գոռում է մեծքթանին կատաղած:

— Լսիր, փոքրիկս, — դարձավ Լուիզային սպիտակ մազեր
ունեցող բարի դեմքով մարդը, — դու գուր տեղը սուտ մի
խոսի, միևնույն է, քեզ համար վատ կլինի, արի, ցույց տուր
պարոն Եդմոնի տեղը, թե չե Գալիֆեն քեզ չի թողնի վողջ-
առողջ տուն վերադառնա:

— Քեռի, — սրտասնդելով ասում է Լուիզան, — յես ամեն
բան ուղիղ եմ ասում. ճանապարհը չգիտեմ. տարեք ինձ հայ-
րիկի մոտ, կամ ցույց տվեք, թե ինչպես գնամ: Գալիֆեն
շատ վատն է. նա ծեծում է յերեխաներին. դուք ամենքդ
Գալիֆե՞ յեք...

Ձինվորներն ահամա ծիծաղեցին:

— Դե, ասան, ինչպես կարելի յե ձեռք տալ այս անմեղ
յերեխային, — ասաց սպիտակ մազեր ունեցողը կոպիտ դեմքով
ու մեծ քիթ ունեցող մարդուն: — Ձե՞ վոր տանը մենք ել ու-
նենք սրա պես յերեխաներ. կոմունարները վոր կոտորեն...
լավ կլինի... ինչ եք կարծում... յեկեք թողնենք. վոր կողմ
ուզում է, թող գնա. ձեռներս անմեղարյան մեջ չչաղախենք...

— Իսկ ինչ կանի մեզ Գալիֆեն, — հարց է տալիս մեծ-
քթանին:

— Նրան կասենք, թե արել ենք, ինչ վոր պետք եր: Նա
հո բանը-գործը կտրած սրա յետևից չի. միևնույն է, այսոր
վաղը կոմունան ընկնելու յե...

— Ձե, յեկեք շորերը հանենք, — պնդում է մեծքթանին,
— կտանենք իբրև նշան:

Ահա վերցրին Լուիզայի կարմիր գլխարկը. ուզում են կո-
շիկներն ել հանեն:

— Առանց կոշիկի ման գալ չեմ կարող, քեռի, — աղա-
չում է Լուիզան ճերմակ մազեր ունեցողին, — կոշիկներս թո-
ղեք մնան...

Ու մի սարսափելի միտք է տանջում նրան. «Իսկ յեթե
նամակը գտնե՞ն... ով գիտե, ինչ է գրել Ժակլինայի հայ-
րիկը»...

Ճերմակ մազեր ունեցող մարդը Նազիվ համոզեց մեծքթ-
թանուն, վոր կոշիկները չհանեն:

— Այժմ կարող ես գնալ, — ասում է մեծքթանին:

— Քեռի, — խնդրում է Լուիզան, — ցույց տուր քաղաքի
ճանապարհը...

— Չայնդ, շան լակոտ, — գոռում է մեծքթանին: — Քաղաքի
ճանապարհը չե, խողի ձագ, ասա տանենք մորդ ծոցը դնենք,
ելի...

Ճերմակ մազերովը մի կողմն է քաշում Լուիզային ասե-
լով.

— Այսպես... մատիս կողմը նայիր... ուղիղ այսպես
կգնաս, կհասնես մի բլուրի. կծովես քիչ դեպի աջ և ուղիղ
առաջ կերթաս:



Ճերմակ մազեր ունեցող մարդը լաց ե լինում: Նա մինչև անգամ համբուրեց Լուիզայի դանդուղները և ասաց. «Իմ թանգագին ժորժեատա», ու շտապով հեռացավ:

«Ի՜նչ բարի մարդ ե... —

մտածում ե Լուիզան, — հենց դիտե, թե անունս ժորժեատա յե... Ի՜նչ լավն ե, իսկ Գալլիֆե չե, հայրիկին ու ընկեր ժանին կպատմեմ նրա մասին», — վճռում ե իր մեջ Լուիզան...

* * *

Արևն արդեն մայր մտնելու վրա յեր, յերը Լուիզան հասավ բլրին: Հիշեց, վոր դա առաջին բլուրն ե, ուրախացավ. պետք ե ծովել դեպի աջ: Ծովեց ու վազում ե գլխաբաց, գանգուրները քամուն տալով: Ահա, քիչ ե մնացել, շուտով կհասնի, մտածում ե Լուիզան և քայլերն արագացնում:

Հանկարծ լսեց թնդանոթների վորոտ: Լուիզային թվաց, թե ամպը պայթեց: Կարող ե անձրև գալ: Վազում ե: Բայց թնդանոթների ձայներին հետևեցին հրացանների կրակոցները Լուիզայի առջևի ու յետևի կողմից:

Վազում ե Լուիզան շնչասպառ: Հևում ե: Նրա փոքրիկ սիրտը թփրտում ե ծախ թևերի պես, կարծես ուզում ե դուրս պրծնել բերանից:


Հրացաններն ավելի ուժեղ են վորոտում, իսկ Լուիզայի գլխի վրայով ինչ վոր բաներ են վզգում, կարծես ձանձեր լինեն. յերբեմն ել սուլում են, փողոցային յերեխաների նման սուր սուլոցով:

Մութն ընկնում ե: Լուիզան քիչ վախեցավ, բայց վազում ե անընդհատ: Հեռվում կարծես մի սպիտակ տուն ե տեսնում. ա՛յ, ենտեղ են հայրիկն ու ընկեր ժանը, մտածում ե նա. իրեն են սպասում: Կանչում ե.

— Հայրիկ... ընկեր ժան... գալիս եմ, գալիս եմ...

Նրան թվում ե, թե հրացանները դադարեցին առջևի կողմից կրակելուց, բայց յետևի կողմից ավելի ուժեղ ե լսվում վորոտը:

— Գալիս եմ, հայրիկ, դա...ա...
Ինչ վոր մեկը կարծես բուռնցքով ամուր խփեց նրա մեջքին: Լուիզան ընկավ, բայց նորից վորտի յելավ. վազում ե:
— Հայրիկ... ընկեր ժան... գալիս եմ, գալիս...
Բայց վորտերը թուլանում են, ձայնն ել զիլ չի հնչում...
Լուիզան ել առաջվա պես չի կարողանում վազի...
Նրա գլուխը ծանրացել ե, քունը տանում ե...
Լուիզան քիչ ել առաջ շարժվեց ու ընկավ:
Նրան թվաց, թե քայլերի ձայն լսեց: Ճիշտ ե. մեկը մոտեցավ, կռացավ ու ձեռ տվեց մազերին:
— Լուիզա, — սարսափած ձայն տվեց մոտեցողը:
Լուիզան ճանաչեց ձայնը: Ընկեր ժանն ե:
Լուիզան հազիվ աչքերը բաց արեց.



— Ընկեր ժան... ջուռն տանում ե... նամակն այստեղ ե... նամակն այստեղ ե... (Ուզում ե բարձրացնի աջ վորտը, չի կարողանում): Ժա՛նիսային կասեք, վոր տեսա նրա հայ... ըի... ըիկ...

Լուիզան չկարողացավ խոսքը վերջացնի:



242

Յ Ա Ն Կ

1. Ո՞վ ե հոկտեմբերը	3
2. Հայրիկի համար	37
3. Անդրո	45
4. Կարմիր թաշկենակ	75
5. Լուիզա	81



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆՆԻ ՀԵՏԵՎՅԵԼ ՄԸՆԿԵԿՆ ԳՐՔԵՐԸ—

1. Մինիստրներ (պիես. սպառ.)
2. Ցարն ու մուրճը (հեքյաթ. սպառ.)
3. Շահ-զադեյի արասին (Լեզենդ. սպառ.)
4. Ճուտիկներ (սպառ.)
5. Կոմսոմոլ (պիես. սպառ.)
6. Փոքրիկ Կոմունարը (սպառ.)
7. Վոսիկ թելեր (սակավաթիվ)
8. Փոքրիկ հերոսներ

ԳԻՆՆ 2 Ռ.



Յ. ԱԿՈՅԵՆԻԱՆԵ

Սօցիալական հերոսներ

(Սովետական լեռնային)

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Маленькие герои

(На армян. яз.)

Госиздат Грузии
Тифлис—1934 г.

911.12.2



Հ. Մանուկյան
Հայաստանի Լեզուների
Գիտությունների
Ազգային Գիտությունների
Ազգային Գիտությունների
Ազգային Գիտությունների

ՀՀ Ազգային գրադարան

NL0395989

8204